# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

3 (117). 2023

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

## REGIONAL SECURITY



# ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝
# ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ
# ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի
հանդիպումը Վրաստանի Վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիի հետ

Թբիլիսի, 2023 թ. հոկտեմբերի 26



Իրան կատարած այցի շրջանակներում
ՀՀ Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի
հանդիպումը Իրանի Իսլամական Հանրապետության
Նախագահ Էբրահիմ Ռայիսիի հետ
(ՀՀ պատվիրակության կազմում. ձախից՝ ԻԻՀ-ում ՀՀ Արտակարգ
և Լիազոր դեսպան Արսեն Ավագյան,
ՀՀ փոխարտգործնախարար Վահան Կոստանյան,
ՀՀ ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյան,
ՀՀ Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյան)

Թեհրան, 2023 թ. հոկտեմբերի 23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

3 (117). 2023

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Տավարածյան Գ. Վ.**
(նախագահ)
**Չիլինգարյան Դ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
**Այվազյան Լ. Գ.**
**Ասատրյան Ջ. Դ.**
(գլխ. խմբագրի տեղակալ)
**Ներսեսյան Վ. Վ.**
**Շահնազարյան Թ. Ն.**
**Շիրինյան Մ. Ա.**
**Սարգսյան Ա. Գ.**
**Սիմոնյան Ս. Վ.**
**Ստեփանյան Հ. Լ.**
**Քոչարյան Տ. Տ.**
**Քոչունց Կ. Գ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

*Տ. Տ. Քոչարյան,* Կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանային կազմակերպությունների առանձնահատկությունները. քաղաքագիտական վերլուծություն ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի օրինակով . . . . . . . . . . 9

*Ն. Ա. Մինասյան,* «Մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգը Թուրքիա–Ադրբեջան հարաբերություններում . . . . . . . . . . 23

*Ռ. Գ. Ավետիսյան,* Արտատարածաշրջանային «ուժային կենտրոնների» քաղաքականությունը Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի կերպափոխման պայմաններում . . . . 38

*Ա. Գ. Դավթյան,* Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական զարգացման առանձնահատկություններն ու միտումները . . . . . 54

*Վ. Ա. Շերենց,* Ռազմավարական ինքնուրույնության պրոբլեմը Թուրքիայի ռազմավարական մշակույթի հարացույցում . . . . . . . . . . 67

*Վ. Ս. Պետրոսյան,* «Ծայրամասային դոկտրինն» ու Մերձավոր Արևելքի «Հատվածայնացման տեսությունը» Իսրայելի ռազմավարական ընկալումների համատեքստում . . . . . . . . . . 82

### ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

*Դ. Վ. Սերոբյան,* Ռազմական գործողությունների վարման ժամանակ սպառազինության և ռազմական տեխնիկայի վերականգնման ուղղությամբ արդյունաբերական ձեռնարկությունների հնարավորությունների օգտագործումը . . . . . . . . . . 102

**ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**
*Գ. Ռ. Վարդանյան, Ս. Գ. Գալստյան, Լ. Ս. Գալստյան, Ա. Է. Թադևոսյան,* Միկրոալիքային ճառագայթման հետ շփում ունեցող զինծառայողների կենսաբանական տարիքի և ծերացման տեմպի հարցի շուրջ ....................117
**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**
*Դ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ,* Համարի բառարան ..........................128

**ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Ա. Գ. Ավագյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Վ. Ս. Կարապետյան,* հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Ա. Ա. Հախումյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
*Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Ա. Հ. Մելիքյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Հ. Հ. Մեսրոպյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Վ. Գ. Սահակյան,* ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,
*Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
*Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Վ. Վ. Սելիվանով* (ՌԴ), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան,* քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ ՌԳԱ իսկական անդամ, *Տ. Տ. Քոչարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

*Գ. Վ. Տավարածյան,* գեներալ-մայոր (նախագահ), *Տ. Տ. Քոչարյան,* գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (նախագահի տեղակալ),
*Ա. Ս. Բաղդանյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու,
*Ա. Վ. Հայրապետյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու,
*Հ. Հ. Հովհաննիսյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
*Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
*Մ. Ա. Պետրոսյան,* քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ,
*Ս. Ա. Սուջյան,* աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գնդապետ

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**№ 3** (117)**. 2023**
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*Таварацян Г. В.* (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Айвазян Л. Г.*, *Асатрян З. Д.* (зам. гл. редактора), *Кочарян Т. Т.*, *Кочунц К. Г.*, *Нерсесян В. В.*, *Саргсян А. Г.*, *Симонян С. В.*, *Степанян Г. Л.*, *Шахназарян Т. Н.*, *Ширинян М. А.*

# СОДЕРЖАНИЕ

## РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

*Т. Т. Кочарян.* Особенности региональных организаций коллективной безопасности: политологический анализ на примере НАТО и ОДКБ . . . . . 9 (20)*

*Н. А. Минасян.* Концепция «одна нация –два государства» в турецко-азербайджанских отношениях . . . . . 23 (36)

*Р. Г. Аветисян.* Политика внерегиональных «центров силы» в процессе трансформации безопасностной среды на Южном Кавказе . . . . . 38 (51)

*А. Г. Давтян.* Особенности и тенденции экономического развития южнокавказских государств . . . . . 54 (65)

*В. А. Шеренц.* Проблема стратегической самостоятельности в парадигме стратегической культуры Турции . . . . . 67 (80)

*В. С. Петросян.* «Периферийная доктрина» и «Теория фрагментации» Ближнего Востока в контексте стратегических восприятий Израиля . . . . . 82 (100)

## ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА

*Д. В. Серобян.* Использование возможностей предприятий промышленности по восстановлению вооружения и военной техники в ходе ведения военных действий . . . . . 102 (108)

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

*Г. Р. Варданян, С. Г. Галстян, Л. С. Галстян, А. Э. Тадевосян.* К вопросу биологического возраста и темпа старения военнослужащих, контактирующих с микроволновым излучением . . . 117 (125)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

*Д. С. Чилингарян и др.* Словарь номера .................... 128 (129)

**НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*А. Г. Авагян*, доктор исторических наук, профессор;
*А. А. Ахумян*, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор; *С. Г. Галстян*, доктор медицинских наук, профессор;
*В. С. Карапетян*, доктор психологических наук, профессор; *Г. С. Котанджян*, доктор политических наук (РФ), профессор, действительный член АВН РФ;
*Т. Т. Кочарян*, доктор политических наук, профессор; *М. М. Маргарян*, доктор политических наук, профессор; *М. В. Маркосян*, доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян*, член-корреспондент НАН РА; *А. О. Меликян*, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор;
*А. О. Месропян*, доктор филологических наук, профессор;
*Э. Г. Минасян*, доктор исторических наук, профессор; *В. Г. Саакян*, кандидат физико-математических наук; *Р. А. Сафрастян*, академик НАН РА;
*О. Я. Саядян*, доктор географических наук, профессор;
*В. В. Селиванов (РФ)*, доктор технических наук, профессор;
*Ю. М. Суварян, академик НАН РА*

**ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:**

*Г. В. Таварацян*, генерал-майор (председатель); *Т. Т. Кочарян*, полковник, доктор политических наук, профессор (заместитель председателя);
*А. В. Айрапетян*, полковник, кандидат военных наук; *А. С. Багданян*, полковник, кандидат военных наук; *Д. М. Манасян*, кандидат исторических наук, доцент;
*Г. О. Оганесян*, полковник, кандидат военных наук, доцент;
*М. А. Петросян*, кандидат политических наук, доцент;
*С. А. Суджян*, кандидат географических наук, доцент, полковник запаса

**«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)**

DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

**№ 3** (117)**. 2023**

Is published 4 times a year

**EDITORIAL BOARD**

*Tavaratsyan G. V.* (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G., Kocharyan T. T., Kochunts K. G., Nersesyan V. V., Sargsyan A. G., Shahnazaryan T. N., Shirinyan M. A., Simonyan S. V., Stepanyan H. L.*

# CONTENTS

## REGIONAL SECURITY

*T. T. Kocharyan.* Peculiarities of regional collective security organizations: politological case study of NATO and CSTO ........ 9 (21)*

*N. A. Minasyan.* The concept of "one nation, two states" in the Turkish-Azerbaijani relations .................................. 23 (37)

*R. G. Avetisyan.* The policy of extra-regional "power centers" in the process of transformation of the security environment in the South Caucasus .............................................. 38 (52)

*A. G. Davtyan.* The peculiarities and tendencies of economic development of the South Caucasian states ...................... 54 (66)

*V. A. Sherents.* The problem of strategic independence in the paradigm of Turkey's strategic culture .......................... 67 (81)

*V. S. Petrosyan.* The "Periphery doctrine" and "Theory of fragmentation" of the Middle East within the context of Israel's strategic perceptions ........................................... 82 (101)

## ARMAMENTS AND MILITARY EQUIPMENT

*D. V. Serobyan.* Using the capabilities of industrial enterprises to restore armaments and military equipment in the course of conducting military operations ................................ 102 (116)

## MILITARY MEDICINE

*G. R. Vardanyan, S. G. Galstyan, L. S. Galstyan, A. E. Tadevosyan.* On the issue of biological age and the aging rate of the military personnel exposed to microwave radiation ................ 117 (126)

---

* Numbers in brackets mean the page of the text in English.

**MILITARY TERMINOLOGY**

*D. S. Chilingaryan and others.* Volume Dictionary . . . . . . . . . . . 128 (130)

**ACADEMIC-ADVISORY COUNCIL:**

*A. G. Avagyan*, Doctor of History, Professor; *S. G. Galstyan*, Doctor of Medical Sciences, Professor; *A. A. Hakhumyan*, Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor; *V. S. Karapetyan*, Doctor of Psychology, Professor, *T. T. Kocharyan*, Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian*, Doctor of Political Sciences (RF), Professor, Full Member, Academy of Military Science, RF; *M. M. Margaryan*, Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan*, Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan*, Corresponding Member, NAS, RA; *A. H. Melikyan*, Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor; *H. H. Mesropyan*, Doctor of Philology, Professor, *E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor; *R. A. Safrastyan*, Full Member, NAS, RA; *V. G. Sahakyan*, PhD in Physical and Mathematical Sciences; *H. Y. Sayadyan*, Doctor of Geography, Professor; *V. V. Selivanov (RF)*, Doctor of Technical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan*, Full Member, NAS, RA

**DEFENSE-ACADEMIC COUNCIL:**

*G. V. Tavaratsyan*, MG (Chairman); *T. T. Kocharyan*, Colonel, Doctor of Political Sciences, Professor (Deputy Chairman); *A. S. Baghdanyan*, Colonel, PhD in Military Sciences; *A. V. Hayrapetyan*, Colonel, PhD in Military Sciences; *H. H. Hovhannisyan*, Colonel, PhD in Military Sciences, Associate Professor; *D. M. Manasyan*, PhD in History, Associate Professor; *M. A. Petrosyan*, PhD in Political Sciences, Associate Professor; *S. A. Sujyan*, PhD in Geography, Associate Professor, Colonel (Ret.)

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

# РЕГИОНАЛЬНАЯ
# БЕЗОПАСНОСТЬ

# REGIONAL SECURITY

# ԿՈԼԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆԱՏՕ-Ի ԵՎ ՀԱՊԿ-Ի ՕՐԻՆԱԿՈՎ*

*Տ. Տ. ՔՈՉԱՐՅԱՆ, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ – ԱՈՀԻ-ի պետ*



Ամենաընդհանուր բնորոշմամբ՝ կոլեկտիվ անվտանգության ճնաչափով միավորվում են այն պետությունները, որոնք բացառում են իրենց միջև պատերազմի հնարավորությունը և հետապնդում են ընդհանուր անվտանգության նպատակներ՝ մեկ դաշնակցի վրա հարձակումը համարելով հարձակում բոլոր դաշնակիցների վրա: Դրանք կոլեկտիվ դաշինքային մոդելի առանցքային սկզբունքներից են:

Կոլեկտիվ անվտանգությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ անվտանգությունը բխում է բոլոր պետությունների շահերից, և անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին դիմակայելու համար հաճախ պահանջվում է միասնական միջազգային արձագանք: Պետությունները համաձայնում են դիմակայել անվտանգության սպառնալիքներին և կիսել խաղաղության պահպանման կամ դրա պարտադրանքի ծախսերը[1]: Կոլեկտիվ, կամ համատեղ, պաշտպանությունը մի պայմանավորվածություն է, որը սովորաբար ձևակերպվում է պետությունների միջև համապատասխան պայմանագրով, որով անդամ պետությունները պարտավորվում են մասնակցել անդամ պետության պաշտպանությանը, եթե այն ենթարկվում է կազմակերպությունում չներգրավված մեկ այլ պետության ագրեսիային[2]:

ՄԱԿ-ի Կանոնադրությունը տարբերում է կոլեկտիվ անվտանգության ապահովման մի քանի հիմնական մեխանիզմներ՝ վեճերի խաղաղ կարգա-

---

* Հոդվածը նախնական տարբերակով ստացվել է 10.10.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 07.11.2023:

[1] Տես *Thomas G. Weiss, David P. Forsythe, Roger A. Coate, Kelly-Kate Pease.* The United Nations and Changing World Politics. New York, 2017, P. 18:

[2] Տես *Inis L. Claude, Jr.* Collective Security as an Approach to Peace. “Classic Readings and Contemporary Debates in International Relations”. Ed. by Donald M. Goldstein, Phil Williams, & Jay M. Shafritz. Belmont, 2006, PP. 289–302:

վորում (գլուխ VI), գործողություններ խաղաղության վտանգման, խաղաղության խախտման և ագրեսիայի առնչությամբ (գլուխ VII) և տարածաշրջանային համաձայնություններ (գլուխ VIII): Բացի այդ, Կանոնադրության 51-րդ հոդվածը սահմանում է. «Սույն կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ: Անդամների կողմից իրենց ինքնապաշտպանության իրավունքն իրականացնելու միջոցառումների մասին անմիջապես հաղորդվում են Անվտանգության խորհրդին և, սույն կանոնադրության համաձայն, ոչ մի կերպ չեն ազդում Անվտանգության խորհրդի հեղինակության ու լիազորության վրա՝ ցանկացած ժամանակ ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նա անհրաժեշտ կհամարի միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար»[3]:

«Բրիտանիկա» հանրագիտարանը «կոլեկտիվ անվտանգություն» հասկացությունը սահմանում է այսպես. «մի համակարգ, որով պետությունները փորձել են կանխել կամ դադարեցնել պատերազմները: Կոլեկտիվ անվտանգության վերաբերյալ պայմանավորվածության համաձայն՝ որևէ պետության դեմ ագրեսորը համարվում է ագրեսոր մյուս բոլոր պետությունների դեմ, որոնք միասին գործում են ագրեսորին հետ մղելու համար»[4]: Մեր հայրենական ռազմաքաղաքական մշակույթում ընդունված է կոլեկտիվ անվտանգության հետևյալ սահմանումը. «Համաշխարհային կամ տարածաշրջանային մասշտաբով կամ որևէ միջպետական կազմակերպության շրջանակներում խաղաղության և անվտանգության պահպանման համակարգ, որն ապահովվում է մասնակից պետությունների համատեղ համաձայնեցված ջանքերով»[5]:

Կոլեկտիվ անվտանգության ապահովման ամենավաղ ձևերից մեկը խմբային համակարգն է (միություններ, դաշինքներ, դաշնադրություններ), որը հիմնված է ուժերի հավասարակշռության գաղափարի վրա: Միությունները պետությունների օրինական, պաշտպանական կազմակերպություններ են, որոնք ստեղծվել են ազգային ներուժի համակարգված օգտագործման նպատակով՝ ցանկացած սպառնալիքներից իրենց անդամների անվտանգությունը կամ պաշտպանությունն ապահովելու համար: Անվտանգության հավաքական մոդելների բնորոշ տարրերն են.

---

[3] Տես «Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրություն»: Ե., 2005, էջ 30, հոդ. 51:

[4] Տես “Collective security”. “Britannica” (https://www.britannica.com/topic/collective-security):

[5] Տես *Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան,* Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 74:

- սահմանափակ թվով պետությունների միջև ռազմաքաղաքական պայմանագրերի համակարգը,
- կողմնորոշվածությունը դեպի մի խումբ պետությունների շահերի պաշտպանությունը հիմնականում ռազմական միջոցներով,
- անվտանգության հարցերում գործողությունների և՛ համադասվածությունը, և՛ համակարգվածությունը[6]:

Միությունները կազմվում են «շահերի համընկնման» հիմքով և միջպետական համագործակցության հատուկ դրսևորում են: Եվ այս համատեքստում ռազմաքաղաքական համագործակցության հիմնական նպատակը այնպիսի «կոլեկտիվ բարիքի արտադրությունն» է, ինչպիսին անվտանգությունն է[7]:

Ուժերի հարաբերակցության տեսությունը ներկայումս առավել ճշգրիտ պատասխանն է այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ի՛նչ պայմաններում են ստեղծվում դաշինքները. ի՛նչն է որոշում, թե ով ում հետ է դաշնակցում. ինչպե՛ս է ձևավորվում դաշնակիցների միջև ծախսերի և օգուտների բաշխման համակարգը: Սակայն գործնականում ուժերի հարաբերակցության տրամաբանությունը այս հարցերին միայն մասամբ է պատասխանում, քանի որ այստեղ էական դեր են խաղում նաև մի շարք գործոններ, ինչպիսիք են միջազգային ասպարեզում գործելու ավանդական ոճը, ազգերի միջև պատմական համակրանքն ու հակակրանքը, հակադիր կողմնորոշումներ ունեցող պետությունների միջև երկընտրանքը, տվյալ դաշինքում հակակրանքի «արժանացած» պետության առկայությունը և այլն:

Ռազմավարական մշակույթի առումով պետությունները կարելի է բաժանել 2 խմբի՝ պետությունների, որոնք գերադասում են իրենց ազգային նպատակներին հասնել կոլեկտիվ համակարգերում (օրինակ՝ Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան), և պետությունների, որոնք նախընտրում են միայնակ գործելու եղանակը՝ հենվելով զուտ իրենց հնարավորությունների վրա (Իսրայել, Չինաստան):

Թեև կոլեկտիվ անվտանգության գաղափարը հարում է Կանտի «հավերժական խաղաղությանը»[8], սակայն համընդհանուր մասշտաբներով իր գագաթնակետին հասավ միայն 20-րդ դարում[*]: Կոլեկտիվ անվտանգության առաջին ժամանակակից կազմակերպություն ստեղծելու փորձի մարմնա-

---

[6] Տես *G. H. Snyder.* Alliance Theory: A Neorealist First Cut. “Journal of International Affairs”, 1990, Vol. 44, N 1:

[7] Տես, օրինակ, *С. А. Медведев, И. А. Томашов.* Безопасность как общественное благо: повестка дня для ЕС и «Группы восьми». «Вестник международных организаций» 2009. № 2 (https://iorj.hse.ru/data/2011/01/211208902389/Security.pdf):

[8] Տես *Immanuel Kant.* To Perpetual Peace: A Philosophical Sketch. Indianapolis, 2003:

[*] Եղել են, օրինակ, համահունական դաշինքներ (Պելոպոնեսյան, ծովային և այլն), սակայն, կարծում ենք, որ դրանք դժվար է համարել անվտանգության համակարգեր, քանի որ ունեցել են փոփոխական կազմ և պայմանավորված են եղել իրավիճակային շահերով կամ պարզապես ուժեղ պետության ուժային պարտադրմամբ:

վորումն է Ազգերի լիգան, որը կազմավորվել էր առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այն ստեղծվել է 1919 թվականին Փարիզի հաշտության խորհրդաժողովում և ինքնիշխան պետությունների առաջին կազմակերպությունն էր, որը նախատեսված էր համընդհանուր վեճերը կարգավորելու և պատերազմները կանխելու համար[9]:

Ազգերի լիգայի պայմանագրի 10-րդ հոդվածը նախատեսում էր կոլեկտիվ գործողություններ անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները չեզոքացնելու համար[10]: Սակայն Լիգան ոչ միայն չկարողացավ զսպել Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի ագրեսիան, այլև ընդհանրապես չեղավ կենսունակ, իսկ կոլեկտիվ անվտանգության հայեցակարգը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստվերվեց կոլեկտիվ պաշտպանության գաղափարով, որի առարկայական մարմնավորման առավել ցայտուն օրինակներն են Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ-ն) և Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը (ՎՊԿ-ն): Այսպիսով՝ կոլեկտիվ պաշտպանությունը, 20-րդ դարի սկզբում ծնավորվելով որպես զուտ ռազմամարտավարական միջոցառումների համախումբ, հետագայում ապրեց տեսական ու գործնական զարգացում, և նրա կազմակերպությունները բավական արագ վերածվեցին համախոհ պետությունների տարածաշրջանային պաշտպանական – անվտանգային կազմակերպությունների:

Որպես այս գաղափարի տեսական զարգացման օրինակ նշենք անվտանգության անբաժանելիության գաղափարի ծագումը: Այսպես. 1975 թ. Հելսինկյան եզրափակիչ ակտում ամրագրված էր հավասար և անբաժանելի անվտանգության սկզբունքը: Դրա իմաստն այն էր, որ եվրաատլանտյան պետությունները պատրաստակամ էին պահպանելու ստատուս-քվոն և խաղաղությունը: Ըստ այդմ անբաժանելի անվտանգության սկզբունքն արտահայտում էր, որ «համագործակցությունը շահավետ է բոլոր մասնակից պետությունների համար, քանի որ մասնակից պետությունում գոյություն ունեցող և (կամ) ամբողջ մասնակից պետության անվտանգային անապահովվածությունը կարող է ազդել բոլորի բարեկեցության վրա»[11]: Գործնականում դա նշանակում է, որ «պետությունները չպիտի ամրապնդեն իրենց անվտանգությունը այլ պետությունների հաշվին»: Այս թեզը դարձավ կոլեկտիվ անվտանգության հիմնարար սկզբունքներից մեկը:

Հարկ է նշել, որ կոլեկտիվ անվտանգության (պաշտպանության) հայեցակարգի զարգացումը թելադրված էր համաշխարհային իրողությունների զարգացմամբ: Յուրաքանչյուր պետություն արդեն ի վիճակի չէր զուտ իր

[9] Տես “Comparison with the League of Nations”. “Nations Encyclopedia” (http://www.nationsencyclopedia.com/United-Nations/Comparison-with-the-League-of-Nations.html):

[10] Տես “The Covenant of the League of Nations”. “League of Nations”, 28 April 1919 (https://www.refworld.org/docid/3dd8b9854.html):

[11] Տես *Marc Perrin de Brichambaut*. The Indivisibility of Euro-Atlantic Security. Speech at the 18th Partnership for Peace Research Seminar. Vienna Diplomatic Academy, 4 February 2010, P. 1 (https://www.osce.org/sg/41452):

ներուժի հաշվին հաղթահարելու ծագող բազմաթիվ ու տարաբնույթ սպառնալիքները, ուստի փորձում էր այդ նպատակով երկբևեռ աշխարհում գտնել վստահելի դաշնակիցներ:

Անվտանգության նման մոդելի կարևորությունը ավելի ու ավելի է մեծանում արդի ժամանակներում, երբ երկրները դժվարանում են վստահել միմյանց: Այդպես էր «Սառը պատերազմի» սկզբում, երբ դրվեց եվրոպական անվտանգության ժամանակակից ճարտարապետության հիմքը[12]: Սակայն այդ ժամանակ Եվրոպան բաժանված էր երկու՝ կապիտալիստական և սոցիալիստական, հասարակակարգային ճամբարների, և մի ճամբարի միավորումը կոլեկտիվ անվտանգության կազմակերպության ձևով[13] (ՆԱՏՕ, 1949 թ.) հսկայական առավելություն էր տալիս նրան մյուսի նկատմամբ: Ըստ այդմ 1955 թ. ստեղծվեց Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը: ԽՍՀՄ փլուզումից հետո ձեռնարկվեցին նախկին խորհրդային հանրապետությունները միավորելու փորձեր, որոնցից առավել արգասաբերը եղավ 2002 թ. Ռուսաստանը և նրա դաշնակիցներին միավորած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ)[14], որն իրականում արտացոլում է կոլեկտիվ պաշտպանության գաղափարը:

Այս երկու կազմակերպությունները, լինելով տարածաշրջանային անվտանգություն ապահովող կառույցներ, ըստ էության, հետապնդում են հիմնականում նման նպատակներ՝ ապահովել իրենց անդամների ռազմաքաղաքական ու ռազմական անվտանգությունը: Իհարկե, իրենց ընդգրկմամբ դրանք միանգամայն տարբեր են, քանի որ ՆԱՏՕ-ին անդամակցում են գրեթե բոլոր եվրոպական երկրները, ԱՄՆ-ը և Կանադան, մինչդեռ ՀԱՊԿ-ում մասնակցում են հետխորհրդային տարածությունում եղած ոչ բոլոր պետությունները, սակայն դրանք բավական բևեռացված կառույցներ են և փաստացի որոշակիորեն նաև հակամարտում են միմյանց հետ:

Ե՛վ ՆԱՏՕ-ն, և՛ ՀԱՊԿ-ը գործում են ՄԱԿ-ի Կանոնադրության սկզբունքներին համապատասխան, իրենց տարածքներում ունեն դաշնակցային զորակայաններ, պայքարում են ահաբեկչության, թմրանյութերի ապօրինի շրջանառության ու մարդկանցով առևտրի դեմ և ռազմաքաղաքական դաշինքի մեկ անդամի վրա զինված հարձակումը դիտում են որպես ագրեսիա բոլոր անդամ պետությունների դեմ:

Այսպիսի նմանությունները հիմք են տալիս ՀԱՊԿ-ը համարելու ՆԱՏՕ-ին հակակշիռ ստեղծված կազմակերպություն[15], չնայած այն հանգամանքին, որ

---

[12] Տես *Stefan Popov.* NATO Expansion: From Collective Defence to Collective Security. “Perspectives”, 1999, N 13:

[13] Տես “Справочник NATO”. NATO. Brussels, 2001, с. 523:

[14] Տես «От договора к организации: История создания, основы деятельности, организационная структура». Организация договора о коллективной безопасности (https://odkb-csto.org/25years):

[15] Տես, օրինակ, «ОДКБ будет адекватно реагировать на действия НАТО». ОДКБ, 23.09.2014 (https://odkb-csto.org/news/smi/odkb_budet_adekvatno_reagirovat_na_deystviya_nato/#loaded); *Andrey Vadimovich Novikov.* Military and political

դեռ 2009 թվականի փետրվարին ՀԱՊԿ-ի Գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան հերքել էր դա[16]: Հարկ է նաև հիշել, որ ժամանակին ՀԱՊԿ-ի ղեկավարությունը համագործակցելու առաջարկությամբ դիմել էր ՆԱՏՕ-ին, սակայն համաձայնություն չէր ստացել[17]: Ի տարբերություն Հյուսիսատլանտյան պայմանագրի դաշինքից՝ ՀԱՊԿ-ը ձեռնարկել է ընդամենը մեկ խաղաղարարական օպերացիա, որը 2022 թ. իրագործվել է այդ կազմակերպության պատասխանատվության գոտում՝ Ղազախստանում, և որին մասնակցել է նաև Հայաստանը[18]:

Անվտանգության ապահովման համատեքստում կարևոր են նաև ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի ռազմավարական հայեցակարգերի գնահատումն ու առաղրումը:

ՆԱՏՕ-ի ստեղծումից ի վեր եղել են երկու հստակ պատմական ժամանակաշրջաններ, որոնց ընթացքում զարգացել է ՆԱՏՕ-ի ռազմավարական մտածողությունը՝ «Սառը պատերազմի» տարիները և հետսառըպատերազմյան շրջանը: 2022 թվականի ռազմավարական հայեցակարգով ՆԱՏՕ-ն հարմարվում է ևս մեկ ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական իրողություններին, որոնք բնութագրվում են Ռուսաստանի և Չինաստանի հետ նորացված աշխարհառազմավարական մրցակցությամբ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի արդեն ավարտական փուլում Արևմուտքի և ԽՍՀՄ-ի միջև դաշնակցային հարաբերությունները շատ արագ իրենց տեղը զիջեցին աշխարհում իրենց ազդեցության գոտիների ընդլայնման համար ծավալված բացահայտ և հաճախ խիստ կոշտ մրցակցությանը: Այս առումով հատկանշական էր պայքարը Թուրքիայի և Հունաստանի վրա իրենց ազդեցությունը տարածելու համար: Այս պայքարում ծնվեցին «Տրումենի դոկտրինը», իսկ այնուհետև՝ արևմտաեվրոպական պետությունները ԱՄՆ-ի հովանու ներքո համախմբելու ծրագիրը՝ «Մարշալի պլանը»[19]: 1949 թվականից մինչև 1991 թվականը ՆԱՏՕ-ի ռազմավարությունը

---

potential of the CSTO as a counterbalance to NATO policy. “Austrian Journal of Humanities and Social Sciences”, 2016, N 3–4:

[16] Տես «Вооружение для защиты. Странам, входящим в ОДКБ, помогут отразить агрессию». ОДКБ, 16.02.2009 (https://odkb-csto.org/news/smi/vooruzhenie_dlya_zashchity_stranam_vkhodyashchim_v_odkb_ pomogut_otrazit_agressiyu/#loaded):

[17] Տես «НАТО игнорирует все попытки ОДКБ начать диалог по общим вызовам безопасности, заявил Николай Бордюжа, подводя итоги визита в Брюссель». ОДКБ, 28.02.2013 (https://odkb-csto.org/news/smi/nato_ignoriruet_vse_popytki _odkb_nachat _dialo g_po_obshchim_vyzovam_bezopasnosti_zayavil_nikolay_bord/#loaded):

[18] Տես «Миротворцы ОДКБ помогают правоохранителям Казахстана поддерживать порядок и охранять стратегические объекты». «Первый канал. Новости», 7 января 2022 (https://www.1tv.ru/news/2022-01-07/419095-mirotvortsy_odkb_pomo gayut_ pravoohranitelyam_kazahstana_podderzhivat_poryadok_i_ohranyat_strategiche skie_ob_ekty):

[19] Տես “The Marshall Plan: Definition, Date & Cold War”, 1 November 2022 (https://www.history.com/topics/world-war-ii/marshall-plan-1):

հիմնականում բնութագրվում էր Խորհրդային Միության ու նրա դաշնակիցների հետ ռազմաքաղաքական դիմակայության պահանջներով: Ընդսմին «Սառը պատերազմի» շրջանի վերջին երկու տասնամյակների ընթացքում մեծ ուշադրություն էր ցուցաբերվում երկխոսության և լարվածության նվազեցման հարցերին[20]:

1991 թվականին ՆԱՏՕ-ն որդեգրեց ավելի լայն մոտեցում, ըստ որի՝ զսպման և պաշտպանության հիմնական հասկացությունները լրացվում էին համագործակցության և անվտանգության հասկացություններով: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո ՆԱՏՕ-ն սկսեց ավելի մեծ ուշադրություն հատկացնել ահաբեկչության դեմ պայքարի, զանգվածային ոչնչացման զենքի տարածման, հիբրիդային պատերազմի եղանակների և զարգացող տեխնոլոգիաների հետ կապված ռիսկերի հարցերին: Դաշինքը նաև 20 տարի զորքեր է հատկացրել Եվրաատլանտյան տարածությունից դուրս, օրինակ՝ Աֆղանստանում գտնվող ահաբեկչական կենտրոնների ոչնչացման կամ, առնվազն դրանց գործողությունների վերահսկման ու կանխման համար: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում մշակվել ու թողարկվել են երեք ոչ դասակարգված ռազմավարական հայեցակարգներ (1991, 1999 և 2010 թ.), որոնք համալրվել են գաղտնի ռազմական փաստաթղթերով:

2010 թվականից և հատկապես 2014 թվականից ի վեր, երբ տեղի ունեցան Ռուսաստանին Ղրիմի միացումը, ինչպես նաև Չինաստանի վերելքը, ստեղծվում է նոր աշխարհառազմավարական լանդշաֆտ, որին բնորոշ է նոր ռազմավարական մրցակցությունը: Ըստ այդմ 2017 թ. ՆԱՏՕ-ն սկսել է զորքեր տեղաբաշխել իր արևելյան և հարավարևելյան թևերում, իսկ ռուս-ուկրաինական զինված հակամարտության առնչությամբ 2022 թ. զգալիորեն ուժեղացնում է իր ռազմական ներուժը Արևելյան Եվրոպայում: 2022 թ. ընդունվել է նոր ռազմավարական հայեցակարգ, որն արձագանքում է այս կարևոր զարգացումներին և ուրվագծում այս արագափոխ ու բարդ անվտանգային միջավայրում իր հետագա ուղին:

Ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային մասշտաբով անվտանգության համակարգի ձևավորման ու պահպանման խնդիրը դարձել է ժամանակակից միջազգային հարաբերությունների կենտրոնական պրոբլեմներից մեկը և բազմաթիվ քննարկումների առարկա: Արդի գիտության ասպարեզում կա անվտանգության խնդիրների մասին պատկերացումների լավ զարգացած համակարգ: Այդուհանդերձ, այսօր հիմնական խնդիրների վերաբերյալ աշխարհայացքների խոր փոխակերպումները ակներև կերպով վկայում են, որ կա մի շարք ավանդական դրույթների վերանայման անհրաժեշտություն:

[20] Տես “Membership Action Plan”. “NATO”, 19 April 2023 (https://www.nato.int/cps/en/natohq/topics_37356.htm#:~:text=The%20Membership%20Action%20Plan%20(MAP,the%20 Alliance%20on%20future%20membership):

Մասնավորապես՝ միջպետական հարաբերությունների կառուցվածքը հիմնովին փոխելու, ռազմական բռնությամբ ուժերի և շահերի ձեռնտու հաշվեկշիռ հաստատելու նպատակով լայնածավալ զինված միջբլոկային հակամարտության սպառնալիքը փոխարինվում է այլ բնույթի խնդիրներով և մարտահրավերներով, որոնք շատ ավելի բազմազան են, պակաս ակնհայտ և կանխատեսելի, քան նախկինում:

21-րդ դարի երկու տասնամյակները ցույց տվեցին, որ ՆԱՏՕ-ն չկարողացավ լիովին հաղթահարել ուժի առանցքային դերը, որը դրվեց Եվրոպայում անվտանգության ապահովման խնդրի հիմքում: Տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք կասկածի տակ դրեցին Դաշինքի հզորության կիրառման արդյունավետությունը՝ ապացուցելով, որ այն ոչ լիովին է համապատասխանում ժամանակակից մարտահրավերներին և սպառնալիքներին, ունակ չէ լիարժեք կերպով արձագանքելու ծագող վտանգներին: Ամերիկյան տնտեսության ճգնաժամային երևույթները, Իրաքում և Աֆղանստանում ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի նրա դաշնակիցների ռազմական գործողությունների հետ կապված իրադարձությունները նշանավորեցին ժամանակակից աշխարհում ամերիկյան հեգեմոնիա ապահովելու ծրագրերի անկատարությունը[21]:

Վերջին մի քանի տասնամյակում աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները ՆԱՏՕ-ի ղեկավարությանն ստիպեցին մտածել Դաշինքի ապագայի մասին: Դա արտացոլվել է դաշինքի «Ակտիվ ներգրավվածություն, ժամանակակից պաշտպանություն» նոր ռազմավարական հայեցակարգում, որը հաստատվել է 2022 թվականի նոյեմբերի 20-ին Լիսաբոնում կայացած գագաթնաժողովում:

Ինչ վերաբերում է եվրասիական (հետխորհրդային) ինտեգրմանը, ապա դրա գրեթե բոլոր սահմանակարգերին ու հաստատություններին բնորոշ են որոշակի թերություններ: Ընդհանուր առմամբ, չկան կայուն հորիզոնական կապեր, նորմատիվություն և սկզբունքներին հավատարմություն: Որպես հետխորհրդային ինտեգրման կառույց՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը բնորոշ են այս բոլոր հատկանիշները: Սովորաբար այն տարածաշրջանային կազմակերպություններին, որոնք ինտեգրման ուղղությամբ աշխատում են այնպիսի կարևոր ոլորտում, ինչպիսին պաշտպանությունն է, բնորոշ է որոշ ազգային լիազորությունների փոխանցումը վերազգային մակարդակի մարմիններին: Եթե դա տեղի չի ունենում, ապա հարց է ծագում, թե որոնք են նման կառույցի նպատակն ու գործառույթները և գործունեության մեխանիզմները:

1992 թ., երբ մշակվում էր Հավաքական անվտանգության պայմանագիրը (ՀԱՊ), հետխորհրդային տարածության համար գլխավոր մարտահրավերը Աֆղանստանում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունն էր: Ըստ այդմ էլ պայմանագիրն ստորագրվեց Տաշքենդում: Հետագայում պարզ

[21] Տես, օրինակ, *Վ. Վ. Սելիվանով, Յու. Դ. Իլյին,* Ռազմական հակամարտությունների սանձազերծման մեջ հավանական հակառակորդի զսպմանն ուղղված ռազմատեխնիկական անհամաչափ պատասխանի հայեցակարգը: «ՀԲ», 2022, հմ. 2:

դարձավ, որ ՀԱՊ-ը այն արդյունավետ միջոցը չէ, որը կապահովի տարածաշրջանային անվտանգությունը «հարավային ուղղությունում»: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում՝ Տաջիկստանում, բռնկված քաղաքացիական պատերազմին զուգընթաց, առաջացել է թալիբների դավանած արմատական իսլամականության տարածման սպառնալիքը[22]:

Փորձելով պատասխանել հարավում ծագած իսլամիստական սպառնալիքին և դեպի արևելք ՆԱՏՕ-ի ընդլայնմանը՝ Մոսկվան տասը տարի անց նախաձեռնեց Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության ձևավորումը: Սակայն դա չլուծեց տարածաշրջանային անվտանգության խնդիրը: ՀԱՊԿ-ի «հարավային ուղղությամբ» ի հայտ եկան «ներքին բնույթի» նոր մարտահրավերներ և սպառնալիքներ՝ Արցախյան պատերազմը, 2005 և 2010 թվականների Ղրղզստանի հեղափոխությունները, 2005 թ. Անդիջանի ապստամբությունը, Տաջիկստանի և Ուզբեկստանի միջև սահմանային հակամարտությունները և Իսլամական շարժման գործունեությունը:

Ուշադրության է արժանի նաև թյուրքական համերաշխության գործոնը: Զինված հակամարտության ընթացքում Թուրքական խորհրդի աջակցությունը, որում ընդգրկված են ՀԱՊԿ-ի մի շարք անդամ պետություններ, մասնավորապես՝ Ղազախստանն ու Ղրղզստանը, որոնք հաճախ արգելակել են ՀԱՊԿ-ի կոլեկտիվ միջամտությունը հայ-ադրբեջանական հակամարտությանը, ինչի պատճառով երկար տարիներ Հայաստանի անվտանգային պրոբլեմները ՀԱՊԿ-ի շրջանակում լուծվել են Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունների ձևաչափով: Ի դեպ, Բելառուսի Հանրապետությունն էլ, լինելով քրիստոնեական երկիր, ակտիվ կերպով համագործակցում է մահմեդական երկրների հետ[23]: Ուստի և պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության դեմ Ադրբեջանի Հանրապետության ձեռնարկած բազմաթիվ ագրեսիվ գործողությունները ՀԱՊԿ-ը անտեսել է՝ որոշակիորեն խուսափելով իրական հիմքային համապատասխան քաղաքական գնահատականներից[24]: Այս առումով հարկ է նշել, որ ՀԱՊԿ-ում ընդհանրապես զգացվում է փոխըմբռնման ու փոխվստահության պակաս:

---

[22] Տես *Rosa Turarbekova.* How Russia is trying to compete with NATO. “IPS”, 22.06.2022 (https://www.ips-journal.eu/topics/foreign-and-security-policy/the-future-of-russias-answer-to-nato-6011/):

[23] Տես «Александра Лукашенко приняли в исламе». «Коммерсантъ», 18.04.2016 (https://www.kommersant.ru/doc/2966764):

[24] Տես «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարցազրույցը Հանրային հեռուստաընկերությանը», 11.09.2023 (https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2023/09/11/Nikol-Pashinyan-Interview-Petros-Ghazaryan/), «ՀԱՊԿ-ը չի արձագանքել այնպես, ինչպես ակնկալում էինք. Փաշինյանը՝ ՀՀ տարածք Ադրբեջանի ներխուժման մասին»: «Civilnet», 16.04.2022 (https://www.civilnet.am/news/661634/հապկ-ը-չի-արձագանքել-այնպես-ինչպես-սպասում-էինք-փաշինյանը՝-hh-տարածք-ադրբեջանի-ներխուժման-մասին/), «Աժ նախագահը ՀԱՊԿ անդամ երկրներին կոչ է արել առանց կանխակալ քաղաքական նախասիրությունների

Տվյալ մոտեցումն ավելի է ընդգծվում այն փաստով, որ 2021 թվականի սեպտեմբերի 16-ին Դուշանբեում կայացած ՀԱՊԿ-ի գագաթնաժողովում ստորագրվեց Կազմակերպության խաղաղապահական համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրություն[25]: Համաձայնագրի հիմնական կետերից առանձնանում է «համակարգող պետության» հայեցակարգի ներդրումը: Ըստ էության, գաղափարն այն է, որ հավաքական խաղաղապահ ուժերը ստեղծվում են բացառապես «համակարգող պետության» հովանու ներքո, որին որոշում է Հավաքական անվտանգության խորհրդի բարձրագույն մարմինը (անդամ պետությունների ղեկավարների խորհուրդը):

Երկարաժամկետ հեռանկարում դա նշանակում է, որ ՀԱՊԿ-ը կարող է մասնակցել ՄԱԿ-ի խաղաղապահական գործողություններին, որոնք նման կլինեն ՆԱՏՕ-ի օպերացիաներին և սահմանափակված չեն լինի նրա պատասխանատվության գոտով՝ հետխորհրդային տարածությամբ:

Շատ փորձագետներ Արձանագրության ստորագրումը կապում են Ուկրաինայում իրագործվող օպերացիայի համար ճանապարհ հարթելու հետ: Սա մասամբ ճիշտ է, սակայն պետք է հաշվի առնել, որ այս փոփոխություններն ուժի մեջ մտնելու համար դեռևս անհրաժեշտ է վավերացման ընթացակարգ: Այսօրվա դրությամբ փաստաթուղթը վավերացրել է միայն ՌԴ Պետդուման: ՀԱՊԿ-ի անդամ մյուս բոլոր պետությունները դեռ այս փոփոխություններին կողմ չեն քվեարկել:

Համեմատական վերլուծության ենթարկելով կոլեկտիվ անվտանգության դաշինքային մոդելները՝ ՆԱՏՕ-ի և ՀԱՊԿ-ի օրինակներով, որպես ամփոփում կարելի է առանձնացնել հետևյալը.

– կոլեկտիվ անվտանգությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ անվտանգությունը բխում է բոլոր պետությունների շահերից, և անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները հաճախ պահանջում են համակարգված միջազգային արձագանք: Պետությունները համաձայնում են դիմակայելու սպառնալիքներին և կիսելու խաղաղության պահպանման կամ դրա պարտադրման ծախսերը: Կոլեկտիվ պաշտպանությունը մի համաձայնություն է, որը սովորաբար մասնակից պետությունների միջև ձևակերպվում է կազմակերպություն ստեղծելու մասին համապատասխան պայմանագրով, որով անդամ պետությունները պարտավորվում են աջակցություն ցուցաբերել այն անդամ պետության պաշտպանությանը, որի վրա կազմակերպությանը չանդամակցող որևէ պետություն հարձակվել է:

hստակ դիրքորոշում հայտնել»: «Արմենպրես», 18.05.2023 (https://armenpress.am/arm/news/1111252/):

[25] Տես «Совет коллективной безопасности 16 сентября 2021 года в Душанбе обсудил проблемы международной и региональной безопасности и их влияние на безопасность государств – членов ОДКБ». ОДКБ, 16.09.2021 (https://www.odkb-csto.org/session/2021/sovet-kollektivnoy-bezopasnosti-16-sentyabrya-v-dushanbe-obsudil-problemy-mezhdunarodnoy-i-regionaln/):

– Կոլեկտիվ պաշտպանության կազմակերպությունը միավորում է այն պետություններին, որոնք բացառում են իրենց միջև պատերազմի հնարավորությունը* և ցանկանում են հետապնդել ընդհանուր անվտանգության նպատակներ՝ մեկ դաշնակցի վրա հարձակումը համարելով հարձակում բոլոր դաշնակիցների դեմ: Սա հավաքական դաշինքային մոդելի առանցքային սկզբունքներից է:
– Կոլեկտիվ անվտանգության ապահովման դաշինքային մոդելն ամենատարածվածն ու ամենակիրառականն է: Այդ մոդելով անդամ պետությունները մեխանիկորեն միմյանց օգնություն են ցուցաբերում, ընդսմին այդ պարտավորությունն ամրագրված է տվյալ դաշինքի կանոնադրությունում: Նման դաշինքներից առավել նշանակալից են ՆԱՏՕ-ն և ՀԱՊԿ-ը:
– Ե՛վ ՀԱՊԿ-ում, և՛ ՆԱՏՕ-ում անդամ պետությունները կատարում են միմյանցից խիստ տարբեր ռազմական ներդրումներ, բայց ստանում են նույն երաշխիքները: ՀԱՊԿ-ի դեպքում, որտեղ քաղաքական ու ռազմական հեգեմոն պետությունը Ռուսաստանի Դաշնությունն է, անհրաժեշտ է պարզորոշել, թե ինչպես են իրացվում այդ երաշխիքները, և որքանով է Կազմակերպությունը կարողանում կատարել իր կանոնադրական պարտավորությունները: ՀԱՊԿ-ի ընդունած որոշ կարգավորումներ չունեն իրականացման անհրաժեշտ բոլոր մեխանիզմները: Օրինակ՝ ՀԱՊԿ-ն ունի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության կարգավորող դաշտ, սակայն դրա իրականացման մեխանիզմները հստակեցված չեն: Դրա պատճառով այսօր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը սահմանափակ է:
– ՆԱՏՕ-ն այսօր ներգրավված է այնպիսի գործունեություններում, որոնք նախկինում նախատեսված չեն եղել իր հիմնադիր պայմանագրով և որոնց համար հաճախ լինում է վատ պատրաստված: Ուստի դաշինքին բնորոշ են մշտապես իրագործվող բարեփոխումներով, ռազմավարական վերակողմնորոշումը և ներքին քննարկումները: Ճգնաժամային կառավարումը ՆԱՏՕ-ի անվտանգության հիմնարար խնդիրներից է: Այն կարող է ներառել ռազմական և ոչ ռազմական միջոցներ հակամարտություններից առաջ, ընթացքում և հետո ճգնաժամերի ամբողջ սպեկտրով պրոբլեմները լուծելու համար: Դա ՆԱՏՕ-ի ուժեղ կողմերից մեկն է, որը հիմնված է փորձի, փորձված և փորձարկված ճգնաժամային կառավարման ընթացակարգերի և ինտեգրված ռազմական հրամանատարական կառուցվածքի վրա:
– ՆԱՏՕ-ում ԱՄՆ-ի բարձրագույն դիրքը հաճախ վիճարկում են ազդեցիկ եվրոպական անդամները՝ Ֆրանսիան և Գերմանիան: ՆԱՏՕ-ի թույլ կողմը քաղաքական-ռազմական բարդ որոշումների կայացման գործընթացն է և զինված ուժերի տեղափոխումը օպերատիվ տարածաշրջան:

* Որպես եզակի օրինակ նշենք ՆԱՏՕ-ի երկու անդամների՝ Թուրքիայի և Հունաստանի միջև 1974 թ. տեղի ունեցած կարճատև պատերազմը:

Միևնույն ժամանակ ռուսական հեգեմոնիայի ներքո ՀԱՊԿ-ը ձգտում է խաղալու ՆԱՏՕ-ի դերը՝ դառնալու այսպես կոչված «Արևելյան ՆԱՏՕ», ինչը պետք է գնահատել որպես անիրատեսական:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՆԱՏՕ-ն վաղուց կայացած դաշինք է, որում ներգրավված են միջազգային հարաբերությունների ու պետականության հարուստ փորձ ունեցող պետություններ:

Մինչդեռ ՀԱՊԿ-ը միավորում է մի շարք պետություններ, որոնց տիտղոսային ազգերը մինչ այդ երբեք չեն ունեցել պետականություն, ուստի ի վիճակի չեն լինում արդյունավետ կերպով կառուցել իրենց հարաբերությունները միջազգային ասպարեզում, հատկապես՝ դաշնադրային կազմակերպությունների շրջանակում:

Եվ այսպես. ՆԱՏՕ-ն և ՀԱՊԿ-ը, լինելով կոլեկտիվ անվտանգության տարածաշրջանային կառույցներ և հետապնդելով գրեթե միևնույն նպատակները, տարբերվում են իրենց մասշտաբներով, կայացածությամբ ու կազմերի մեջ մտնող պետությունների միջազգային փորձառությամբ:

## ОСОБЕННОСТИ РЕГИОНАЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ КОЛЛЕКТИВНОЙ БЕЗОПАСНОСТИ: ПОЛИТОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ НА ПРИМЕРЕ НАТО И ОДКБ

*Т. Т. КОЧАРЯН, полковник, доктор политических наук, профессор, заместитель Начальника по образованию и науке НИУО МО РА – Начальник ИНСИ*

РЕЗЮМЕ

Компаративный анализ союзнических моделей региональных систем коллективной безопасности, проведенный на уровне теоретических разработок, в том числе соответствующих официальных документов ведущих государств и концепций, а также практической деятельности НАТО и ОДКБ, позволяет выявить характерные для этих моделей принципы построения и механизмы деятельности подобных организаций и специфические особенности, присущие конкретно НАТО и ОДКБ. В частности, в основу идеи коллективной безопасности заложен принцип неделимости безопасности, заключающийся в том, что безопасность одного государства не должна обеспечиваться за счет другого. Основным условием формирования союзнической модели коллективной безопасности является готовность каждого участника рассматривать агрессию против одного члена как агрессию против всех членов и исключение силового решения противоречий в рамках данной организации.

НАТО было создано как противовес формирующемуся в Восточной Европе социалистическому лагерю. Целью объединения государств в системе НАТО являлось обеспечение военной безопасности отдельных государств за счет коллективной военной, политической и

экономической мощи всей Организации, т. е. совокупной мощи всех ее членов. В настоящее время НАТО порой берет на себя функции, не предусмотренные учредительным договором. В роли лидера НАТО выступают США, являющиеся на сегодняшний день ведущей мировой державой, что в значительной мере обеспечивает вес и авторитет Альянса в системе международных отношений.

Хотя перед ОДКБ были поставлены те же цели, что и перед НАТО, но она остается сугубо региональной организацией с ограниченной зоной ответственности. В связи с этим Организация за годы своего существования провела всего одну миротворческую операцию (Казахстан, 2022 г.). ОДКБ присущи определенные специфические черты, создающие объективные и субъективные факторы, препятствующие ее эффективной деятельности. Так, например, участие в ОДКБ Казахстана и Киргизии, в то же время являющихся членами Организации исламского сотрудничества и Организации тюркских государств, привело к тому, что Армения в рамках ОДКБ сотрудничала и продолжает сотрудничать в двустороннем формате практически только с Россией (Беларусь также «дала крен» в сторону ислама). И не случайно ОДКБ в определенной мере игнорировала многочисленные акты агрессии, предпринимаемые Азербайджаном против Армении, и избегала реальных глубинных политических оценок этих актов. Основным препятствием для эффективной деятельности ОДКБ можно считать то обстоятельство, что титульные нации большинства членов не имели собственной государственности и опыта созидания международных отношений.

## PECULIARITIES OF REGIONAL COLLECTIVE SECURITY ORGANIZATIONS: POLITOLOGICAL CASE STUDY OF NATO AND CSTO

*T. T. KOCHARYAN, Colonel, Doctor of Political Science, Professor, Deputy Head in Education and Research – Head of INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

Comparative analysis of alliance models of regional collective security systems, carried out at the level of theoretical developments, including corresponding official documents of leading states and concepts, as well as performance of NATO and CSTO, enables drawing out some structural principles, typical of such models, and acitivity mechanisms of such organizations with specific peculiarities, inherent to particularly NATO and CSTO. More specifically, the principle of indivisibility of security, meaning that the security of one state ought not to be gained on another state's

expense, is underlying the idea of collective security. The willingness of each of the members to view any aggression against one as aggression against all the members, and the exclusion of power solution of any contradictions within the given organization are a basic term for shaping an alliance model of collective security.

NATO was established as a counterweight to the Socialist Camp, setting up in Eastern Europe. The goal for this union of states within the NATO system was to ensure the military security of separate states on account of collective military, political and economic power of the Organization as a whole, i. e., the corporate power of all of its members. At present, NATO at times undertakes functions, not provided by its founding treaty. The USA, being nowadays the world's leading power, steps up as the leader of NATO, this greatly providing for the Alliance's strength and authority in the international relations system.

Though CSTO has been set with the same goals as NATO, but it remains purely regional organization with limited area of responsibility. In this regard, in the course of the years the Organization has carried out only one peacemaking operation (Kazakhstan, 2022). CSTO is characterized by certain specific features, which allow for a number of objective and subjective factors hindering its efficient performance. Thus, for instance, the membership of Kazakhstan and Kyrgyzstan in CSTO, while being at the same time members of the Organisation of Islamic Cooperation and Organization of Turkic States, has led to the fact that in the CSTO framework, Armenia has practically cooperated and still cooperates in the bilateral format only with Russia (Belarus "having leant towards" Islam). No wonder that CSTO has to some degree ignored numorous acts of aggression Azerbaijan carried out against Armenia, and avoided real in-depth political assessments of these acts. As a main hindrance for CSTO's efficient performance can be viewed the fact that the titular nations of the majority of members didn't have their own statehood, and lacked any experience in shaping international realtions before.

# «ՄԵԿ ԱԶԳ, ԵՐԿՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԹՈՒՐՔԻԱ–ԱԴՐԲԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

*Ն. Ա. ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի Հայաստանի հարակից և մերձավոր արտերկրի պետությունների ռազմավարական հետազոտությունների բաժնի գիտաշխատող*



**Ներածություն**

Թուրքիա – Ադրբեջան հարաբերություններն ունեն ինչպես գաղափարական, այնպես էլ փոխադարձ շահերով ու պրագմատիկ քաղաքականությամբ պայմանավորված հիմքեր, որոնք արտահայտված են «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգում: Թուրքիայի ազգային ռազմավարություններում կարևոր տեղ է գրավում Հարավային Կովկասը, որտեղ ազդեցության հասնելու համար կարևորվեց Ադրբեջանի դերը: Իսկ վերջինս անվտանգային հարցերում, մասնավորապես՝ Արցախյան հակամարտության առնչությամբ, ուներ դաշնակցի կարիք:

Մենք որպես սույն հետազոտության նպատակ սահմանել ենք «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի վերլուծությունը Թուրքիայի ազգային ռազմավարությունների համատեքստում՝ փորձելով բացահայտել դրա հիման վրա ձևավորված պրագմատիկ դաշնակցության հիմքերը: Բացի այդ, վերլուծվել է «մեկ ազգ, վեց պետություն» կարգախոսի վերածվելու դրա հնարավորությունը:

Այսպիսով՝ թուրք-ադրբեջանական ռազմավարական և դաշնակցային հարաբերությունները բանաձևվում են «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգով՝ հիմնված փոխադարձ շահերի վրա, որոնք, իրենց հերթին, պրագմատիկ դաշինքի հիմքերն են: Ինչ վերաբերում է «մեկ ազգ, վեց պետություն» ձևակերպմանը, ապա այն թեև ունի գաղափարական, սակայն առայժմ ոչ գործնական քաղաքական հիմքեր, որպեսզի ապահովի Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս երկրների միջև դաշնակցային հարաբերությունների զարգացումը:

* Հոդվածը նախնական տարբերակով ստացվել է 25.10.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 01.11.2023:

## «Կարմիր գիրքը»՝ ազգային անվտանգության ռազմավարությունը

Թուրքիայի ռազմավարական նպատակները ձևակերպված են ազգային անվտանգության հիմնական փաստաթղթում՝ «Կարմիր գրքում» *(“Kırmızı Kitap”*[*]: Այստեղ ներկայացված են Թուրքիայի ներքին, արտաքին և պաշտպանական ոլորտներում գործող հիմնական սկզբունքները[1]: Ազգային շահերը ձևակերպված են որպես «նպատակներ, որոնց պետք է հասնել և պաշտպանել՝ պետության գոյատևումն ու անվտանգությունը և ազգի բարօրությունը ապահովելու համար»[2]: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նրա ազգային անվտանգության փաստաթղթի «Ազգային շահեր» բաժնում նշվում է պետության անկախության, տարածքային ամբողջականության պահպանման և ժողովրդի անվտանգության ապահովման պահանջը[3]: Նման ձևակերպումները հիմք են ստեղծում երկկողմ համագործակցության համար՝ ընդհանուր քաղաքական ու տնտեսական շահերի և սպառնալիքների կամ թշնամիների գոյության պայմաններում: Թերևս հարկ է ուշադրություն դարձնել սպառնալիքների և ընդհանուր թշնամու կերպարի վրա: Արցախյան առաջին պատերազմի ժամանակ, երբ հայկական կողմը հասել էր հաղթանակի, դյուրին դարձավ ի դեմս Հայաստանի ընդհանուր թշնամու կերպարի ստեղծումը: Իսկ 44-օրյա պատերազմից հետո նրանք փորձում են ստեղծել հաղթանակի միասնական խորհրդանիշ[4]: Բնականաբար, Թուրքիան չուներ Հայաստանից բխող անմիջական անվտանգային սպառնալիքներ, սակայն օգտագործեց Լեռնային Ղարաբաղի հակամար-

---

[*] Հանրությանը հայտնի է նաև «Գաղտնի սահմանադրություն» անվանմամբ: Փաստաթղթի բովանդակությունը չի հրապարակվում՝ բացառությամբ որոշ ընդհանուր դրույթների: Այս փաստաթուղթը նախկինում պատրաստվում էր ռազմական համակարգի վերահսկողությամբ և ուղեցույց է Նախարարների խորհրդի և ուժային կառույցների համար: Հայտնի է, որ այն վերջին անգամ վերաշարադրվել է 2005 թ., ապա կառավարությունն այն վերանայել է 2010 թ.: Այս մասին հայտարարել է Վարչապետ Ռ. Թ. Էրդողանը՝ նշելով, որ աշխատել են վերացնել դրանում եղած թերությունները: Ավելի ուշ նա նաև հայտարարել է, որ արմատապես վերանայվել է «արտաքին սպառնալիք» բաժինը և նշել, որ «արհեստական մտահոգություններն ու վախերը երկար ժամանակ գերիշխում են Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ»: «Կարմիր գիրքը» վերանայվում է հինգ տարին մեկ, սակայն ամեն տարի թարմացվում են դրա հավելվածները (ավելի հանգամանորեն տես “Kırmızı Kitap – Gizli Belge öyle olmaz böyle olur”, 17 November 2012 (http://kirmizikitap.blogspot.com/)):

[1] Տես *Ö. L. Taşcıoğlu.* Milli Güvenlik Konsepti ve Milli Güvenliğin Türkiye ve Diğer Devletler Açisindan Önemi. “Akademik Sosyal Araştırmalar Dergisi”, Mart 2018, Yıl: 6, Sayı: 67:

[2] Տես “Kırmızı Kitap” (https://www.muharrembalci.com/hukukdunyasi/belgeler/196.pdf):

[3] Տես “National Security Concept of the Republic of Azerbaijan”. Approved by Instruction No. 2198 of the President of the Republic of Azerbaijan on 23 May 2007 (https://www.files.ethz.ch/isn/154917/Azerbaijan2007.pdf):

[4] Տես *В. Аватков.* Турция и Азербайджан: Одна нация – одно государство? «Мировая экономика и международные отношения», 2022, т. 66, № 2:

տությունը, փակեց Հայաստանի հետ սահմանը և առաջ քաշեց նախապայմաններ[5]: Փաստորեն, ձևավորվող «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի հիմքում դրվեց անվտանգային սպառնալիքը կամ դրա ծագման հնարավորությունը, որն էլ որպես ազգային շահ ձևակերպվեց ռազմավարական մակարդակով:

«Կարմիր գրքում» խոսվում է էներգետիկ և ջրային պաշարների հետ կապված վտանգների մասին, որը համարվում էր բացասական քաղաքականություն: Դրա կարևոր պատճառներից է այն, որ Թուրքիայի արևելյան և հարավարևելյան շրջանները մոտ են Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մերձավոր Արևելքի տարածաշրջաններին, որոնք առանցքային են ջրային և էներգետիկ ռեսուրսների տեսանկյունից[6]: 2005 թ. հրապարակված «Կարմիր գրքում» սա դիտվում է որպես Թուրքիայի անվտանգության համար սպառնալիք, այնինչ հետագայում վերածվում է հնարավորության: 1990-ական թվականներին Քրդական հարցի ակտիվության համապատկերում Թուրքիան իրական սպառնալիք էր համարում ռեսուրսների համար պատերազմները և զգուշանում դրանցից: Սակայն հետագայում նա օգտվեց ռեսուրսների և դրանց տեղափոխման հետ կապված Արևմուտք–Ռուսաստան հակամարտությունից և դարձավ Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղի և Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազամուղի խոշոր ռազմավարական նախագծերի մասնակից: Սա մեծացրեց Թուրքիայի տարածաշրջանային դերը և սուբյեկտայնությունը: Մյուս կողմից՝ Ադրբեջանը ստացավ Ռուսաստանին շրջանցող այլընտրանքային ուղի, որի շնորհիվ նա, նվազեցնելով իր կախվածությունը, հնարավորություն ստացավ ամրապնդելու հարաբերությունները Արևմուտքի հետ, ինչպես նաև ի դեմս Թուրքիայի ձեռք բերեց ռազմավարական դաշնակցի: Փաստորեն, Կովկասը Թուրքիայի աշխարհաքաղաքականության մեջ զբաղեցնում է առանցքային տեղ և կարևորվում ինչպես Կասպից ծովի ավազանի, այնպես էլ Միջերկրական ծովի ավազանի համար: Ներկայումս Թուրքիան փորձում է ակտիվ դեր խաղալ այս հսկա տարածաշրջաններում:

### «Ռազմավարական խորք» ռազմավարությունը

Սույն ռազմավարությունը մշակվել է Թուրքիայի նախկին արտաքին գործերի նախարար, ապա՝ Վարչապետ Ահմեթ Դավութօղլուի համանուն աշխատության հիման վրա: «Ռազմավարական խորքի» ռազմավարությունը հենվում է մի շարք պարամետրերի վրա, ինչպիսիք են աշխարհագրությունը, պատմությունը, մշակույթը, նաև բնակչության թիվը, տնտեսությունը, տեխնոլոգիաները և ռազմական կարողությունները[7]: Այս չափանիշների

---

[5] Տես *A. Grigoryan, K. Khachatryan, V. Ter-Matevosyan.* Armenia-Turkey border opening: what determines the attitude of Armenians? “Caucasus Survey”, 2018, PP. 1–19:

[6] Տես “Kırmızı Kitap” (https://www.muharrembalci.com/hukukdunyasi/belgeler/196.pdf):

[7] Տես *A. Davutoğlu.* Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu. Ankara, 2001, s. 17–29:

հաշվառմամբ Օսմանյան կայսրության նախկին տարածքներում Թուրքիան դիտվում է որպես կենտրոնական պետություն և նրան վերապահվում է ակտիվ դեր, ինչը բնութագրվում է որպես նորօսմանականության քաղաքականություն: Այս ռազմավարության մեջ կարևոր տեղ է հատկացվում Կովկասին, որը Դավութօղլուն բնութագրում է որպես «դարպաս դեպի Ասիա»[8]: Նա նշում է, որ պատմական, աշխարհագրական և մշակութային առումներով Թուրքիան իրեն համարում է Կովկասյան տարածաշրջանի անբաժանելի մասը, ինչը ենթադրում է, որ Թուրքիան կակտիվացնի Կովկասում իր քաղաքականությունը՝ առաջին հերթին ամրապնդելով հարաբերություններն Ադրբեջանի հետ: Այս ռազմավարության համատեքստում ձևակերպվեցին «զրո խնդիրներ հարևանների հետ» և «տարածաշրջանի վրա հիմնված» արտաքին քաղաքականության սկզբունքները[9]: Երկրորդ սկզբունքի համատեքստում է դիտվում նաև Հարավային Կովկասը, որը «Սառը պատերազմից» հետո համարվում է միջազգային հարաբերությունների տեսանկյունից կարևոր տարածաշրջան, ինչը պայմանավորված է Ռուսաստանի, Իրանի, Կասպից ծովի ավազանի, այլ պետությունների, նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի դերերով: Ուշադրություն է դարձվում նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության և հայ-ադրբեջանական հարաբերությունների վրա[10]:

«Ռազմավարական խորք» ռազմավարության համատեքստում պետք է դիտարկել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փորձը և 2009 թ. Ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումը: Սակայն Թուրքիան ձախողեց այս գործընթացը՝ այն կրկին պայմանավորելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմամբ: Փոխարենը ավելի են ամրապնդվում Թուրքիա–Ադրբեջան հարաբերությունները, ինչի հետևանքով կողմերը 2010 թ. ստորագրեցին ռազմավարական համագործակցության պայմանագիր[11]:

## Էրդողանական «թուրքակենտրոնության» ռազմավարությունը

Վերջին տարիներին Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարության վրա նկատելի է Նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և նրա համակնությունների ազդեցությունը: Նա առաջ է քաշել Թուրքիայի գլխավորությամբ «թուրքակենտրոն» միության ստեղծման տեսլականը՝ Թյուրքական պետությունների կազմակերպությունը[12]: Այս էրդողանական ռազմավարութ-

---

[8] Տես նույն տեղում, էջ 124:

[9] Տես *A. Davutoğlu.* “Turkey’s Foreign Policy Vision: An assessment of 2007”. “Insight Turkey”, 2008, Vol. 10, N 1:

[10] Տես *A. Davutoğlu.* Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu, s. 125–129:

[11] Տես *A. Yüce.* Azerbaycan-Türkiye Askeri İşbirliği Faaliyetlerinin Hukuki Temeli. “Azərbaycan Ali Hərbi Məktəbi Elmi Əsərlər Məcmuəsi”. Bakı, 2016, N 1 (26):

[12] Տես “Declaration of the Eighth Summit of the Organization of the Turkic States” (https://www.turkicstates.org/assets/pdf/temel_belgeler/eighth-summit-declaration-15-en.pdf):

յան ակտիվ քննարկումներն սկսվեցին 44-օրյա պատերազմից հետո, երբ Թուրքիայի անմիջական ռազմական աջակցությամբ ու մասնակցությամբ Ադրբեջանը կարողացավ հասնել հաջողության: Էրդողանի խոսքով` ««մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքը Ադրբեջանի հետ մեր համերաշխության հիմնական փիլիսոփայությունն է: Այս միասնությունն ու համերաշխությունը պսակվել են Ղարաբաղի ազատագրմամբ: 44-օրյա գործողությունների ընթացքում, որ բերեցին ղարաբաղյան հաղթանակը, մենք ամեն պահի եղել ենք Ադրբեջանի կողքին»[13]: Անկարան, 2020 թ. Լեռնային Ղարաբաղի ճգնաժամին ռազմական ներգրավվածությամբ, փորձում է մեծացնել իր ազդեցությունը Հարավկովկասյան տարածաշրջանում, ինչը կարող է հանգեցնել Թուրքիայից Ադրբեջանի ավելի մեծ կախվածությանը, քան Ռուսաստանից: Ավելին. Կովկասյան տարածաշրջանում կարևոր դեր խաղալով` Անկարան փորձում է ԱՄՆ-ին և Եվրոպային ապացուցել, որ տարածաշրջանային խնդիրները չեն կարող լուծվել առանց Թուրքիային հաշվի առնելու[14]: Թուրքիայի միջամտությամբ Հարավային Կովկասում փոխվեց ստատուս-քվոն, երբ Ռուսաստանի ազդեցության թուլացման պայմաններում Թուրքիան ներգրավվեց այստեղ տեղի ունեցող գործընթացներում[15]: Անկարայի աջակցությունն Ադրբեջանին Թուրքիայի նախագահը որակել է որպես «նոր համաշխարհային կարգում Թուրքիային արժանի տեղը դնելու» ուղղությամբ Թուրքիայի գործադրած ջանքերի մի մաս[16]: Թուրքիայի նախագահը դա պատկերացնում է ՄԱԿ-ի բարեփոխմամբ, մասնավորապես` Անվտանգության խորհրդի մշտական անդամների վերանայմամբ[17]: Այս համատեքստում է նա առաջ քաշել «աշխարհը հինգից ավելի է» կարգախոսը և այս մասին հայտարարել 2022 թ. ՄԱԿ-ում ունեցած ելույթի ժամանակ[18]: Նրա հիմնական նպատակն է նոր ձևավորվող աշխարհակարգում Թուրքիայի համար ապահովել տերության կարգավիճակ, ինչին, իհարկե, հարկ է մոտենալ

---

[13] Տես *İ. Altay.* 6-country regional cooperation platform win-win for actors in Caucasus, Erdoğan says, Daily Sabah, 12 December 2020 (https://www.dailysabah.com/ politics/ diplomacy/6-country-regional-cooperation-platform-win-win-for-actors-in-caucasus-erdogan-says):

[14] Տես *Sh. Dadparvar, S. Azizi.* Exploring Turkey's Strategic Goals in Caucasus Region During the 2020 Nagorno-Karabakh Crisis. "International Relations and Diplomacy", November 2020, Vol. 8, N 11:

[15] Տես "Azerbaycan'da Başarıyı Getiren "İki devlet Tek Millet" Milli Stratejisi, Stratejik Düşünce Enstitüsü" (https://www.sde.org.tr/azerbaycanda-basariyi-getiren-iki-devlet-tek-millet-milli-stratejisi-bolgesel-analiz-16):

[16] Տես *O. Coskun, J. Spicer.* In Nagorno-Karabakh conflict, Erdogan eyes Turkey's "place in world order". "REUTERS", 7 October 2020 (https://www.reuters.com/article/ armenia-azerbaijan-erdogan-analysis-int-idUSKBN26S0HZ):

[17] Տես *R. T. Erdoğan.* Daha Adil Bir Dünya Mümkün: Birleşmiş Milletler Reformu İçin Bir Model Önerisi. İstanbul, 2021, s 129–201:

[18] Տես "Erdoğan Yüzlerine Söyledi: Dünya 5'ten Büyüktür Daha Adil Bir Dünya Mümkündür" (https://www.youtube.com/watch?v=XRnTSJBt0pE):

վերապահումով: Միևնույն ժամանակ հասկանալով, որ Թուրքիան միայնակ չի կարող ձգտել նման կարգավիճակի, նա առաջ է քաշել թյուրքական ինտեգրման գաղափարը, քանի որ միավորված թյուրքական աշխարհն ունի բավականաչափ մարդկային և նյութական ռեսուրսներ, ինչպես նաև ռազմավարական նշանակության աշխարհագրական դիրք և կարող է հավակնել միջազգային համակարգում իր ուրույն տեղն ունենալու:

Էրդողանի իշխանության տարիներին ավելի ամրապնդվեցին Թուրքիա–Ադրբեջան հարաբերությունները, իսկ 44-օրյա պատերազմից հետո դրանք դրվեցին դաշնակցային հիմքերի վրա, երբ ստորագրվեց Շուշիի հռչակագիրը[19]: Ըստ էության, երկու երկրների միջև սկսվեց մի այնպիսի ինտեգրային գործընթաց, որը կողմերը համարում էին ավելին, քան «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգը:

Այսպիսով՝ «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի գաղափարական հիմքերը վերցվել են Թուրքիայի ազգային ռազմավարություններից, որոնցում կարևորվում է Ադրբեջանի հետ համագործակցությունը: Այս հայեցակարգում արտացոլված են երկու պետությունների ռազմավարական նպատակները և ազգային շահերը, հետևաբար դա կողմերի միջև համագործակցության ամրապնդման ցուցիչ է:

### «Մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի զարգացման դինամիկան

«Սառը պատերազմի» ավարտով փոփոխությունների ենթարկվեց Թուրքիայի ազգային ռազմավարությունը, որը կազմվել էր ԽՍՀՄ-ից եկող վտանգների պայմաններում և իր հիմնական սկզբունքներով ԱՄՆ-ի Մեծ ռազմավարության մի մասն էր: Այս աշխարհաքաղաքական փոփոխությունը Թուրքիային հնարավորություն ընձեռեց մշակելու նոր ռազմավարություն, որում ներառվեցին հետխորհրդային Հարավային Կովկասն ու Կենտրոնական Ասիան: Թուրքիայի նպատակն է իր ազդեցությունը հաստատել այս տարածաշրջաններում, հետևաբար մշակված ռազմավարություններում դա նշվեց որպես արտաքին քաղաքական առաջնահերթություն:

1990-ական թվականների սկզբին հետխորհրդային տարածաշրջանների նկատմամբ Թուրքիայի վարած քաղաքականությունը գտնվում էր ձևավորման փուլում: Նույն շրջանում Ադրբեջանը ևս արտաքին քաղաքական փնտրտուքներում էր, ինչը պայմանավորված էր մի շարք ներքին և արտաքին հանգամանքներով, առաջին հերթին՝ Արցախում իր հրահրած պատերազմով:

Թուրքիայում մեծ ոգևորությամբ էին ընդունել թյուրքախոս երկրների անկախությունը, և 1990-ական թթ. սկզբին նկատվում էր փոխադարձ հուզալից հռետորաբանության ակտիվացում՝ պայմանավորված նորպանթյուրքական գաղափարների վերելքով: Դրան մեծ տուրք տվեց Ադրբեջանի

[19] Տես “The full text of the Shusha Declaration”, 18 June 2021 (https://aze.media/the-full-text-of-the-shusha-declaration/):

երկրորդ Նախագահ Ա. Էլչիբեյը, որի նպատակն էր Թուրքիայի և նրա միջոցով Արևմուտքի հետ սերտ հարաբերությունների հաստատումը: Սակայն գլխավոր խնդիրներն էին Արցախում սանձազերծված պատերազմն ու դրանում Ադրբեջանի կրած պարտությունը և նման պայմաններում վստահելի դաշնակից ունենալու անհրաժեշտությունը: Եվ 1990-ական թթ. սկզբից Թուրքիան միակ երկիրն էր, որն սկսեց ռազմական ու դիվանագիտական աջակցություն ցույց տալ Ադրբեջանին:

1990-ական թվականների կեսերից Թուրքիայում նորպանթյուրքական ոգևորությունը սկսում է անկում ապրել, և գիտակցվում է թյուրքախոս երկրների հետ հարաբերությունների հաստատման համար ավելի արդյունավետ քաղաքական, մշակութային, ռազմական և տեխնիկական մեխանիզմների ձևավորման անհրաժեշտությունը: Անշուշտ, կարևոր էր նաև այնպիսի գաղափարախոսության ձևավորումը, որը զգացմունքային դրսևորումներից զատ պետք է արտացոլեր ազգային շահերը և լիներ կենսունակ: Այս համատեքստում ձևավորվում է Ադրբեջանի նկատմամբ քաղաքականությունը, քանի որ Անկարան Ադրբեջանին համարում էր կարևոր ռազմավարական դիրք ունեցող թյուրքական պետություն՝ դարպաս դեպի Կենտրոնական Ասիա, հնարավոր տնտեսական գործընկեր՝ նավթի հարուստ պաշարներով, և բնական դաշնակից՝ Անդրկովկասում ռուսական ազդեցությունը սահմանափակելու համար[20]: «Սառը պատերազմից» հետո Թուրքիայի նպատակներից էր վերածվել էներգետիկ կամրջի կամ հանգույցի և ապահովել Կասպից ծովի ավազանի ածխաջրածնային ռեսուրսների տեղափոխումը դեպի եվրոպական շուկաներ: Այս տեսանկյունից ևս կարևոր էր Ադրբեջանի դերը: Նախ. նա ուներ էներգետիկ ռեսուրսների հարուստ պաշարներ, որոնք Թուրքիան կտեղափոխեր Եվրոպա, և որոնց կարիքն ինքն էլ էր զգում: Երկրորդ. Կասպից ծովի ավազանի ռեսուրսները (ղազախական նավթը և թուրքմենական գազը) ևս կարող էր տեղափոխվել Եվրոպա: Այսինքն՝ Թուրքիայի համար Ադրբեջանի կարևորությունը պայմանավորված էր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործոններով, հետևաբար Ադրբեջանի նկատմամբ քաղաքականությունը դարձավ ավելի համակարգված և նպատակային, ինչը սահմանափակ էր մյուս թյուրքախոս երկրների դեպքում:

### «Մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգը պրագմատիկ, թե գաղափարական դաշինքի հիմք

Պետությունների միջև դաշինքների ձևավորումը կատարվում է տարբեր հիմքերով՝ անվտանգային, քաղաքական, տնտեսական և այլն[21], ընդ որում, հարկավոր է կողմերի ընդհանուր շահերի ու հետաքրքրությունների առ-

[20] Տես *S. Bölükbaşı*. Ankara's Baku-Centered Transcaucasia Policy: Has It Failed? "Middle East Journal", 1997, Vol. 51, N 1:

[21] Տես *M. S. Walt*. The Origins of Alliances. Cornell University Press. Ithaca and London, 1987, PP. 17–49:

կայություն: Նախ. «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգը 1990-ական թվականների սկզբին բնութագրվեց որպես Թուրքիայի և Ադրբեջանի միջև առկա պատմական, մշակութային, լեզվական և էթնիկական ընդհանրություն[22]: 1993 թ. իշխանության եկած Հ. Ալիևը Թուրքիայի հետ հարաբերությունների հիմքում դրեց պրագմատիկ քաղաքականությունը: 1994 թ. փետրվարի 8–11-ը նա պաշտոնական այցով գտնվում էր Թուրքիայում և երկու պետությունների միջև հարաբերությունները բնութագրեց «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգով[23]:

Ադրբեջանի համար Թուրքիայի հետ համագործակցությունը պայմանավորված էր մի շարք գործոններով, առաջին հերթին՝ վտանգի առկայությամբ, երբ Արցախյան առաջին պատերազմում նա կորցրեց ԼՂԻՄ-ը և հարակից յոթ շրջանները: Ադրբեջանի համար կարևոր խնդիր դարձան բանակի վերակառուցումը և ՆԱՏՕ-ի հետ համագործակցության հաստատումը: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, և միայն նա պատրաստակամություն հայտնեց վերակառուցելու ադրբեջանական բանակը: Կողմերի միջև համագործակցությունն սկսվեց ռազմական կրթության ոլորտում, ապա աստիճանաբար վերածվեց ռազմատեխնիկական համագործակցության: Ռազմական ոլորտում համագործակցելով Թուրքիայի հետ՝ Ադրբեջանն լուծեց մի շարք խնդիրներ: Նախ. կրճատեց ռուսական ռազմական ազդեցությունը, երկրորդ. Լեռնային Ղարաբաղի խնդրում ձեռք բերեց վստահելի դաշնակցի, երրորդ. ռազմատեխնիկական ոլորտում ձեռք բերեց գործընկերոջ և դաշնակցի:

Այս ոլորտում համագործակցությունն իր արդյունքը տվեց 44-օրյա պատերազմի ժամանակ, երբ կարևոր դեր խաղացին թուրքական անօդաչու թռչող ապարատները[24]: Թուրքիայի նպատակն է ամրապնդել իր ռազմական դիրքերն այս երկրում, ըստ էության՝ տարածաշրջանում, ուստի Ադրբեջան է ուղարկել 60 հոգանոց զինվորական ստորաբաժանում՝«տարածաշրջանում խաղաղությանը և կայունությանն աջակցելու համար»[25]: Անշուշտ, Անկարան ձգտում է ունենալու իր զորակայանները, ինչի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չկա: Ադրբեջանն իր հերթին փորձելու է պաշտպանել Արցախում ունեցած ձեռքբերումները: Հարկ է ավելացնել նաև տարա-

---

[22] Տես *A. Ahmetbeyoğlu.* GökTürkler: Tarih Lisans Programı. İstanbul Universitesi (http://auzefkitap.istanbul.edu.tr/kitap/tarih_ao/gokturkler.pdf): Ադրբեջանն իր ինքնության հիմքում դրեց թյուրքականությունը և իրեն համարեց թյուրքական աշխարհի մաս: Դա արտացոլվեց դրոշի ընդունմամբ, երբ կապույտ գույնը խորհրդանշում է ադրբեջանական ժողովրդի թյուրքական ծագումը կամ թուրքականությունը *(Turkishness)*:

[23] Տես *Y. C. Cul, T. B. Yavuz.* Turkey-Azerbaijan Energy Relations: A Political and Economic Analysis. “International Journal of Energy Economics and Policy”, 2015, Vol. 5, N 1:

[24] Տես *H. Kınık, S. Çelik.* The Role of Turkish Drones in Azerbaijan’s Increasing Military Effectiveness: An Assessment of the Second Nagorno-Karabakh War. “Insight Turkey”, Fall 2021, Vol. 23, N 4:

[25] Տես «В Турции сообщили об отправке в Азербайджан 60 военных». «РБК», 23 декабря 2020 (https://www.rbc.ru/rbcfreenews/5fe26be39a79473ad5116349):

ծաշրջանում Ռուսաստանի ռազմական ներկայությունը, Իրանի անմիջական հարևանությունը և Արևմուտքի հավակնությունները: Ստեղծված իրավիճակում Թուրքիան և Ադրբեջանը շարունակում են խորացնել իրենց հարաբերություններն անվտանգության ասպարեզում, և կանխատեսելի է ինտեգրված ռազմական համակարգի ստեղծման հավանականությունը:

Փոխշահավետ համագործակցություն ծավալվում է նաև տնտեսական ոլորտում, այդ թվում՝ էներգետիկ ռեսուրսների առնչությամբ: Վերջինս ունի աշխարհաքաղաքական բաղադրիչ՝ պայմանավորված Ռուսաստան–Արևմուտք մրցակցությամբ: «Դարի պայմանագրով» թուրքական «Թուրքի պետրոլերի» (*“Türkiye Petrolleri”*) ընկերությունը մասնակցում է Ադրբեջանում նավթի արդյունահանմանը: 1999 թ. հայտնաբերվեց գազի «Շահդենիզ» հանքավայրը, և 2001 թ. նրանց միջև պայմանագիր ստորագրվեց այն համատեղ շահագործելու վերաբերյալ: Այսպես Թուրքիան սկսեց մասնակցել ադրբեջանական նավթի ու գազի արդյունահանմանը: Հաջորդ քայլը էներգակիրները Եվրոպա արտահանելն էր: Արևմուտքի աջակցությամբ կառուցվեցին Բաքու–Թբիլիսի–Էրզրում ու Տրանսանատոլիական գազամուղները *(“TANAP”)* և Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղը[26]: Հարկ է ավելացնել նաև Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղու գործարկումը: Այս ռազմավարական նախագծերն ամրապնդեցին երկու երկրների դաշնակցային հարաբերությունները:

Ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումների մասն են կազմում Հյուսիս–Հարավ և Արևելք–Արևմուտք հաղորդակցուղիների նախագծերը: Թուրքիան կարևորում է Արևելք–Արևմուտք նախագիծը, որի համատեքստում առաջ է քաշել Անդրկասպյան Արևելքն ու Արևմուտքը միացնող Միջին միջանցքի *(“Trans-Caspian East-West Middle Corridor”)* ծրագիրը: Դրա շրջանակներում թուրք-ադրբեջանական երկյակը փորձում է Հայաստանին պարտադրել այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքը»: Կողմերն այն «փաթեթավորել» են Ադրբեջանի ու նրա արևմտյան շրջանների միջև կապեր հաստատելու ձևակերպմամբ և ներկայացնում են որպես տնտեսական շահավետ նախագիծ նաև Հայաստանի համար[27]: Սակայն այս վերջին պնդումը զուրկ է փաստարկներից: Խնդրի ռազմավարական կողմը պայմանավորված է Թուրքիայի և թյուրքախոս պետությունների միջև ուղիղ ցամաքային կապի ստեղծմամբ: Բացի այդ, Թուրքիան և Ադրբեջանը այդ նախագծից կունենան մեծ տնտեսական օգուտներ և կվերահսկեն կարևոր ռազմավարական հանգույցը:

Այլ տնտեսական ոլորտներում ևս Թուրքիայի և Ադրբեջանի միջև

---

[26] Տես *R. Ibrahimov.* Turkish-Azerbaijani Energy Relations: Significant Leverage in the Implementation of the Foreign Policy Interests of Both Countries. “Insight Turkey”, 2015, Vol. 17, N 2:

[27] Տես *D. Can.* The Organization of Turkic States: Implications for the Regional Balance of Power. “Ğüvenlik Stratejileri Dergisi TDT Özel Sayısı”, 2022, PP. 46–66:

կատարվում են ներդրումներ[28], աճել է առևտրաշրջանառությունը, որը 2021 թ. հասել է 5 մլրդ ԱՄՆ-ի դոլար, այն դեպքում, երբ 2016 թ. կազմել է ընդամենը 2,3 մլրդ դոլար[29]: 2022 թ. այդ ցուցանիշը հասել է 6 մլրդ դոլարի, իսկ 2023 թ. առաջին կեսին եղել է 3,9 մլրդ դոլար[30]: Ի տարբերություն ռազմատեխնիկական ոլորտից, այստեղ ինտեգրված կառույցների ձևավորման հարցի քննարկումներ չկան, ինչը գուցե կապված է թուրքական տնտեսության ոչ համաչափ զարգացման և դրանում առկա ճգնաժամների հետ: Մյուս կողմից՝ Ադրբեջանն իր տնտեսական ներուժով ավելի ակտիվ դեր կարող է ստանձնել, քան Թուրքիան:

Կրթության և մշակույթի ոլորտներում թուրք-ադրբեջանական համագործակցությունը նպատակ ունի թյուրքական ինքնությամբ դաստիարակել նոր սերունդ և ստեղծել ընդհանուր արժեքներ ու գաղափարներ: Ներկայումս դա կիրառվում է Արցախի բռնազավթված բնակավայրերի նկատմամբ, մասնավորապես խորհրդանիշ է համարվում Շուշին, որը հայտարարվել է ոչ միայն Ադրբեջանի, այլև թյուրքական աշխարհի մշակութային կենտրոն[31]: Թեև կրթությունն ու մշակույթը պետությունների վարած քաղաքականության մի մասն են, հատկապես՝ «փափուկ ուժի», սակայն դա բավարար չէ դաշինքի ստեղծման համար: Այսպիսով՝ «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի հիմքում դրված են երկկողմ փոխշահավետ համագործակցությունը և ռազմավարական նպատակները:

### «Մեկ ազգ, վեց պետություն». նոր հայեցակարգ ձևավորելու փորձեր

44-օրյա պատերազմից հետո Թուրքիան կրկին առաջ մղեց թյուրքական աշխարհի ձևավորման գաղափար: Այս համատեքստում 2021 թ. Թյուրքական խորհուրդը *(Türk Konseyi)*[*] վերափոխվեց Թյուրքական պետությունների

[28] Տես «Торгово-экономические отношения Турецкой Республики с государствами-участниками СНГ (информационно-аналитическая справка)». М., 2017, с. 9:

[29] Տես *А. Мехтиев.* Назван объем взаимных инвестиций между Азербайджаном и Турцией. «Report информационное агентство», 2 декабря 2022 (https://report.az/ru/biznes/nazvan-obem-vzaimnyh-investicij-mezhdu-azerbajdzhanom-i-turciej/):

[30] Տես *Б. Рустамбеков.* Товарооборот между Азербайджаном и Турцией в I полугодии 2023 года приблизился к $4 млрд – Байрамов. «Интерфакс Азербайджан», 31.07.2023 (https://interfax.az/view/896830):

[31] Տես “The city of Shusha was declared Cultural Capital of the Turkic World 2023” (https:// www.turksoy.org/en-US/news/2022-04-02-the-city-of-shusha-was-declared-cultural-capital-of-the-turkic-world-2023):

[*] Թյուրքական խորհուրդը թյուրքախոս պետությունների գագաթնաժողովների արդյունքն էր և ստեղծվել է 2009 թ.: Այս քայլը փաստեց հաստատութենացման գործընթացի մասին, որի հաջորդ փուլը դարձավ Թյուրքախոս պետությունների կազմակերպության ստեղծումը: Անդամներն են՝ Թուրքիան, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Ուզբեկստանը, դիտորդի կարգավիճակ ունեն Հունգարիան, Թուրքմենստանը և Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը (ավելի հանգամանորեն տես կազմակերպության պաշտոնական կայքէջը՝ “Organization of Turkic States” (https://turkicstates.org)):

կազմակերպության և ընդունվեց «Տեսլական-2040» փաստաթուղթը[32]: Այս քայլով առաջ էր քաշվում թյուրքական ինտեգրման գաղափարը, որի կենսագործման ուղղությամբ ձեռնարկվում են գործնական քայլեր քաղաքական, տնտեսական, մշակութային և անվտանգային ոլորտներում: Ադրբեջանը թուրքական ու թյուրքական այս քաղաքականության առաջնահերթ շահառուն է եղել՝ գերազանցապես ձգտելով ստանալու թյուրքախոս պետությունների աջակցությունն Արցախում պատերազմը վերսկսելու պլանների շրջանակում:

44-օրյա պատերազմի արդյունքները ոչ միայն մեծացրեցին Թուրքիայի հեղինակությունը, այլև ցույց տվեցին «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի կենսունակությունը: Նման պայմաններում Թուրքիան հնարավորություն ստացավ թյուրքախոս մյուս երկրներին Թուրքիա–Ադրբեջան հարաբերությունները ներկայացնելու որպես ընդօրինակման արժանի մոդել կամ նախադեպ:

Թուրքիայի այսպիսի քաղաքականությունը պայմանավորված էր ինչպես Հարավային Կովկասում Ռուսաստանի պասիվությամբ, այնպես էլ 44-օրյա պատերազմի հետևանքով ստատուս-քվոյի փոփոխությամբ: Եվ Թուրքիայի ղեկավարությունն սկսեց օգտագործել «մեկ ազգ, վեց պետություն» ձևակերպումը՝ այն քննարկելով թյուրքական ինտեգրման համատեքստում: Սույն ձևակերպումը նորույթ չէր, այն առաջին անգամ օգտագործել էր Թուրքիայի Հանրապետության 11-րդ Նախագահ Աբդուլլահ Գյուլը 2010 թ. սեպտեմբերի 15–16-ին Ստամբուլում տեղի ունեցած Թյուրքական խորհրդի գագաթնաժողովում: Գյուլը Թուրքիայի և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող դաշնակցային հարաբերությունները բնութագրում է «մեկ ազգ, երկու պետություն» հին կարգախոսով և նշում՝ «մենք այսուհետև մեկ ազգ ենք, բայց նաև վեց պետություն»[33]: Այս շրջանում թուրք-ադրբեջանական հարաբերությունները գտնվում էին ռազմավարական համագործակցության մակարդակում, հետևաբար «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգը հիմնավորված էր: Սակայն այլ էր «մեկ ազգ, վեց պետություն» ձևակերպումը, որը տվյալ ժամանակաշրջանում մյուս թյուրքախոս պետությունների համար այնքան էլ ընկալելի չէր:

«Մեկ ազգ, վեց պետություն» ձևակերպումը թուրքական ղեկավարության ավելի մեծ հավակնությունների վկայությունն է և կապված է եվրասիական տարածաշրջանում գերիշխող դիրք զբաղեցնելու նկրտումների հետ: Վեց թյուրքախոս պետություններն իրենց ավելի քան 150 մլն բնակչությամբ ստեղծում են 1,1 տրիլիոն ԱՄՆ-ի դոլար կազմող ընդհանուր համախառն ներքին արդյունք[34]: Եթե դիտարկենք այդ երկրների աշխարհագրա-

[32] Տես “Turkic World Vision-2040” (https://turkicstates.org/assets/pdf/haberler/turkic-world-vision-2040-2396-97.pdf):

[33] Տես *Giorgi Lomsadze.* Turkic Ambitions: One Nation, Six States. “Eurasianet”, 17 September 2010 (https://eurasianet.org/turkic-ambitions-one-nation-six-states):

[34] Տես *Y. Aydin.* One nation, six states? “Qantara.de”, 20.04.2022 (https://qantara.de/en/article/turkey-and-central-asia-one-nation-six-states):

կան դիրքը և էներգետիկ ռեսուրսների պաշարները, ապա միասնաբար հանդես գալու դեպքում նրանք կարող են ռազմավարական տեսանկյունից Եվրասիայում խաղալ բավական ծանրակշիռ դեր:

Թուրքական ԶԼՄ-ներում և տարբեր պաշտոնյաների եզրույթներում գնալով ավելի լայն կիրառություն են ստանում «մեկ ազգ, վեց պետություն» և «մեկ ազգ, երեք պետություն» ձևակերպումները[35], որոնք փորձ է արվում ներկայացնելու որպես «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի զուգահեռներ[*]: Ըստ էության, դա հետապնդում է հեռամետ նպատակ՝ այդ ձևակերպումները ևս վերածելու հայեցակարգի և դնելու Թուրքիայի ու Կենտրոնական Ասիայի թյուրքախոս պետությունների հարաբերությունների խորացման հիմքում: Սակայն այս քաղաքականությունը չունի այն ներուժը, որն առկա է Թուրքիայի և Ադրբեջանի հարաբերություններում: Կարելի է նշել հետևյալ դիտարկումները.

*Առաջին.* ընդհանուր թշնամի և վտանգ (սպառնալիք) չլինելը: Փաստացի Ադրբեջանը Հայաստանին համարում էր իր տարածքային ամբողջականության համար սպառնալիք, իսկ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարևոր գործոն դարձավ թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցության համար: Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս երկրների դեպքում նման սպառնալիք կամ ընդհանուր թշնամու կերպար գոյություն չունեն: Թեև թուրք-ադրբեջանական երկյակը նախորդ տասնամյակներում փորձել է ձևավորել թյուրքախոս պետությունների մասնակցությամբ ընդհանուր հակահայկական ճակատ, սակայն այդ պետությունների գերակշիռ մասը պահպանել է չեզոքություն կամ բավարարվել բառային աջակցությամբ: Այն հանգամանքը, որ նրանք չունեն ընդհանուր անվտանգային մարտահրավերներ կամ սպառնալիքներ, կարելի է համարել հիմնական գործոն, որը կխոչընդոտի «մեկ ազգ, վեց պետություն» ռեալ հայեցակարգի ձևավորմանը:

*Երկրորդ.* համատեղ ռազմավարական նախագծեր չլինելու հանգամանքը: Թուրքիան զգալի ներդրումներ է կատարել Կենտրոնական Ասիայում, թյուրքախոս երկրների հետ հաջողությամբ զարգացնում է առևտրատնտեսական հարաբերություններ, սակայն դա հեռու է տնտեսական ազդեցության հաստատումից: Ավելին. Թուրքիան այս հարցում զիջում է Չինաստանին, Ռուսաստանին, ԵՄ-ին. էներգետիկ ռեսուրսների արդյունահանմանը և

---

[35] Տես "Erdoğan: 6 devlet tek millet olmayı arzu ediyoruz", 15.10.2019 (https://twitter.com/t24comtr/status/1184034944185753605?lang=en); *Ayşe Şimşek, Muhammed Enes Ertaş.* 6 Devlet 1 Millet: Toprağımız, yurdumuz, ilimiz bir. "TRT Haber", 16.02.2022 (https://www.trthaber.com/haber/dunya/6-devlet-1-millet-topragimiz-yurdumuz-ilimiz-bir-655286.html):

[*] Որոշակի շրջանառում է ստանում նաև «3 պետություն, մեկ ազգ» ձևակերպումը, նկատի ունենալով Թուրքիան, Ադրբեջանը և միջազգային հանրության կողմից չճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը (տես "3 Devlet Tek Millet!" (https://www.youtube.com/watch?v=g1PkzR8yfxM)):

արտահանմանը նրա մասնակցությունը չնչին է, հետևաբար այստեղ ևս չկան ընդհանուր ռազմավարական շահեր կամ դրանք դեռևս չեն ձևավորվել:

*Երրորդ.* աշխարհաքաղաքականության գործոնը: Թուրքիան Կենտրոնական Ասիայում ստիպված է հաշվի նստել իր մրցակիցների հնարավորությունների հետ: Եթե Հարավային Կովկասում Թուրքիայի հիմնական մրցակիցները Ռուսաստանն ու Իրանն են, ապա Կենտրոնական Ասիայում, բացի Ռուսաստանից, նա ստիպված է պայքարել առաջին հերթին Չինաստանի ազդեցության դեմ: Մյուս կողմից՝ Ադրբեջանը Թուրքիային համարում է վստահելի դաշնակից, իսկ թյուրքախոս երկրները, զարգացնելով Թուրքիայի հետ բազմակողմանի համագործակցություն, նրան ամենևին էլ չեն համարում միակ վստահելի դաշնակիցը, քանի որ առկա անվտանգային խնդիրների դեպքում (ահաբեկչության և արմատական իսլամի վտանգները) Թուրքիան հազիվ թե կարողանա իրական աջակցություն ցույց տալ նրանց:

Այսպիսով՝ Թուրքիա–Ադրբեջան հարաբերություններում առկա հիմքերը, որոնք նպաստեցին «մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի ձևավորմանը, չկան կամ սահմանափակ են Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքախոս երկրների միջև հարաբերություններում, հետևաբար ներկա պայմաններում «մեկ ազգ, վեց պետություն» ձևակերպումը կենսագործելի հայեցակարգի վերածելու հավանականությունը վիճահարույց է:

**Եզրակացություն**

Եվ այսպես. «Սառը պատերազմի» ավարտից հետո Թուրքիայի ազգային ռազմավարություններում ներառվեցին Հարավային Կովկասը ու Կենտրոնական Ասիան և այս համատեքստում հատուկ տեղ հատկացվեց Ադրբեջանին: Վերջինս, պայմանավորված Արցախյան պատերազմում պարտությամբ, ի դեմս Թուրքիայի ձեռք բերեց դաշնակցի: Այս հիմքերով սկսվեց թուրք-ադրբեջանական համագործակցությունը, որը կարճ ժամանակ անց ստացավ ռազմավարական, ապա և դաշնակցային բնույթ: Իսկ էրդողանի առաջ քաշած «թուրքակենտրոնությունը» բազմաքայլ ռազմավարություն է, որի առաջին քայլը ենթադրում է Ադրբեջանի հետ ինտեգրված միավորի ստեղծում, ապա հիշյալ մոդելի տարածում նաև Կենտրոնական Ասիայում:

«Մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգը, իր հիմքում ունենալով թյուրքականության գաղափարը, իրականում ներկայացնում է Թուրքիա–Ադրբեջան համագործակցության բանաձևը՝ խարսխված ընդհանուր շահերի վրա: Այստեղից են բխում ռազմատեխնիկական, տնտեսական և կրթամշակութային համագործակցության հիմքերը, որոնք հատկապես Շուշիի հռչակագրի ստորագրումից հետո ներկայացնում են պրագմատիկ դաշինքի ստեղծման հնարավորությունը:

«Մեկ ազգ, երկու պետություն» հայեցակարգի կենսունակության վրա հենվելով՝ Թուրքիան փորձում է ձևավորել մեկ այլ՝ ավելի հավակնոտ, հայեցակարգ, ինչպիսին է «մեկ ազգ, վեց պետություն» բանաձևը, որը Կենտրոնական Ասիայում դեռևս լիարժեք արձագանք չի ստացել: Թուրքիան կենտրոնասիական թյուրքախոս երկրների հետ հարաբերություններում

առայժմ չի ձևավորել ընդհանուր շահերի և ռազմավարական նպատակների համախումբ, որն առկա է Ադրբեջանի դեպքում, հետևաբար «մեկ ազգ, վեց պետություն» ձևակերպումը տեսանելի ապագայում հայեցակարգի վերածելու հնարավորությունները մեծ չեն:

# КОНЦЕПЦИЯ «ОДНА НАЦИЯ–ДВА ГОСУДАРСТВА» В ТУРЕЦКО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЯХ

*Н. А. МИНАСЯН, кандидат исторических наук, доцент, научный сотрудник Отдела стратегических исследований сопредельных с Арменией государств и стран ближнего зарубежья Института арменоведческих исследований ЕГУ*

РЕЗЮМЕ

Турция установила отношения с Азербайджаном сразу после распада СССР и наладила сотрудничество в различных сферах. В годы правления Г. Алиева турецко-азербайджанские отношения переросли в прагматическое сотрудничество, охарактеризованное им концептуальной формулировкой «одна нация – два государства». В дальнейшем укрепление этих отношений основывалось на общности стратегических интересов обоих государств в геополитической, геоэкономической, безопасностной, военной и военно-технической, культурно-образовательной и других сферах, в то время как концепция «одна нация – два государства» обеспечивала идейно-ценностную базу развития этих отношений.

Сама концепция «одна нация – два государства» выстраивалась на этническом, историческом, политическом и культурном базисе, закладывавшемся в период общения младотурок и кемалистов с начинавшими формироваться в нацию полукочевыми племенами восточных областей Южного Кавказа в начале 20-го века. С политической точки зрения важную роль играла общность восприятия взаимных интересов. В случае с Азербайджаном это произошло благодаря оказанию ему Турцией дипломатической, а затем и военной поддержки в Карабахском конфликте, а для Турции Азербайджан должен был сыграть ключевую роль в ее стремлении к распространению своего влияния на Южный Кавказ.

Немаловажную роль в перерастании прагматического сотрудничества в тесные союзнические отношения сыграла и их взаимная заинтересованность в поставках азербайджанских углеводородов и в обеспечении транзита центральноазиатских энергоносителей в Европу.

Наряду с этим Турцией была выдвинута идея тюркской интеграции. В данном контексте предпринимается попытка идеологической локализации концепции «одна нация – два государства» в тюркском интеграционном процессе с вовлечением тюркоязычных государств

Центральной Азии. Интеграция затрагивает три основных направления: военно-техническое, экономическое и культурно-образовательное.

Однако достижение успеха в осуществлении данной концепции на ближайшую перспективу представляется маловероятным.

## THE CONCEPT OF "ONE NATION, TWO STATES" IN THE TURKISH-AZERBAIJANI RELATIONS

*N. A. MINASYAN, PhD in History, Associate Professor, Researcher, Department, Strategic Studies of Armenia's Neighboring and Near Abroad States, Institute for Armenian Studies, YSU*

SUMMARY

Turkey established relations with Azerbaijan immediately after the collapse of the USSR and built cooperation in various spheres. Turkish-Azerbaijani relations evolved into pragmatic cooperation under the administration of Heydar Aliyev, who described them by the concept statement of “one nation, two states”. Further, the strengthening of those relations rested on common strategic interests of both states in geopolitical, geo-economic, security, military and military-technical, cultural and educational, and other spheres, while the concept of “One nation, two states” provided ideological and value base for the development of those relations.

The “one nation, two states” concept itself was being built on the ethnic, historical, political and cultural foundation, established in the period of the early $20^{th}$ century communication of the Young Turks and Kemalists with the semi-nomadic tribes in the eastern regions of the South Caucasus, newly forming into a nation. From the political viewpoint, a significant role was played by the common perception of mutual interests. In case of Azerbaijan, this took place due to Turkey’s provision of diplomatic and then also of military support to Azerbaijan in the Karabakh Conflict, while Azerbaijan had to play a key role in Turkey’s strive to spread its influence in the South Caucasus.

The mutual concern in the supply of Azerbaijani hydrocarbon and the provision of Central Asian energy carriers’ transit into Europe has played an important role in the evolution of pragmatic cooperation into close allied relations.

Along with this, Turkey initiated the idea of Turkic integration. In this context, an attempt is made to ideologically localize the “One nation, two states” concept in the Turkic integration process with the involvement of Turkic-speaking states of Central Asia. Integration covers three main areas: military-technical, economic and cultural-educational.

Nevertheless, it deems rather unlikely that this very concept will be successfully realized in the nearest perspective.

# ԱՐՏԱՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ «ՈՒԺԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

*Ռ. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի ավագ գիտնական-վերլուծաբան, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող*



**Նախաբան**

2020 թ. Արցախյան պատերազմից և ռուս-ուկրաինական ռազմական գործողությունների մեկնարկից հետո Հարավային Կովկասի աշխարհառազմավարական պատկերը ենթարկվում է էական փոփոխությունների: Ուկրաինական ճգնաժամի խորացման պայմաններում Հարավային Կովկասը ձեռք է բերում կարևոր նշանակություն՝ «Հյուսիս–Հարավ» և «Արևելք–Արևմուտք» ուղղություններով ռազմավարական տնտեսական միջանցքի վերածվելու մեծ հավանականությամբ: Տարածաշրջանը թևակոխում է ռազմավարական մրցակցության բարդ փուլաշրջան՝ համընդհանուր աշխարհաքաղաքական գործընթացներից անվտանգության ոլորտում կախվածության և խոցելիության մեծացմամբ, ինչը նոր անվտանգային սպառնալիքներ է ստեղծում Հարավային Կովկասում ուժերի հաշվեկշռի վերականգնման և անվտանգության համակարգի վերակառուցման համար:

2020 թ. Արցախյան պատերազմից հետո Հարավային Կովկասի խաթարված անվտանգային համակարգի վերակառուցման գործում էականորեն մեծանում է տարածաշրջանում կենսական շահեր ունեցող «ուժային կենտրոնների» (այսուհետև՝ տարածաշրջանային «ուժային կենտրոններ»)՝ Ռուսաստանի, Իրանի և Թուրքիայի դերը: Տարածաշրջանում ուժային հաշվեկշռի փոփոխությունները սկսում են հիմնականում պայմանավորվել նրանց միջև ձևավորվող մրցակցային և համագործակցային հարաբերություններով: 2020 թ. Արցախյան պատերազմից հետո Հարավային Կովկասում արտատարածաշրջանային «ուժային կենտրոնների» աշխարհաքաղաքական դերի նվազեցման նպատակով այս պետությունները փորձեցին առաջ մղել տարածաշրջանային հարցերի քննարկման համար նախատեսվող խորհրդատվական մարմնի ստեղծման գաղափարը (հայտնի է «3+3» անվանմամբ):

---

* Հոդվածը նախնական տարբերակով ստացվել է 27.06.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 27.10.2023:

Պայմանավորված ռուս-ուկրաինական զինված հակամարտության մեկնարկով՝ Արևմուտքը Ռուսաստանին զսպելու նպատակով նաև ակտիվացրեց հարավկովկասյան գործընթացներում իր ներգրավվածությունը, ինչով էլ կարճաժամկետ հեռանկարում կանխվեցին «3+3»-ի շրջանակներում տարածաշրջանային հակամարտությունների կառավարման փորձերը:

Արևմուտք–Ռուսաստան հակասությունների խորացումից հետո Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը չեն դադարել Հարավային Կովկասը համարել իրենց կենսական շահերի տիրույթում գտնվող տարածաշրջան: Ավելին. ռուս-ուկրաինական զինված հակամարտությունից հետո նրանց ռազմավարական համագործակցության հարավկովկասյան ուղղության կարևորությունն ավելի է մեծացել, ընդսմին տարբեր աշխարհաքաղաքական խնդիրների լուծման վերաբերյալ նրանք ձեռք են բերել մի շարք ռազմավարական նշանակություն ունեցող պայմանավորվածություններ:

Ռուսաստանի համար նորովի են արժեքավորվում Թուրքիայի և Իրանի հետ ռազմավարական համագործակցության խորացումը, ինչպես նաև «Հյուսիս–Հարավ» միջազգային տնտեսական միջանցքով Պարսից ծոցի նավահանգիստներ դուրս գալու հնարավորությունը: Այդ համատեքստում Ռուսաստանի և Իրանի համար շարունակելու է առաջնահերթություն համարվել Հարավային Կովկասում արտատարածաշրջանային ուժային կենտրոնների ազդեցության մեծացման զսպումը:

Հարավային Կովկասում արտատարածաշրջանային ուժային կենտրոնները՝ ԱՄՆ-ը, ԵՄ-ը, Չինաստանը, Հնդկաստանը, տարածաշրջանում չունեն կենսական նշանակություն ներկայացնող անվտանգային շահեր: Այստեղ նրանց ազդեցության մեծացումը որոշակիորեն հակակշռում է տարածաշրջանային «ուժային կենտրոնների» ազդեցությանը և կանխում մերձավորարևելյան հակամարտությունների կառավարման գործող ձևաչափերն իրենց հարմարեցնելու նրանց փորձերը: Միևնույն ժամանակ, Հարավային Կովկասում արտատարածաշրջանային «ուժային կենտրոնների» քաղաքականության ակտիվացման շնորհիվ Հայաստանն ստանում է տարաշարժի և իր աշխարհաքաղաքական ինքնուրույնությունը պահպանելու նոր հնարավորություններ: Ուստի անհրաժեշտ է դառնում նորովի գնահատել ու իմաստավորել Հարավային Կովկասում արտատարածաշրջանային «ուժային կենտրոնների» քաղաքականության փոփոխությունները:

**Ամերիկայի Միացյալ Նահանգներ:** Ուկրաինական ճգնաժամով պայմանավորված՝ ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականությունում նկատվում են որոշակի փոփոխություններ: Հարավային Կովկասում ռուս-թուրքական և ռուս-իրանական համագործակցության խորացումը հանգեցնում է «եվրասիականության» գաղափարի առաջմղմանը, ինչը հակասում է Ռուսաստանին զսպելու ԱՄՆ-ի ռազմավարությանը: 2022 թ. ԱՄՆ-ի «Ազգային անվտանգության ռազմավարություն»-ում նշվում է, որ ԱՄՆ-ը Ուկրաինայում Ռուսաստանին ռազմավարական ձախողման ենթարկելու նպատակով աջակցելու է Ռուսաստանի դեմ ուղղված տնտեսական, քաղաքական

ճնշումներին և փորձելու է դիմագրավել Ռուսաստանի քաղաքականությանը՝ նպատակաուղղված ինքնիշխան պետությունների ու բազմակողմ միջազգային հաստատությունների թուլացմանը[1]: Ռուս-ուկրաինական զինված հակամարտության մեկնարկից հետո ԱՄՆ-ը անվերապահորեն աջակցում է Արևելյան Եվրոպայի պետությունների հակառուսական քաղաքականությանը և Ռուսաստանին զսպելու նպատակով ձգտում է սահմանափակելու էներգետիկ ոլորտից ստացվող նրա եկամուտները, ՆԱՏՕ-ի ընդլայնմամբ ներքաշելու սպառազինությունների թանկ մրցավազքի մեջ, Ռուսաստանի հետ գործընկերային և դաշնակցային հարաբերություններ ունեցող պետություններում սահմանափակելու Ռուսաստանի ազդեցությունը: Ուստի, եթե Ռուսաստանը շարունակի փորձել եվրասիականության գաղափարների առաջմղմամբ խուսափել համընդհանուր մեկուսացումից և պահպանի միջազգային հարաբերությունների առանձին բևեռ մնալու ձգտումները, ապա ԱՄՆ-ը ՆԱՏՕ-ի եվրոպական դաշնակիցների հետ փորձելու է հնարավորինս սահմանափակել Ռուսաստանի որդեգրած ռազմավարության կենսագործումը:

ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականության վերլուծության համար կարևոր է հասկանալ, թե ո՞ր մեծ անվտանգային տիրույթում է ԱՄՆ-ը դիտում Հարավային Կովկասը: 2000-ական թվականների սկզբին Բ. Բուզանը և Օ. Ուեյվերը, տարածաշրջանային անվտանգության միջավայրի տեսությունը դիտարկելով հետսառըպատերազմյան աշխարհակարգի համատեքստում, Հարավային Կովկասը համարում են հետխորհրդային տարածաշրջանային անվտանգության միջավայրում ներառված փոքր համալիր[2]: ԱՄՆ-ի հեգեմոնության սկզբունքի վրա 2000-ական թվականների սկզբին կառուցվող աշխարհակարգում ԱՄՆ-ը Հարավային Կովկասը նույնպես դիտում էր հետխորհրդային աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում, սակայն ուկրաինական ճգնաժամը որոշակի փոփոխություններ մտցրեց ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության մեջ:

ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականությունը մշտապես պայմանավորված է եղել ԱՄՆ–Ռուսաստան՝ տվյալ պահին առկա հարաբերությունների բնույթով: Եթե 1990-ական թթ. ՌԴ-ի հետ կառուցողական հարաբերությունները լուրջ կերպով ազդել են նրա հարավկովկասյան քաղաքականության վրա՝ այն դարձնելով պասիվ, ապա 2000-ական թթ. սկզբին հարաբերություններում լարվածության աստիճանական ուժգնացումը հանգեցրել է հետխորհրդային պետությունների նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականության վերանայմանը. Ռուսաստանին զսպելու քաղաքականության մեջ ԱՄՆ-ն ավելի ակտիվացրել է նաև հարավկովկասյան ուղղությունը:

---

[1] Տես “National Security Strategy”. The White House. Washington, October 2022, P. 25 (https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/11/8-November-Combined-PDF-for-Upload.pdf):

[2] Տես *B. Buzan, O. Wæver.* Regions and Powers: The Structure of International Security. Cambridge University Press, 2003, PP. 420–423:

Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականության պասիվությունը մեծապես պայմանավորված էր նաև համաշխարհային քաղաքական զարգացումներում նրա ներգրավվածության թուլացմամբ: Դեպի բազմակենտրոնություն միտված աշխարհակարգում ԱՄՆ-ը վերանայում է Եվրոպայում, Հյուսիսարևելյան Ասիայում և Պարսից ծոցում իր ռազմաքաղաքական ազդեցության հարցը՝ նախապատվություն տալով ոչ թե իր անմիջական ռազմական ներկայության պահպանմանը, այլ տարածաշրջանային պետությունների պաշտպանական կարողությունների զարգացման խրախուսմանը[3]: Հարավային Կովկասը ևս՝ որպես աշխարհառազմավարական տարածաշրջան, բացառություն չէ: Ուստի ԱՄՆ-ը, հաշվի առնելով ուկրաինական հակամարտության իրողությունները, փորձում է հնարավորինս նպաստել Ռուսաստանի զսպմանը նպատակաուղղված ԵՄ-ի քաղաքականության ակտիվացմանը, ինչը դրսևորվում է նաև Հարավային Կովկասում ԵՄ-ի ներգրավվածության մեծացմամբ:

Ռուս-ուկրաինական զինված հակամարտության մեկնարկից հետո ԱՄՆ-ն սկսել է հարավկովկասյան տարածաշրջանը դիտել Արևելյան Եվրոպայի անվտանգային տիրույթում: Դա փաստում է նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն 2017 թ. Թրամպի վարչակազմի «Ազգային անվտանգության ռազմավարություն»-ից, Բայդենի վարչակազմը 2022 թ. ռազմավարության մեջ հիշատակում է նաև հարավկովկասյան հակամարտությունների լուծմանն ուղղված դիվանագիտական ջանքերի ակտիվացման անհրաժեշտությունը[4]: Քաղաքականության փոփոխման հիմնական նպատակը բխում է Արևմուտք–Ռուսաստան ռազմավարական հակասությունների խորացումից, հարավկովկասյան հակամարտություններում Ռուսաստանի ռազմավարական միջնորդական դիրքերի թուլացումից և տարածաշրջանի հաղորդակցային ուղիների ռազմավարական նշանակության մեծացումից:

Ըստ տարբեր վերլուծությունների՝ ԱՄՆ–Ռուսաստան մրցակցության հիմնական թատերաբեմը ԵՄ-ի «Արևելյան գործընկերության» պետություններն են, և ռուս-ուկրաինական հակամարտության մեկնարկով այդ մրցակցությունը, ինչպես և կանխատեսվում էր, ավելի է սրվում[5]: Արևմուտք–Ռուսաստան հարաբերություններում նոր լարումները չեն կարող չազդել նաև հարավկովկասյան տարածաշրջանի պետությունների անվտանգության համակարգերի վրա: Հարավային Կովկասում չունենալով կենսական անվտանգային շահեր՝ ԱՄՆ-ն իր քաղաքականությունը պայմանավորում է ոչ թե առանձին պետությունների ռազմական անվտանգության ապահովման երաշխիքների տրամադրմամբ, այլ պետությունների սուբյեկտայնության

---

[3] Տես *J. J. Mearsheimer, S. M. Walt.* The Case for Offshore Balancing: A Superior U.S. Grand Strategy. “Foreign Affairs”, July/August 2016, Vol. 95, N 4:

[4] Տես “National Security Strategy”, October 2022, P. 39 (https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/11/8-November-Combined-PDF-for-Upload.pdf):

[5] Տես *S. Pezard.* U.S. Strategic Competition with Russia. A RAND Research Primer, January 2022, P. 4 (https://www.rand.org/content/dam/rand/pubs/perspectives/PEA200/PEA290-2/RAND_PEA290-2.pdf):

բարձրացմանը, քաղաքական հաստատությունների կայացմանը, Ռուսաստանից նրանց տնտեսական, սոցիալական, էներգետիկ անկախությանը նպաստելու սկզբունքով:

2020 թ. Արցախյան պատերազմից և ուկրաինական ճգնաժամի խորացումից հետո հարավկովկասյան պետությունների հետ ԱՄՆ-ի երկկողմ հարաբերությունների սերտացումը միտված է տարածաշրջանում Արևմուտքի քաղաքական դերի նվազումը կանխելուն: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ուկրաինական հակամարտության հետևանքով Հարավային Կովկասի հաղորդակցային նշանակությունն առանձնակի կերպով աճել է թե՛ Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, թե՛ Չինաստանի, Հնդկաստանի համար: Ուստի տարածաշրջանում Արևմուտքի դերի նվազման «թույլատրումը» կհանգեցնի տարածաշրջանային «ուժային կենտրոնների» դերի էական մեծացման և երկարաժամկետ հեռանկարում հող կնախապատրաստի սևծովյան-կասպյան տարածաշրջանից Արևմուտքի վերջնական դուրսմղման համար:

Հարավային Կովկասում ստեղծված անվտանգային վակուումը, մասնավորապես՝ ռուսաստանյան գործոնի թուլացման պայմաններում, և Իրանի գործոնի ուժեղացման հեռանկարները նույնպես չեն բխում ԱՄՆ-ի շահերից: Ուստի ԱՄՆ-ի հարավկովկասյան քաղաքականության հիմքում, ի հակակշիռ Ռուսաստան–Թուրքիա–Իրան համագործակցության խորացման, լինելու է տարածաշրջանային պետությունների և արևմտյան կառույցների համագործակցության հնարավորինս խթանումը:

**Եվրոպական միություն:** 2020 թ. Արցախյան պատերազմը և ուկրաինական ճգնաժամը անմիջականորեն ազդեցին նաև ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության վրա: Ռուս-ուկրաինական հակամարտության ընթացքը և դրա համաեվրոպական հետևանքները նկատի առնելով՝ ԵՄ-ն սկսել է Ֆրանսիայի և Գերմանիայի գլխավորությամբ ակտիվացնել իր միջնորդական ջանքերը հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործում: Ուկրաինական ճակատում Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիրքերի թուլացման նպատակով ԵՄ-ն ԱՄՆ-ի աջակցությամբ փորձում է մարտահրավեր նետել Հարավային Կովկասում նրա ազդեցության մեծացմանը՝ վիճարկելով հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործում Ռուսաստանին «վերապահված» բացառիկ միջնորդ լինելու «իրավունքը»: ԵՄ-ը նաև ձգտում է, որ լիովին դուրս չմնա Հարավային Կովկասում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների «կառավարման» գործից, որպեսզի նրա անվտանգության ապահովումը ամբողջությամբ չդառնա զուտ Ռուսաստան–Թուրքիա–Իրան համագործակցության խնդիրը:

Ռուսաստանին զսպելու ԵՄ-ի քաղաքականությունն արտացոլված է 2022 թ. ԵՄ-ի «Ռազմավարական կողմնացույց» կոչվող պաշտպանական ռազմավարության մեջ, որտեղ առաջին անգամ Ռուսաստանի գործողությունները որակվում են որպես սպառնալիք[6]: Ուկրաինական ճգնաժամը ԵՄ-

[6] Տես “A Strategic Compass for Security and Defence - For a European Union that

ին ստիպում է մեծացնել իր անվտանգային ծախսերը և առաջնային դեր ստանձնել Ռուսաստանին զսպելու գործում: Փաստաթղթի ընդունումը կատարելապես փոխում է ԵՄ-ի միջազգային ընկալումները, և նա հավակնում է «տնտեսական ուժային կենտրոնից» վերածվելու «պաշտպանական միության»:

Հարավային Կովկասը՝ որպես աշխարհառազմավարական տարածաշրջան, ԵՄ-ի համար կարևոր նշանակություն է ունեցել նրա հարավարևելյան սահմանների մերձակայքում քաղաքական, տնտեսական և սոցիալական անվտանգ միջավայրի ստեղծման տեսակետից: ԵՄ-ի տարածաշրջանային քաղաքականության մեջ մշտապես կարևորվել է Հարավային Կովկասի՝ որպես Եվրոպայի հետ Կասպյան տարածաշրջանն ու Կենտրոնական Ասիան միացնող էներգետիկ, տրանսպորտային և հաղորդակցային միջանցքի ռազմավարական նշանակությունը[7]: Այդ իսկ պատճառով, Արևմուտք–Ռուսաստան հարաբերությունների ծայրահեղ լարվածության պայմաններում, 2022 թ. հուլիսին և դեկտեմբերին ստորագրվել են էներգետիկ ոլորտում ԵՄ-ի և Ադրբեջանի ռազմավարական գործընկերության պայմանագրեր: Ըստ այդմ Ադրբեջանը ձգտելու է էներգակիրներ արտահանող պետությունից վերածվելու Կասպյան տարածաշրջանի ու Կենտրոնական Ասիայի էներգետիկ ռեսուրսների փոխադրման խոշոր տարանցիկ պետության: Տվյալ համատեքստում Ադրբեջանը փորձում է հնարավորինս արագ հասնել պատերազմի արդյունքների իրավական կապիտալացմանը և «միջանցքի» ձեռքբերմանը, ինչը, ըստ Ադրբեջանի, կապահովի տարածաշրջանում տնտեսական կայունության հաստատում՝ դեպի Եվրոպա նոր խողովակաշարերի և էլեկտրահաղորդակցման ցանցերի կառուցման համար: Այնուամենայնիվ, ԵՄ-ի ռազմավարական շահերին հակասում է տարածաշրջանում Ռուսաստանի վերահսկողությամբ հաղորդակցային ուղիների կառուցումը, ինչը էականորեն կմեծացնի Հարավային Կովկասում նրա դերը, կամրապնդի Ռուսաստան–Թուրքիա–Ադրբեջան համագործակցությունը, ինչպես նաև կտա նոր լծակներ՝ «Արևելք–Արևմուտք» հաղորդակցուղիներում զգալի ազդեցություն ձեռք բերելու համար:

Հարավային Կովկասի հետպատերազմյան տարածաշրջանում ԵՄ-ի համար մտահոգության պատճառ է նաև Վրաստանի եվրաինտեգրման ապագան: Զուտ տարածաշրջանային «ուժային կենտրոնների» պայմանավորվածությունների շրջանակներում հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը երկարաժամկետ հեռանկարում անխուսափելիորեն

protects its citizens, values and interests and contributes to international peace and security”. Brussels, 21 March 2022 (https://data.consilium.europa.eu/doc/document/ST-7371-2022-INIT/en/pdf):

[7] Տես “The need for an EU strategy for the South Caucasus (P7_TA(2010)0193)”. European Parliament resolution of 20 May 2010 on the need for an EU strategy for the South Caucasus (2009/2216(INI)) (http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A52010IP0193):

կիանգեցնի նաև Վրաստանում արևմտյան կառույցների դերի նվազմանը, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգային հարցերում վրացական կողմի ռուսաստանյան շահերի ներկայացվածության իրավաչափության՝ Վրաստանի անվերապահ ճանաչմանը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ռուս-վրացական քաղաքական հարաբերությունների հակամարտային բնույթի պայմաններում երկկողմ տնտեսական գործակցությունը, առևտրաշրջանառությունը, տնտեսական հաղորդակցության ուղիների արդիականացման գործընթացները գնալով ակտիվանում են: ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականությունը չակտիվացնելու դեպքում Հարավային Կովկասում տարածաշրջանայնության (ռեգիոնալիզմի) միտումների ուժգնացումը, ռուս-վրացական տնտեսական հարաբերությունների զարգացումը, Վրաստանին ռազմական անվտանգության ապահովման երաշխիքների տրամադրման գործում Արևմուտքի պասիվ քաղաքականությունը կարող են Արևմուտքի համար ունենալ անդառնալի հետևանքներ: Իսկ այս պարագայում ԵՄ-ի համար կարող է վերանալ Վրաստանի՝ որպես Հարավային Կովկասում ազդեցության տարածման գլխավոր հենարանի դերը:

ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության ակտիվացման կարևոր ցուցիչ կարելի է համարել Հայաստանում նրա արտաքին հարաբերությունների խորհրդի Քաղաքացիական առաքելություն հիմնելու վերաբերյալ 2023 թ. փետրվարի որոշումը: Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակի թելադրանքով՝ ԵՄ-ը Ռուսաստանի դերը թուլացնելու և Ադրբեջանին հնարավորինս «կառավարելի» դարձնելու նպատակով փորձում է իր ազդեցությունը ընդլայնել Վրաստանից դեպի Հայաստան: Ըստ այդմ Առաքելության նպատակն է տարածաշրջանային խաղաղությանն աջակցելու, հայադրբեջանական շփման գծում փոխվստահություն ձևավորելու, տարածաշրջանում Արևմուտքի քաղաքական ազդեցության տարածմանը նպաստելու ուղղությամբ ԵՄ-ի ջանքերի մեծացումը[8]: ԵՄ-ի Առաքելությունը քաղաքական առումով նոր հնարավորություններ է ստեղծում Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական ագրեսիայի ժամանակավոր կանխման համար, քանի որ Ադրբեջանը էներգառեսուրսների արտահանման գործում վերջին տարիներին ԵՄ-ից որոշակի տնտեսական կախման մեջ է հայտնվել և տվել է Հայաստանում տեղակայված Առաքելության աշխատանքներին չխոչընդոտելու քաղաքական համաձայնություն[9]:

---

[8] Տես “EU Mission in Armenia (EUMA)”. An official website of the European Union, 28.02.2023 (https://www.eeas.europa.eu/euma/eu-mission-armenia-euma_en?s=410283):

[9] Տես “Statement following quadrilateral meeting between President Aliyev, Prime Minister Pashinyan, President Macron and President Michel, 6 October 2022”. Official website of the Council of the EU and the European Council, 7 October 2022 (https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/10/07/statement-following-quadrilateral-meeting-between-president-aliyev-prime-minister-pashinyan-president-macron-and-president-michel-6-october-2022/):

ԵՄ-ի Առաքելությունը չի կարող լիարժեք կերպով ծառայել հայ-ադրբեջանական սահմանային կայունության ապահովման նպատակին, քանի որ մշտադննման աշխատանքները կատարվում են միայն հայկական կողմում, ինչը հանգեցնելու է ոչ այնքան սահմանային կայունության հաստատմանը, որքան Հարավային Կովկասում ԵՄ-ի քաղաքական դերի մեծացմանը: ԵՄ-ի Քաղաքացիական առաքելությունն ունի սահմանափակ մանդատ և ներկայացվածություն, ինչը հնարավորություն չի տալիս լիովին մշտադննելու սահմանային միջադեպերը: Ուստի եթե ապագայում ԵՄ-ի Առաքելությունը քաղաքացիականից վերածվի ռազմականի, ապա Հայաստանը լուրջ անվտանգային խնդիրներ կստեղծի Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերություններում: Ե՛վ Իրանը, և՛ Ռուսաստանը խիստ բացասաբար են վերաբերվում Հարավային Կովկասում արտատարածաշրջանային «ուժային կենտրոնների» ներկայությանը (հատկապես՝ ռազմական): Քանի որ գոյություն ունի նաև Հայաստան-Ռուսաստան սահմանային ծառայության մասին պայմանագիր և ռուսական սահմանապահները նաև որոշակիորեն ներկա են հայ-ադրբեջանական սահմանում, ապա գոյաբանության տեսակետից անհրաժեշտ է, որ Հայաստանը չդառնա, մի կողմից, Արևմուտքի և, մյուս կողմից, Ռուսաստանի ու Իրանի միջև մեծամասշտաբ ռազմական հակամարտության օբյեկտ:

**Չինաստան:** Չինաստանի արտաքին քաղաքականության հարավկովկասյան ուղղության կարևորությունը գերազանցապես կապված է տարածաշրջանի հաղորդակցային նշանակության մեծացման հետ, քանի որ նրա արտաքին քաղաքականության առանցքը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության իրագործումն է: Այդ նախաձեռնությունը Սի Ցինպինի «Մեծ երկրի դիվանագիտություն» ռազմավարության առանցքային բաղադրիչն է, որը Չինաստանին թելադրում է աշխարհում տեղի ունեցող քաղաքական գործընթացներում ստանձնել իր աճող հզորությանը համահունչ ավելի մեծ առաջնորդող դեր[10]: Ուստի այն հանգամանքը, որ Հարավային Կովկասը գտնվում է Չինաստանի և Եվրոպայի միջև, ինչի շնորհիվ աճում է տարածաշրջանի աշխարհառազմավարական նշանակությունը, որ հաղորդակցային ուղիների ապաշրջափակումն ակտիվանում է, արևելաեվրոպական երթուղիների վրա սահմանվում են նոր սահմանափակումներ, տարածաշրջանի անվտանգային հաշվեկշռում տեղի են ունենում դինամիկ փոփոխություններ, էապես մեծանում են Հարավային Կովկասում Չինաստանի տարածաշրջանային ներգրավման հնարավորությունները:

Ռուս-ուկրաինական հակամարտության ընթացքում Արևելյան Եվրոպայում հաղորդակցության նոր խոչընդոտների ծագման հետևանքով Եվրասիայում «Արևելք–Արևմուտք» միջանցքի տրանսռուսաստանյան տարանցիկ

---

[10] Տես "Study and Implement Xi Jinping Thought on Diplomacy Conscientiously and Break New Ground in Major-Country Diplomacy with Chinese Characteristics". Ministry of Foreign Affairs of the People's Republic of China, 20.07.2020 (https://www.fmprc.gov.cn/mfa_eng/wjdt_665385/zyjh_665391/ 202007/t20200721_678873.html):

երթուղիներում ստեղծվել են սահմանափակումներ: Դրանք Չինաստանին ստիպում են ավելի մեծ ուշադրություն դարձնել Ռուսաստանը շրջանցող այլընտրանքային ուղիների արդիականացմանը: Եվ Չինաստանը որպես հաղորդակցության այլընտրանքային ուղի սկսել է դիտել նաև Անդրկասպյան միջազգային տրանսպորտային երթուղին («Միջին միջանցքը»), որն անցնում է հարավկովկասյան երկու պետությունների՝ Ադրբեջանի և Վրաստանի տարածքներով: Չինաստանը նաև դիտարկում է «Հյուսիս–Հարավ» նախագծում ներգրավվման հնարավորությունները: Դա է փաստում այն հանգամանքը, որ ուկրաինական ճգնաժամի պատճառով Չինաստանն սկսել է մեծ ներդրումներ կատարել նաև Իրանի Չաբահար նավահանգստում՝ փորձելով այն դարձնել «Գոտի և ճանապարհի» նախագծի գլխավոր հանգույցներից մեկը[11]:

Չինաստանի արտաքին քաղաքականության համար առանցքային նշանակություն ունի միմյանց ինքնիշխանության և տարածքային ամբողջականության նկատմամբ փոխադարձ հարգանքի վրա հիմնված հարաբերությունների կառուցումը[12]: Այդ քաղաքականության հարավկովկասյան ուղղության համար նույնպես առաջնային է մնում պետությունների տարածքային ամբողջականության ճանաչումը և հակամարտությունների խաղաղ կարգավորումը: Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունների նկատմամբ Չինաստանը վարում է հավասարակշռված քաղաքականություն և մշտապես աջակցում է համապարփակ խաղաղության հաստատմանը միտված գործընթացներին: Դա են փաստում նաև 2022 թ. սեպտեմբերի 15-ի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում Չինաստանի ներկայացուցչի հնչեցրած հայտարարությունը, ինչպես նաև նրա այն դիտարկումը, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումն անբաժանելի է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծումից: Դա ևս մեկ անգամ վկայում է, որ Չինաստանը քաղաքականապես աջակցում է տարածաշրջանում համապարփակ խաղաղության հաստատմանը[13]:

Չինաստանը, ինքը ևս ունենալով միջազգային հարաբերություններում տարածքային ամբողջականության սկզբունքի գերակայության պահպանման խնդիր, չի համարում, որ տարածաշրջանային հակամարտությունները վերջնականապես լուծված են ներկայիս փաստացի ստատուս-քվոներով: Ավելին. հաշվի առնելով իր հարավկովկասյան քաղաքականության վարման համար տարածաշրջանի տարանցիկ գործառույթների կարևորության

[11] Տես *S. Aliasgary, M. Ekstrom.* Chabahar Port and Iran's Strategic Balancing With China and India. "The Diplomat", 21 October 2021 (https://thediplomat.com/2021/10/chabahar-port- and-irans-strategic- balancing-with-china-and-india/):

[12] Տես "Constitution of the People's Republic of China", 20 November 2019 (https://english.www.gov.cn/archive/lawsregulations/201911/20/content_WS5ed8856ec6d0b3f0e949 9913.html):

[13] Տես "Amid Fighting between Armenia, Azerbaijan, Assistant Secretary-General Urges Both Parties Commit to Lasting Peace Treaty, in Security Council Briefing". UN, Security Council, meetings coverage, SC/15031, 15 September 2022 (https://press.un.org/en/2022/sc 15031.doc.htm):

աճումը՝ Չինաստանը աջակցում է ապաշրջափակմանը, մասնավորապես՝ հայ-թուրքական և հայ-ադրբեջանական սահմաններով դեպի Եվրոպա տարանցիկ փոխադրումների իրագործմանը: Չինաստանի համար առավել կարևորը «Միջին միջանցքի» շրջանակներում «Արևելք–Արևմուտք» ուղղությամբ եվրոպական պետությունների հետ առևտրային փոխադրումներն են: Այսինքն՝ Թուրքիայից և Ադրբեջանից պարբերաբար հայտարարվող «Միջին միջանցքի» հնարավորությունների լիակատար օգտագործմամբ դրա շահագործմանը միտված գործընթացների առաջմղումը լիովին համապատասխանում է Չինաստանի տարածաշրջանային շահերին: Բայցևայնպես, Չինաստանն նախապատվություն է տալիս տարածաշրջանում երկարաժամկետ տնտեսական կայունության հաստատման մեխանիզմների ներդրմանը, ընդսմին դա պետք է իրագործվի բոլորի ներառմամբ, փոխշահավետության, տարածքային ամբողջականության փոխադարձ հարգման սկզբունքներով: Դրա շնորհիվ ապագայում կնվազեն նոր անկայունությունների ստեղծման ռիսկերը:

Չինաստանը, կողմ լինելով տարածաշրջանային գործընթացներում Ռուսաստանի ազդեցության պահպանմանը, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2022 թ. սեպտեմբերի 15-ի նիստում աջակցություն է հայտնել նաև Ռուսաստանի միջնորդական ջանքերին[14]: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Չինաստանը դեռևս չունի Հարավային Կովկասում համապարփակ խաղաղության հաստատման համար բավարար ռեսուրսներ ու հնարավորություններ և Ռուսաստանին համարում է տարածաշրջանային անվտանգության ապահովման գլխավոր երաշխավոր: Չնայած դրան՝ Չինաստանի շահերին համապատասխանում են նաև հարավկովկասյան պետությունների և եվրոպական պետությունների տնտեսական ինտեգրման հեռանկարները: Դրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ 2016 թ. Վրաստան–ԵՄ ասոցիացման համաձայնագրի վավերացումից և ԵՄ-ի խոր և համապարփակ ազատ առևտրի գոտի Վրաստանի մտնելուց հետո Վրաստանը և Չինաստանը 2017 թ. ստորագրեցին ազատ առևտրի վերաբերյալ երկկողմ համաձայնագիր, իսկ 2023 թ. հուլիսին հարաբերությունները բարձրացվեցին ռազմավարական գործընկերության մակարդակի[15]: Այդ փաստաթղթերի ստորագրմամբ Վրաստանում նոր հնարավորություններ ստեղծվեցին ԵՄ–Չինաստան տարանցիկ փոխադրումների համար: Այնուամենայնիվ, Հարավային Կովկասում Չինաստանի ազդեցության մեծացման հեռանկարները գերազանցապես պայմանավորված են Կենտրոնական Ասիայում և Պարսից ծոցում նրա իրականացնելիք աշխարհաքաղաքական հաղորդակցային նախագծերի հաջողությամբ, ինչպես նաև տարածաշրջանի՝ որպես Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջև միջանկյալ ռազմավարական միջանցքի դերի մեծացման գործոններով:

[14] Տես նույն տեղում:

[15] Տես “Georgian, Chinese gov’ts release joint statement on establishing strategic partnership”. “Agenda.ge”, 31 July 2023 (https://agenda.ge/en/news/2023/2926):

**Հնդկաստան:** Աշխարհակարգի փոփոխման պայմաններում տարածաշրջանում էապես մեծանում է նաև միջազգային հարաբերությունների առանձին բևեռ դառնալու լուրջ հավակնություններ ունեցող Հնդկաստանի դերը: 2020 թ. Արցախյան պատերազմը և ուկրաինական ճգնաժամի տարածաշրջանային հետևանքները նոր հնարավորություններ են ստեղծում Հնդկաստանի հարավկովկասյան քաղաքականության ակտիվացման համար: Եթե Հայաստան–Հնդկաստան հարաբերությունների զարգացման նոր հնարավորություններ են բացվում ռազմաքաղաքական համագործակցության ոլորտում, ապա Ադրբեջան–Հնդկաստան հարաբերություններում դա տեղի է ունենում «Հյուսիս–Հարավ» նախագծի շրջանակներում: Ուստի անհրաժեշտ է նորովի գնահատել Հնդկաստանի աշխարհաքաղաքական ազդեցության մեծացման տարածաշրջանային հնարավորությունները:

Հնդկաստանի հարավկովկասյան քաղաքականությունը բխում է նրա արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներից: Հնդկաստանի Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ արտաքին քաղաքականության համար առաջնային նշանակություն ունեն միջազգային խաղաղության և անվտանգության ապահովումը, միջազգային իրավունքի և պայմանագրային պարտավորությունների հարգումը, պետությունների տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ճանաչումը, միջնորդական սկզբունքներով վեճերի խաղաղ լուծումը[16]: Դրանք դիտվում են որպես այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու հիմքային սկզբունքներ, որոնք Հնդկաստանը պահպանում է նաև հարավկովկասյան քաղաքականության իրագործման ժամանակ:

Հնդկաստանը ջանքեր է գործադրում Չմիացման շարժման *(the Non-Aligned Movement)* կայացման ուղղությամբ, աջակցություն է ցուցաբերում ռազմական կազմակերպություններին չմիացող, «ռազմավարական ինքնուրույնություն» ունեցող պետություններին և նպաստում է Շարժման մասնակիցների միջև համագործակցության հաստատմանն ու խորացմանը: Ադրբեջանը, անդամակցելով Շարժմանը, ակտիվ գործունեություն է վարում այնտեղ հակահայկական տրամադրությունների ձևավորման համար: 2019 թ. Բաքվում կայացած գագաթնաժողովի ամփոփիչ փաստաթղթում Ադրբեջանի առաջարկությամբ ընդունվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ Ադրբեջանին աջակցող հակահայկական հայտարարություն[17]:

Հնդկաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների հարցում որոշակի փոփոխություններ եղան 2014 թ. Ն. Մոդիի իշխանության գալուց հետո: Համաշխարհային հաստատություններում կանոններ ձևա-

---

[16] Տես “The Constitution of India”, Part IV: “Directive Principles of State Policy”, May 2022, P. 22 (https://cdnbbsr.s3waas.gov.in/s380537a945c7aaa788ccfcdf1b99b5d8f/uploads /2023/05/2023050195.pdf):

[17] Տես “Final Document”. The 18th Summit of Heads of State and Government of the Non-Aligned Movement. Baku, 25–26 October 2019, P. 160 (https://app.unidir.org/sites /default/files/2020-10/2019_NAM%20Summit%20final%20doc.pdf):

վորելու կարողության զարգացումը, աշխարհի երրորդ խոշորագույն տնտեսություն դառնալը, տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ կարգավորմանը նպաստելը, ՄԱԿ-ի դերի պահպանմանն աջակցելը համարվեցին արտաքին քաղաքականության առաջնահերթություններ[18]: Ըստ այդ սկզբունքների՝ համաշխարհային քաղաքական գործընթացներում Հնդկաստանն սկսեց ակտիվացնել իր աշխարհաքաղաքական ներգրավումը: Ն. Մոդիի արտաքին քաղաքականության մեջ մեծ կարևորություն է տրվում նաև Հնդկաստանի տեխնոլոգիական զարգացմանը, ռազմավարական արտահանումներին, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացմանը: Այս համատեքստում Հարավային Կովկասը Հնդկաստանի համար կարևորվում է հատկապես «Հյուսիս–Հարավ» միջանցքով Մումբայից մինչև Սանկտ Պետերբուրգ բեռնափոխադրումների, ինչպես նաև «Պարսից ծոց–Սև ծով» միջանցքով եվրոպական շուկաներ դուրս գալու տեսանկյունից:

2020 թ. Արցախյան պատերազմից հետո Հարավային Կովկասում Թուրքիայի և Ադրբեջանի համագործակցության խորացումը և Հայաստանի ինքնիշխան տարածքով արտատարածքային բեռնափոխադրումների համար «միջանցքի» ստեղծման փորձերը, Արևելյան Եվրոպայում հաղորդակցուղային աշխարհաքաղաքականության փոփոխությունները առաջացնում են տարածաշրջանում Հնդկաստանի ազդեցության մեծացման նոր անհրաժեշտություն: Եթե մինչ ռուս-ուկրաինական հակամարտությունը Հնդկաստանը «Հյուսիս–Հարավ» միջանցքը համարում էր դեպի Եվրոպա իր դուրս գալու կարևոր ուղի, ապա դրանից հետո այն սկսեց դիտարկվել միայն որպես ռուսաստանյան շուկա դուրս գալու հնարավորություն: Սակայն Հնդկաստանի համար առաջնային է մնում եվրոպական պետությունների հետ ապրանքաշրջանառությունը, ուստի նա նորովի է գնահատում Ռուսաստանը շրջանցող «Պարսից ծոց – Սև ծով» բազմատեսակ (մուլտիմոդալ) ճանապարհը և Հնդկաստան – Իրան – Հայաստան ձևաչափով համագործակցության խորացումը:

Պատահական չէ, որ Հնդկաստանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2022 թ. սեպտեմբերի 15-ի և դեկտեմբերի 20-ի նիստերում դատապարտեց Ադրբեջանի ագրեսիան և Լաչինի միջանցքի արգելափակումը: Նշանակում է, որ Հնդկաստանի շահերին չի համապատասխանում, որ Հարավային Կովկասով անցնող երթուղիներն ամբողջովին վերահսկեն Պակիստանի հետ սերտ գործընկերային հարաբերություններ ունեցող Թուրքիան և Ադրբեջանը:

2020 թ. Արցախյան պատերազմից հետո Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի կերպափոխման գործընթացը, 2021 թ. սեպտեմբերին Ադրբեջանի, Թուրքիայի և Պակիստանի՝ «Երեք եղբայր» անվանումը կրող զորավարժությունների անցկացումը, 2022 թ. հուլիսին ստորագրված Ստամբուլի հռչակագիրը, պակիստանյան արտադրության «Ջեյ էֆ-17

[18] Տես *W.P.S. Sidhu and Shruti Godbole.* Bold Initiatives Stymied by Systemic Weakness. “Modi’s Foreign Policy @365: Course Correction”. Brookings India, July 2015, P. 3 (https://www.brookings.edu/wp-content/uploads/2015/05/modi365_final-book.pdf):

Թանդեր» *(“JF-17 Thunder”)* կործանիչների գնման մասին Ադրբեջանի հայտարարությունը և Ջամուի ու Քաշմիրի հակամարտությունում անվերապահորեն Պակիստանին աջակցելու նրա դիրքորոշումը նոր լարվածություն է ստեղծել Ադրբեջանի և Հնդկաստանի քաղաքական հարաբերություններում: Դրանք արտահայտվում են միջազգային հարթակներում ադրբեջանական նախաձեռնությունները կասեցնելու Հնդկաստանի դիվանագիտական փորձերով, «ԲՐԻԿՍ»-ի գագաթնաժողովին Ադրբեջանի մասնակցությունն արգելելու, արմատական շիաների խմբերի՝ Լոնդոնում Ադրբեջանի դեսպանատան վրա հարձակումը Չմիացման շարժման երիտասարդական գագաթնաժողովում դատապարտելու մասին բանաձևի ընդունման վրա արգելանք դնելու դեպքերով:

Թեև Հնդկաստան–Ադրբեջան քաղաքական հարաբերություններում ստեղծվել է ճգնաժամային իրավիճակ, սակայն երկկողմ տնտեսական հարաբերությունները զարգանում են արագ տեմպերով: Դա հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում համընդհանուր հաղորդակցուղային աշխարհաքաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխություններով: Հատկապես ակտիվացել են «Հյուսիս–Հարավ» միջանցքով ապրանքաշրջանառության ծավալները, մասնավորապես՝ 2022 թ. Ադրբեջանի և Հնդկաստանի միջև այն 2,5 անգամ ավելացել է, ինչի հետևանքով Հնդկաստանը դարձել է Ադրբեջանի արտահանման խոշորագույն գործընկերներից մեկը[19]:

Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի կերպափոխման գործում ակտիվացման նոր միտումներ են նկատվում, մասնավորապես՝ հայ-հնդկական ռազմական համագործակցությունում: Այդուհանդերձ դրա խորացման պայմաններում դեռ չի նշմարվում Հնդկաստան–Ադրբեջան հարաբերությունների կրիտիկական վատթարացումը, քանի որ Հնդկաստանի համար Ադրբեջանը «Հյուսիս–Հարավ» տրանսպորտային միջանցքի առանցքային պետություններից մեկն է, որն ապահովում է հնդկական բեռների տարանցումը Իրանից Ռուսաստան: Հնդկաստանի համար Հայաստանի հետ քաղաքական հարաբերությունների զարգացման գլխավոր նպատակներից են ադրբեջանական ապահովումային (լոգիստիկ) կարողություններից իր լիովին կախվածության բացառումը և սպառնալիքների առաջացման դեպքում Հայաստանի այլընտրանքային հնարավորությունների օգտագործումը:

## Եզրակացություն

Ամփոփելով հարավկովկասյան անվտանգային միջավայրի կերպափոխման գործընթացում ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Չինաստանի և Հնդկաստանի քաղաքականության վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ ի տարբերություն Ռուսաստանից, Իրանից, Թուրքիայից, արտատարածաշրջանային

[19] Տես “Economic and Commercial Brief”. Embassy of India, Baku, Azerbaijan (https://www.indianembassybaku.gov.in/page/economic/):

«ուժային կենտրոնները» կենսական նշանակության անվտանգային շահեր չունեն Հարավային Կովկասում: Եթե ԱՄՆ-ի և ԵՄ-ի հարավկովկասյան քաղաքականության ակտիվությունը պայմանավորված է Արևմուտք – Ռուսաստան աշխարհաքաղաքական մրցակցության գործոններով, ապա Չինաստանի և Հնդկաստանի քաղաքականության ակտիվացումը մեծապես պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտությամբ և տարածաշրջանային հաղորդակցուղիների ապաշրջափակմամբ: Ռուս-ուկրաինական հակամարտությունը, տարածաշրջանի հետխորհրդային աշխարհառազմավարական տիրույթում ներառվածության փոփոխումը, անվտանգային միջավայրի վերջնական ձևավորման անորոշությունները, հաղորդակցային ուղիների նշանակության մեծացումը հիմք են տալիս եզրակացնելու, որ Հայաստանի համար խիստ անհրաժեշտություն է դառնում առանց արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխման համակշռելու բացառապես Ռուսաստանի աշխարհաքաղաքական ներկայությամբ պայմանավորված նրա նվազող զսպիչ ազդեցությունը: Բայցևայնպես, Հայաստանը պետք է հնարավորինս ձեռնպահ մնա տարածաշրջանում կենսական շահեր ունեցող տարածաշրջանային «ուժային կենտրոնների» և երկրորդային շահեր հետապնդող արտատարածաշրջանային «ուժային կենտրոնների» միջև մրցակցությունը խորացնող գործողություններից և խուսափի Արևմուտք–Ռուսաստան–Իրան մեծամասշտաբ ռազմական առճակատման նոր օբյեկտ դառնալուց:

## ПОЛИТИКА ВНЕРЕГИОНАЛЬНЫХ «ЦЕНТРОВ СИЛЫ» В ПРОЦЕССЕ ТРАНСФОРМАЦИИ БЕЗОПАСНОСТНОЙ СРЕДЫ НА ЮЖНОМ КАВКАЗЕ

*Р. Г. АВЕТИСЯН, кандидат политических наук, старший ученый-аналитик Центра региональных стратегических исследований ИНСИ НИУО МО РА, научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ*

РЕЗЮМЕ

Регион Южного Кавказа после войны 2020 г. вступил в период ломки хрупкой архитектуры региональной безопасностной системы, сложившейся во время сохранения статус-кво, и серьезной трансформации безопасностной среды в регионе. Это обусловлено несколькими факторами, вытекающими в том числе и из геополитических и геостратегических процессов, происходящих в иных регионах, в частности – российско-украинского конфликта и обострения отношений между Россией и Западом. В результате данных процессов возросло стремление Запада ослабить Россию как в политическом отношении (ограничение зоны ее влияния, в том числе в традиционно «прорусских» регионах, таких, как Южный Кавказ и Средняя Азия), так и в экономическом отношении, ограничив ее роль как поставщика

углеводородных энергоносителей и транзитного коридора «Восток – Запад». Это привело к значительному снижению уровня ее ограничивающего влияния на Южном Кавказе и возникновению серьезных возможностей для активизации своей политики в этом регионе как для Турции, так и внерегиональных глобальных акторов, таких, как США, Евросоюз, Китай и Индия, каждый из которых преследует здесь свои геостратегические и геоэкономические интересы, в процессе продвижения которых они действуют в своей традиционной манере, сложившейся в системе осуществления своей национальной внешней политики.

Согласно проведенному анализу, если активность южнокавказской политики США и ЕС обусловлена факторами геополитического соперничества между Западом и Россией, то активизация политики Китая и Индии в значительной степени исходит из активизации процессов разблокирования региональных путей сообщения, в результате чего возникает альтернатива северному (российскому) коридору, использование которого в значительной степени ограничено из-за российско-украинского конфликта. При этом для Армении становится императивом в процессе трансформации безопасностной среды на Южном Кавказе компенсировать снижение действенности факторов сдерживания, обусловленных исключительно геополитическим присутствием РФ, без изменения внешнеполитического курса.

## THE POLICY OF EXTRA-REGIONAL “POWER CENTERS” IN THE PROCESS OF TRANSFORMATION OF THE SECURITY ENVIRONMENT IN THE SOUTH CAUCASUS

*R. G. AVETISYAN, PhD in Political Science, Senior Research Fellow, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, Researcher, Institute for Armenian Studies, YSU*

SUMMARY

After the 2020 war (the Second Nagorno-Karabakh War), the South Caucasus region entered a period of the collapse of the fragile regional security system architecture shaped while maintaining the *status quo,* and the serious transformation of the security environment in the region. This is stipulated by several factors ensuing, among other things, from the geopolitical and geostrategic processes taking place in other regions, in particular, the Russia – Ukraine conflict and the aggravation of relations between Russia and the West. Because of these processes, the West's urge to weaken Russia has increased both in political (limiting Russia’s zone of influence, including in traditionally "pro–Russian" regions, such as

the South Caucasus and Central Asia) and economical aspects, limiting Russia's role as a supplier of hydrocarbon energy carriers and the East-West transit corridor. This has led to a significant decrease in the level of Russia's limiting influence in the South Caucasus, and the emergence of serious opportunities to reinvigorate their policy in this region both for Turkey, and extra-regional global actors, such as the United States, the European Union, China and India. Each of those pursues its own geo-strategic and geo-economic interests here, and throughout the process is acting in their own traditional manner, which has been developed in the system of implementing their national foreign policy.

According to the analysis carried out, if the activity of the United States' and the European Union's policies in the South Caucasus depends on the factors of geopolitical rivalry between the West and Russia, then the activation of China's and India's policies largely comes from the activation of the processes of unblocking regional communications, resulting in the occurrence of an alternative to the northern (Russian) corridor, the use of which in greatly restricted due to the Russia – Ukraine conflict. In addition, it becomes imperative for Armenia, in the process of transforming the security environment in the South Caucasus, to indemnify for the decrease in the efficiency of deterrents conditioned solely by the geopolitical presence of the Russian Federation, without changing the foreign policy.

# ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ*

*Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,*
*ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմավարական խաղերի*
*և մոդելավորման խմբի գիտնական-վերլուծաբան*



**Ներածություն**

Վերջին տարիներին Հարավային Կովկասում տեղի ունեցող աշխարհաքաղաքական փոփոխությունները ազդում են տարածաշրջանի տնտեսական զարգացման հեռանկարների վրա: Տարածաշրջանի երկրները ձգտում են հարմարվելու տեղի ունեցող զարգացումներին և գտնելու տնտեսական աճման նոր հնարավորություններ: Զուգահեռաբար, Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը վարում են ակտիվ արտաքին առևտրատնտեսական քաղաքականություն՝ փորձելով հնարավորինս նվազեցնել բացասական գործոնների ազդեցությունն իրենց տնտեսությունների վրա: Սույն հոդվածում տարածաշրջանի տնտեսական համայնապատկերի դիտակետից ուսումնասիրվում են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական զարգացման առանձնահատկությունները և միտումները: Այդպիսի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատելու առաջիկա տարիներին այդ պետությունների զարգացման ապահովման, մեծացման և տնտեսական մրցունակության հեռանկարների վրա ազդող դրական և բացասական գործոնները:

## 1. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսությունների կառուցվածքն ու բնութագիրը

### 1.1 Տեղեկանք

2021 թ. Հայաստանի ՀՆԱ-ն կազմել է 13,86 միլիարդ դոլար, մեկ շնչին բաժին հասնող ՀՆԱ-ն՝ 4522 դոլար[1]: 2022 թ. Հայաստանի ՀՆԱ-ն աճել է 12,6 %-ով, ինչը գերազանցել է 2021 թ. (5,7 %) և մինչքովիդային՝ 2019 թ. (7,6 %) տնտեսական աճերը՝ հասնելով 8,497 տրիլիոն դրամի (19,5 միլիարդ դոլարի): Այդպիսի նշանակալի աճը պայմանավորված էր արտարժույթի աննախադեպ ներհոսքով՝ կապված Ուկրաինայում Ռուսաստանի վարած ռազմական գործողությունների և Ռուսաստանի դեմ հսկայական տնտեսական

---

* Հոդվածը նախնական տարբերակով ստացվել է 10.05.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 01.11.2023:

[1] Տես «Экономика Армении. Статистика онлайн» (https://take-profit.org/statistics /countries/armenia/):

պատժամիջոցների հետևանքով Ռուսաստանից Հայաստան քաղաքացիների ներհոսքի հետ[2]: 2022 թ. Հայաստան ժամանած քաղաքացիների թիվը կազմել է 130 000–140 000 մարդ: Այդ քաղաքացիները Հայաստան են տեղափոխել նաև իրենց ֆինանսական միջոցները և իրենց բիզնեսը գրանցել են Հայաստանում (մոտավորապես՝ 2000 գրանցում)[3]:

2022 թ. դրությամբ Հայաստանի տնտեսական աճման շարժիչ ուժերից են ծառայությունների ոլորտը՝ 28,2 %, առևտրի ոլորտը՝ 17 %, էներգետիկ համալիրը՝ 16,1 %, շինարարությունը՝ 12,5 % և արդյունաբերական հատվածը՝ 7,9 % աճով: Վերջին տարիներին ՀՀ Կառավարության քաղաքականությունն ուղղված է այնպիսի բարձրտեխնոլոգիական ոլորտների զարգացմանը, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, ռոբոտաշինությունը և ռազմական նախանշանակման ժամանակակից տեխնոլոգիաները: Հայրենական ՀՆԱ-ում այդ ոլորտների ընդհանուր մասնաբաժինը դեռևս փոքր է, սակայն Կառավարությունը շարունակում է ակտիվ քայլեր ձեռնարկել ուղղված այդ ոլորտներում տեղական ներուժի օգտագործմանը, ինչպես նաև օտարերկրյա առաջատար ընկերություններից ներդրումների ներգրավմանը: Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ոլորտին, ապա անասնաբուծության ճյուղի զարգացման համար խոչընդոտները պայմանավորված են նոր երևույթներով, որոնք նախկինում չեն եղել: Մասնավորապես՝ Ադրբեջանի ագրեսիվ գործողությունների (սահմանի բազմաթիվ խախտումներ, հրաձգություն, ներխուժումներ և այլն) հետևանքով շատ արոտավայրեր հայտնվել են վտանգավոր գոտիներում: Տարեցտարի կրճատվում են տեղական գյուղատնտեսական արտադրանքի ծավալները, ինչը պայմանավորված է նաև էժան գներով ներկրման ծավալների մեծացմամբ:

2022 թ. տնտեսական աճը սակավ է անդրադարձել երկրի վարկային շուկայի վրա: Նախնական տվյալներով՝ տնտեսության՝ բանկային համակարգի վարկավորման ծավալները ինչպես 2021 թ., այնպես էլ 2022 թ. ունեցել են 2,5 % աճ: Սա այն դեպքում, երբ բանկային համակարգը 2022 թ. արդյունքներով ստացել է աննախադեպ՝ 650 միլիոն դոլար շահույթ: Չնայած բանկերի այդքան մեծ շահույթին՝ երկրի տնտեսությունը նախկինի պես ֆինանսական ռեսուրսների կարիք ունի: Այսպես. օրինակ՝ եթե ԵՄ-ում փողի զանգվածի և ՀՆԱ-ի միջև հարաբերակցությունը 120 % է, ապա Հայաստանում այդ ցուցանիշը 30 % է[4]: Այս առումով պետք է նշել, որ Հայաստանում գրեթե յուրաքանչյուր ընկերություն ունի ֆինանսական ռեսուրսների մուտքի պրոբլեմ: Սա Հայաստանում բիզնես գործունեություն սկսելու համար առաջին խոչընդոտն է: Ընդ որում, այստեղ կարելի է նշել 2023 թ. Հայաստանի համար «Ֆիտչ Ռեյտինգս» *(“Fitch Ratings”)* գործակալության սահմանած

---

[2] Տես «Экономика Армении-2022: успехи, проблемы и прогнозы», 08.03.2023 (https://vpoanalytics.com/2023/03/08/ekonomika-armenii-2022-uspehi-problemy-i-prognozy/):

[3] Տես նույն տեղում:

[4] Տես նույն տեղում:

ինքնիշխանական վարկանիշը «B+» մակարդակում՝ «կայուն-դրականի» անցնելու վերաբերյալ գնահատակով: Մեր պետության ինքնիշխանական վարկանիշի վերանայման համար հիմք ծառայեցին տնտեսության զարգացման դրական դինամիկան և մեծ տնտեսական աճը, որոնք պայմանավորված են մարդկանց և կապիտալի մեծ ներհոսքով, հարկահավաքման պլանների գերակատարմամբ և պետության արտաքին առևտրի վիճակի բարելավմամբ: «Ֆիտչ Ռեյտինգսի» հաշվետվությունում նշվում է նաև բյուջեի պակասորդի զգալի կրճատումը՝ պայմանավորված գլխավորապես հարկային եկամուտների աճմամբ: Բացի այդ՝ 2022 թ. ՀՀ արտաքին պարտքը կրճատվել է մոտ 12 տոկոսային կետով՝ հասնելով մոտավորապես ՀՆԱ-ի 44,5 %-ի: Այդ գործակալության գնահատմամբ Հայաստանը աչքի է ընկնում ուժեղ կառավարչության ցուցանիշներով, ինչպես նաև վստահություն ներշնչող մակրոտնտեսական ու հարկաբյուջետային քաղաքականությամբ և բարեփոխումների իրագործման հետևողականությամբ[5]:

Միևնույն ժամանակ, Հայաստանի տնտեսության ներկայիս կառուցվածքը (ցածր ավելացված արժեք ունեցող ծառայությունների մատուցումից և հանքահումքային ռեսուրսների վաճառքից ՀՆԱ-ի և բյուջետային եկամուտների նշանակալի կախվածությունը), ՀՆԱ-ում տնտեսության մշակող ու բարձրտեխնոլոգիական ճյուղերի փոքր մասնաբաժինը և օտարերկրյա փոխանցումներից (տրանսֆերտներից) երկրի սպառողական պահանջարկի ուղղակի կախվածությունը խոչընդոտում են ՀՀ տնտեսության դինամիկ, երկարաժամկետ և կայուն զարգացմանը:

2007 թվականից **Վրաստանում** պահպանվում են ՀՆԱ-ի աճի բարձր տեմպերը, որոնք միջինում կազմել են տարեկան 5,1 %, ինչը պայմանավորված է վերարտադրողական ճյուղերում արտադրողականության մեծացմամբ, բարձր մակարդակի պետական ծախսերով և արտերկրից ֆինանսական միջոցների ներհոսքով: Բարեփոխումների շնորհիվ ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2009–2019 թթ. 2800 դոլարից 2020 թ. հասել է 4770 դոլարի[6]: 2021 թ. Վրաստանի ՀՆԱ-ն կազմել է 18,63 միլիարդ դոլար, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 4932 դոլար[7]: 2022 թ. Վրաստանի ՀՆԱ-ն կազմել է 24,6 միլիարդ դոլար: Մեկ շնչին բաժին հասնող ՀՆԱ-ն կազմել է 6671 դոլար, գործազրկության մակարդակը՝ 17,3 %, իսկ տնտեսապես ակտիվ բնակչության թիվը՝ 1 551 000 մարդ[8]:

2022 թ. Վրաստանի արտաքին առևտրաշրջանառությունը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 32,8 %-ով և կազմել 19 միլիարդ դոլար:

---

[5] Տես նույն տեղում:

[6] Տես «Перспективы инновационной политики 2020: Восточная Европа и Южный Кавказ. Грузия». Организация объединённых наций. Женева, 2021 (https://unece.org/sites/default/files/2021-09/RU-Sub-regional_Innovation_Policy_Outlook _ 2020_GEORGIA_CHAPTERS.pdf):

[7] Տես «Экономика Грузии. Статистика онлайн» (https://take-profit.org/statistics/countries/georgia/):

[8] Տես “National Statistics Office of Georgia” կայքը (https://www.geostat.ge/en):

Ընդ որում, 2022 թ. ներկրումը կազմել է 13,5 միլիարդ դոլար, ինչը 33,2 %-ով շատ է 2021-ի տվյալներից: 2022 թ. Վրաստանում զբոսաշրջությունից ստացված եկամուտները հասել են ռեկորդային մակարդակի՝ շուրջ 3,5 միլիարդ դոլարի: Նույն թվականին կատարված էլեկտրոնային համակարգով վրացական առևտրային բանկեր դրամային փոխանցումների ծավալը աճել է 86,1 %-ով և կազմել ավելի քան 4 միլիարդ դոլար[9]:

Ներկայումս Վրաստանում տեղի է ունենում էներգետիկ համալիրի վերականգնում և էլեկտրաէներգիայի արտադրության զարգացում, ինչպես նաև արևելյան շրջաններում շահագործվում են հեռանկարային նավթահանքերը: Կառուցվում են նոր գազամուղներ Քութայիսում, Գորիում, Կասպիում, Ռուսթավիում և այլ քաղաքներում: Վրաստանը սնունդ, էներգակիրներ, ավտոմեքենաներ և տրանսպորտային սարքավորանքներ ներկրող երկիր է: Վրաստանից արտահանվում են հանքային ջրեր, գինի, թեյ, մանածագործական և այլ արտադրանք: Վրաստանի տնտեսությունում զարգանում են սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերը, մեքենաշինությունը, քիմիական, նավթաքիմիական, նավթավերամշակման արդյունաբերությունները, սև մետաղագործությունը[10]:

2021 թ. արդյունքներով՝ Վրաստանի արտաքին պարտքը կազմել է 8 միլիարդ դոլար, գործազրկությունը՝ 20,6 %, արտահանումը՝ 4,2 միլիարդ դոլար, ներկրումը՝ 10,1 միլիարդ դոլար: Վրաստանում գործում են մի քանի ազատ առևտրային գոտիներ: Դրանք են Հուալինգի, Փոթիի, Թբիլիսիի և Քութայիսի ազատ գոտիները[11]:

**Ադրբեջանը** միջին զարգացածությամբ արդյունաբերաագրարային պետություն է: 2022 թ. դրությամբ նրա տնտեսությունը ՀՆԱ-ի ծավալով աշխարհում զբաղեցրել է 79-րդ տեղը[12]: 2022 թ. ՀՆԱ-ն 2021 թ. համեմատությամբ աճել է 4,6 %-ով: Դրա կառուցվածքում 51,1 %-ը բաժին է հասել արդյունաբերությանը, 8,2 %-ը՝ առևտրին, 6,0 %-ը՝ տրանսպորտին, 4,8 %-ը՝ շինարարությանը, 4,8 %-ը՝ գյուղատնտեսությանը, անտառային տնտեսությանը և ձկնորսությանը, 1,4 %-ը՝ հեռահաղորդակցությանը, 1,6 %-ը՝ զբոսաշրջությանը և հանրային սննդին, իսկ 14,7 %-ը՝ մնացած ոլորտներին[13]: Արժույթի միջազգային հիմնադրամը 2024 թ. համար կանխատեսել է 2,5 % տնտեսական աճ[14]:

---

[9] Տես «Экономика Грузии – главные цифры 2022 года», 28.02.2023 (https://sputnik-georgia.ru /20230228/ekonomika-gruzii--glavnye-tsifry-2022-goda-274977851.html):

[10] Տես «Экономика Грузии» (https://www.advantour.com/rus/georgia/economy.htm#:#:~:text=Экономика%20Грузии%20развивает%20следующие%20отрасли,нефтехимическая%20и%20нефтеперерабатывающая%2C%20черная%20металлургия):

[11] Տես «Грузия» (https://export.by/georgia):

[12] Տես «Государственный Комитет Статистики» (http://stat.gov.az/):

[13] Տես «Экономика Азербайджана», 22.01.2023 (https://www.tadviser.ru/index.php/Статья:Экономика_Азербайджана):

[14] Տես «Прогноз МВФ по экономическому развитию Азербайджана превзошел ожидания правительства». «Vesti.az», 10 октября 2023 (https://www.vesti.az/ekonomika

2022 թ. արդյունքներով Ադրբեջանի արտաքին առևտրաշրջանառությունը գերազանցել է 50 միլիարդ դոլարը, ընդ որում, ներկրման նկատմամբ արտահանման դրական սալդոն կազմել է 25 միլիարդ դոլար: 2022 թ. արտաքին պարտքը կրճատվել է ՀՆԱ-ի 17 %-ից մինչև 9,5 %՝ նվազելով մինչև 7 միլիարդ դոլար[15]:

Պետք է նշել, որ թեև վերջին տարիներին ձեռնարկվել են պետական բյուջեում և ՀՆԱ-ում նավթագազային ոլորտի մասնաբաժնի կրճատմանն ուղղված քայլեր, սակայն պետության ղեկավարությունը շարունակում է ընդլայնել նավթագազային արտադրանքի ծավալներն այն արտահանելու նպատակով[16]: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին Ադրբեջանի կառավարությունը հետևողականորեն զարգացնում է ռազմական արդյունաբերությունը՝ այն դիտելով որպես քարշակ արդյունաբերության քաղաքացիական ոլորտների զարգացման համար:

## 1.2. Տնտեսությունների բնույթի վերլուծություն

Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի երեք պետություններն ընտրեցին նորազատական տնտեսական մոդելով ազատ շուկայական հարաբերությունների զարգացման ուղին: Այդուհանդերձ սկզբնական փուլում պետական տնտեսական քաղաքականությունը, ներառյալ՝ ազատ շուկայական հարաբերությունների ստեղծումը, շուկայական մրցակցության ոլորտում հովանավորչությունը խափանեցին տվյալ պետությունների դինամիկ տնտեսական զարգացումը: Նման պայմաններում բոլորն էլ իրենց տնտեսական քաղաքականությունը կողմնորոշեցին դեպի ռեսուրսասպառող հանքահումքային արդյունաբերական զարգացման ապահովում: Բացի այդ, երեք պետություններում էլ նկատվում էր գիտելիքահեն բարձրտեխնոլոգիական արդյունաբերական ճյուղերի թերզարգացում, չնայած այն հանգամանքին, որ մասնավորապես ՀՀ-ում դեռ խորհրդային տարիներին կար նշանակալի գիտական ներուժ: Բոլոր երեք պետություններում ընդլայնվում էր տնտեսությունների ստվերային հատվածը, մեծ չափերի էին հասնում եկամուտների անհավասար բաշխումը և սոցիալական անարդարությունը, իսկ այլ շուկաներում տեղական արտադրանքի մրցունակությունը նվազում էր:

Տարածաշրջանի բոլոր երեք պետությունների համար ընդհանուր է տնտեսություններում տեղի մասշտաբներով խոշոր մասնավոր ձեռնարկությունների մենաշնորհը, որն առաջացել է հետխորհրդային ժամանակաշրջանում պետական սեփականության աչառու մասնավորեցման հետևանքով և

/prognoz-mvf-po-ekonomiceskomu-razvitiyu-azerbaidzana-prevzosel-ozidaniya-pravitelstva-500153):

[15] Տես «Экономика Азербайджана рекордно выросла». «Lenta.ru», 10 января 2023 (https://lenta.ru/news/2023/01/10/azerb/):

[16] Տես *Ա. Գ. Դավթյան,* Ադրբեջանի տնտեսական հեռանկարները ներքաղաքական և համաշխարհային առևտրատնտեսական զարգացումների լույսով: «ՀԲ», 2020, հմ. 1:

հանգեցրել է փոքր ու միջին ձեռնարկատիրության թերի զարգացմանը: Քաղաքական անձնիշխանությունը ամենավառ կերպով դրսևորվել է Ադրբեջանում, իսկ Վրաստանին ու Հայաստանին բնորոշ է ավելի ազատական մոդելը: Ադրբեջանում մեծ նավթագազային ռեսուրսների առկայությունը երկար ժամանակ զսպում էր մասնավորեցման ընթացքը, բայց արագացնում օտարերկրյա կապիտալի ներգրավումը: Մյուս կողմից՝ Ադրբեջանում նշանակալի ծավալներով օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ (հիմնականում՝ թուրքական) զարգանում էին առաջին հերթին թեթև արդյունաբերության և առևտրի ոլորտները[17]:

Իրավիճակն սկսեց որոշակիորեն փոխվել 2000-ական թվականների երկրորդ կեսին, երբ երեք պետություններն զգալիորեն ընդլայնեցին իրենց արտաքին քաղաքական հարաբերությունները Արևմտյան երկրների հետ (մասնավորապես՝ մասնակցեցին Արևմտյան ինտեգրումային նախագծերին) և ակտիվացրին շուկայական բարեփոխումները: Միևնույն ժամանակ, Հարավային Կովկասի պետությունների արտաքին տնտեսական կապերն սկսեցին, բացի Ռուսաստանից և այլ հետխորհրդային պետություններից, կողմնորոշվել նաև դեպի արևմտյան երկրներ:

Ընդհանուր առմամբ, ի մի բերելով ասվածը, կարող ենք նշել, որ Հարավային Կովկասի պետություններին, բացի վերը ներկայացված գործոններից, բնորոշ են տարբեր աստիճաններով հետևյալ տնտեսական պրոբլեմները.

- ✓ տնտեսության կառավարման համակարգի ծայրաստիճան քաղաքականացվածություն (կուսակցականացվածություն),
- ✓ հասարակության անդամների շերտավորման և գույքային անհավասարության խորացում,
- ✓ տնտեսության կառուցվածքային ձևախախտման ուժեղացում,
- ✓ տարածքային զարգացման անհամաչափություն:

**2. Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական զարգացումների հեռանկարները տարածաշրջանային զարգացումների համատեքստում**

**Հայաստան:** Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական զարգացումների հեռանկարները մեծապես կախված են տարածաշրջանում մեծ տերությունների շահերի վերադասավորումներից: Արցախյան վերջին զարգացումներից հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև հաշտության համաձայնագրի կնքման և տրանսպորտային ապաշրջափակման հեռանկարները մեծացնում են տարածաշրջանի տարանցիկ տրանսպորտային և ապահովումային (լոգիստիկ) նշանակությունը: Ստեղծվել է մի իրավիճակ, երբ ԵՄ-ը, ԱՄՆ-ը, Ռուսաստանը և Թուրքիան ձգտում են հայ-ադրբեջանական բանակցություններում գործադրած միջնորդական ջանքերով ամրապնդելու ներկայությունը տարածաշրջանում: Հասկանալի է դառնում, որ

---

[17] Տես *Н. М. Мамедова.* Экономические модели стран Закавказья. «Мировое и национальное хозяйство». Издание МГИМО МИД России, 2020, № 4(53) (https://mirec.mgimo.ru/2020/2020-04/zakavkaz-econ-model):

տարածաշրջանի տնտեսական համայնապատկերի փոփոխությունը կախված կլինի այն բանից, թե ում կհաջողվի «հաղթել» այդ մրցակցությունում: ԵՄ-ի և ԱՄՆ-ի մոտեցումն այն է, որ հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրի կնքումը և հարաբերությունների կարգավորումը պետք է տեղի ունենան միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների հիման վրա: Սա նաև նշանակում է արտատարածքային հաղորդակցուղիների տրամադրման բացառում:

ԱՄՆ-ի և ԵՄ-ի դիրքորոշման համաձայն՝ Ռուսաստանը պետք է որևէ կերպ չմիջամտի հայ-ադրբեջանական տրանսպորտային երթուղիների ապաշրջափակմանը: Իհարկե, նրանք ձգտում են իրենց միջնորդական ջանքերով մեծացնելու իրենց ներկայությունը տարածաշրջանում և նվազեցնելու այստեղ Ռուսաստանի ազդեցությունը, ինչը ռուս-ուկրաինական հակամարտության պայմաններում կնպաստի հարավային ուղղությամբ Ռուսաստանի տնտեսական նկրտումների սահմանափակմանը: Ե՛վ Ռուսաստանը, և՛ Թուրքիան հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը ձգտում են ծառայեցնելու Չինաստանի «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության Կենտրոնական երթուղու զարգացման, Կենտրոնական Ասիայի պետությունների հետ տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածքների կապվածության ամրապնդման, ինչպես նաև ԱՄՆ-ի և ԵՄ-ի աջակցությունը վայելող Հնդկաստանի «Մետաքսի ճանապարհի» իրագործմանը խոչընդոտելու համար: Դա Թուրքիային հնարավորություն կտա իր ազդեցության գոտում ներառելու Հարավային Կովկասի տարանցիկ տնտեսական միջանցքը, իսկ Ռուսաստանին, որը զրկվել է «Արևելք – Արևմուտք» հաղորդակցուղիներից, պահպանելու այդ ուղղություններով կատարվող բեռների, այդ թվում՝ էներգակիրների, նկատմամբ իր վերահսկողությունը:

ԵՄ-ի համար Հարավային Կովկասի նշանակությունը դիտարկելու դեպքում առաջին հերթին ուշադրության կենտրոնում են հայտնվում Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի էներգետիկ ռեսուրսները: Ռուս-ուկրաինական հակամարտության մեկնարկից հետո ԵՄ-ը բախվել է Ռուսաստանից կամ նրա միջոցով մատակարարվող էներգետիկ ռեսուրսների փոխարինման անհրաժեշտության հետ: Այս առումով, ԵՄ-ի համար մեծացել է Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի էներգետիկ և ապահովումային նշանակությունը[18]: Երկրորդ հերթին՝ Հարավային Կովկասը կարևոր է եվրոպական անվտանգության համար: Եթե ԵՄ-ին հաջողվի Հարավային Կովկասում թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը, ապա նա կկարողանա ավելի հետևողականորեն իրացնել տարածաշրջանում իր ունեցած շահերը[19]:

Ռուսաստանը, իր հերթին, գտնվելով ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ աշխարհաքա-

[18] Տես «Подход Европы к геополитическому обустройству Южного Кавказа». «ANKASAM», 06.10.2023 (https://www.ankasam.org/подход-европы-к-геополитичес кому-обу/?lang=ru\):

[19] Տես նույն տեղում:

ղաքական առճակատման մեջ, շարունակաբար ջանքեր է գործադրում Թուրքիայի և Իրանի հետ հարաբերությունների զարգացման միջոցով պահպանելու իր ազդեցությունը Հարավային Կովկասում և համատեղ էներգետիկ ու տրանսպորտային նախագծերի իրագործման շնորհիվ իրացնելու իր տնտեսական շահերը:

Թեև Հայաստանը անդամակցում է ԵԱՏՄ-ին (ԵԱՏՄ-ի շրջանակներում ինտեգրումային գործընթացները դանդաղել են ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ-ի դեմ պատժամիջոցների սաստկացման պատճառով), և ՌԴ-ն է ՀՀ առաջին առևտրային գործընկերը, սակայն վերոնշյալ զարգացումների համատեքստում Հայաստանը ձգտում է վարելու առավելագույնս բազմավեկտոր արտաքին տնտեսական քաղաքականություն: Ընդսմին կարելի է հուսալ, որ վերջին տարածաշրջանային զարգացումներից հետո Հայաստանում ԱՄՆ-ի և ԵՄ-ի ներդրումներն ավելանալու են: Միևնույն ժամանակ, հեռանկարային է թվում Չինաստանի, Իրանի, Հնդկաստանի և արաբական պետությունների հետ Հայաստանի առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը: Քանի որ Հայաստանի երկարաժամկետ տնտեսական զարգացումը կախված է լինելու միմիայն բարձրտեխնոլոգիական և մշակող արդյունաբերական ճյուղերի շարունակական զարգացումից, մինչդեռ ԵԱՏՄ, մասնավորապես՝ Ռուսաստանի շուկայում գերակշռում են հանքահումքային ոլորտները, ապա արտաքին տնտեսական քաղաքականության բազմավեկտորությունը առավել քան պահանջված է: Բազմավեկտոր տնտեսական քաղաքականության հաջողումը գլխավորապես պայմանավորված է լինելու այն հանգամանքով, թե որքան արագ կարող է Հայաստանը ինտեգրվել միջտարածաշրջանային տրանսպորտային նախագծերին, ինչպես նաև գրավիչ խոշոր ներդրումային նախագծեր առաջարկել օտարերկրյա գործընկերներին: ՀՀ-ում անհրաժեշտություն է առաջանում վերազինելու արդյունաբերության տեխնոլոգիական բազան՝ առավելապես ԱՄՆ-ից և ԵՄ-ից ձեռք բերելով ժամանակակից արտադրական ու մշակող հոսքագծեր, ինչպես նաև բարձրակարգ մասնագետների պատրաստման գործում: Սա նաև հնարավորություն կընձեռի ապահովելու արդյունաբերական արտադրական օբյեկտների գործունեության համապատասխանությունը բնապահպանական ժամանակակից չափանիշներին, առաջին հերթին՝ կայուն զարգացման հայեցակարգին: Դրանով Հայաստանը կստանա ավելի մեծ հնարավորություններ՝ նվազեցնելու Ռուսաստանի նկատմամբ Արևմտյան պատժամիջոցների խստացմամբ պայմանավորված առևտրատնտեսական ռիսկերը: Ի վերջո՝ ԵՄ-ի և ԱՄՆ-ի վստահելի գործընկերային հարաբերությունների պահպանումը բխում է Հայաստանի տնտեսական շահերից:

**Ադրբեջան:** Հարավային Կովկասում Ադրբեջանի ղեկավարությունը նպատակ ունի հասնելու տնտեսական զավթողագործության առավելագույն արդյունավետության: Դրա համար կան բավարար տնտեսական հիմքեր, այդ թվում՝ տարիների ընթացքում էներգակիրների արտահանման ծավալների մեծացումը, արտաքին տնտեսական համագործակցության խորա-

ցումը: Ադրբեջանը ակտիվորեն ինտեգրվում է Արևելք–Արևմուտք և Հյուսիս–Հարավ ուղղությունների հիմնական միջտարածաշրջանային տրանսպորտային ցանցերին (որպես օրինակ՝ Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթուղին, Սեմուր գետի վրայով Ռուսաստանի հետ նոր երթուղին, Արաքս գետի վրայով Իրանին կապող նոր կամրջի շինարարությունը և այլն): Ադրբեջանը նաև զարգացնում է ներքին տրանսպորտային ենթակառուցվածքները: Նրա շահերից է բխում նաև Չինաստանի «Գոտի և ճանապարհի» նախաձեռնության առանցքային մասնակից դառնալու հեռանկարը:

Ադրբեջանի տարածաշրջանային տնտեսական հեռանկարները կախված են նաև իր էներգետիկ ռեսուրսների տարանցման համար ենթակառուցվածքային ցանցի ընդլայնումից: Դրանով նա ձգտելու է, բացի պետական եկամուտների ավելացումից, գրավելու նաև օտարերկրյա շուկաներ և մեծացնելու իր միջազգային հեղինակությունը:

Ադրբեջանը նաև նպատակ ունի ավելի խորացնելու Թուրքիայի հետ իր ռազմավարական տնտեսական դաշնակցությունը: Ադրբեջանի և Թուրքիայի առևտրատնտեսական համագործակցությունը զարգանում է, իսկ փոխադարձ ներդրումները՝ աճում: Ադրբեջանը Թուրքիային դիտում է որպես իր էներգակիրների արտահանման հիմնական տարանցիկ ուղի:

Ներկայումս ակտիվանում են Հայաստան–Ադրբեջան և Հայաստան–Թուրքիա սահմանային տրանսպորտային երթուղիների վերաբացման հարցով բանակցությունները: Զուգահեռաբար մեծանում են միջտարածաշրջանային տրանսպորտային բեռնափոխադրումների կարևոր հանգույց դառնալու Հարավային Կովկասի հնարավորությունները: Ե՛վ Հայաստանը, և՛ Ադրբեջանը ակտիվացնում են իրենց տարածքներում տրանսպորտային նախագծերի իրագործումը: Հայաստանի տնտեսական և տրանսպորտային ապաշրջափակումից Ադրբեջանն ու Թուրքիան, ստացած օգուտների մասնանշումից բացի, չեն թաքցնում հետագայում դրանից առավելագույն օգուտ քաղելու իրենց մտադրությունը: Ռուսաստանի նկատմամբ արևմտյան երկրների պատժամիջոցների խստացման պայմաններում Ադրբեջանը ակտիվացնում է դեպի եվրոպական երկրներ գազի արտահանման ծավալների մեծացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը: Սա ևս հնարավորություն կստեղծի ավելի սերտացնելու ԵՄ-ի հետ առևտրատնտեսական հարաբերությունները:

**Վրաստան:** Տարածաշրջանային զարգացումների համատեքստում Վրաստանի տնտեսական հեռանկարները մեծապես պայմանավորված են երկրի արտաքին տնտեսական քաղաքականության բազմավեկտորությամբ և փոխլրացվածությամբ: Մասնավորապես՝ Վրաստանը պահպանում է ակտիվ տնտեսական հարաբերություններ ինչպես ԱՄՆ-ի և ԵՄ-ի, այնպես էլ Ռուսաստանի և Չինաստանի հետ: Վրաստանի իշխանությունները Չինաստանի հետ հարաբերությունների սերտացումը չեն դիտում որպես ՆԱՏՕ-ին և ԵՄ-ին ինտեգրման այլընտրանք: Վրաստանը ամենևին չի հեռանում ԱՄՆ-ից կամ եվրոպական երկրներից: Չնայած ԵՄ–Վրաստան և Չինաստան–Վրաստան ազատ առևտրային համաձայնագրերի կնքումից հետո սպասվում էր Վրաստանի արդյունաբերական ոլորտի շեշտակի առաջընթաց,

այնուամենայնիվ դա տեղի չունեցավ: Օտարերկրյա գործընկեր պետությունների ընձեռած բազմաթիվ հնարավորությունների պայմաններում Վրաստանի տնտեսությունը դեռևս գտնվում է տնտեսական աճման միջին և միջինից ցածր միջակայքերում: Մյուս կողմից՝ երկրի արդյունաբերական ոլորտների զարգացմանը խոչընդոտում են Վրաստանի ղեկավարության քայլերը՝ նպատակաուղղված առավելապես երկրի տրանսպորտային տարանցիկության մեծացմանը: Այսինքն՝ ստացվում է մի իրավիճակ, երբ Վրաստանի ղեկավարությունը ուղղակիորեն նախապատվություն է տալիս միջազգային բեռնափոխադրումներում երկրի տարանցիկության մեծացմանը, բայց գործնականում անուղղակիորեն չի կարևորում արդյունաբերության բարձրտեխնոլոգիական ճյուղերի զարգացումը: Հարկ է նշել, որ Վրաստանի հիմնական տնտեսական շահերից շարունակում է բխել ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ ռազմավարական տնտեսական համագործակցության ընդլայնումը:

Վրաստանը որդեգրել է եվրաատլանտյան ինտեգրման ուղին և ձգտում է դառնալու ԵՄ-ի անդամ: Դրան հասնելու համար նա ԵՄ-ի հետ կնքել է ազատ առևտրի համաձայնագիր, ակտիվ քաղաքականություն է վարում ԵՄ-ի «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում և ԵՄ-ի հետ կնքել է Ասոցիացման համաձայնագիր:

Եվրաատլանտյան ինտեգրման գործում իր կարևոր տարանցիկության՝ որպես խաղաքարտի օգտագործման նպատակով Վրաստանի ղեկավարությունը բարելավում է երկրի ներքին տրանսպորտային և արտադրամատակարարումային ենթակառուցվածքները, այդ թվում՝ չինական ներդրումների միջոցով, և ստեղծում է ազատ տնտեսական գոտիներ՝ գլխավորապես ծովափնյա շրջաններում:

Այս առումով սույն թվականի հուլիսի վերջին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու Չինաստան կատարած այցի ժամանակ հայտարարվել է Վրաստան–Չինաստան ռազմավարական համագործակցության մասին: Համաձայն համատեղ հայտարարության՝ Պեկինն ու Թբիլիսին պլանավորում են ընդլայնել համագործակցությունը ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ու մշակութային ոլորտներում[20]: Կողմերը ամրապնդելու են միջազգային հարցերում իրենց գործողությունների համադասումը և խորացնելու են միջպետական հարաբերությունները: Բացի այլ փաստաթղթերից, Չինաստանի հետ ստորագրվել է նաև «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակում երկկողմ համագործակցության պլանը[21]: Ընդսմին Վրաստանն ու Չինաստանը կարևորում են Անակլիի նավահանգստի շինարարության վերսկսումը (այն դադարեցվել էր 2017 թ.): Վրաստանի կառավարությունը պլանավորում է 2023 թ. աշնանը վերսկսել 20,5 մետր խորությամբ նավահանգստի շինարարությունը[22]:

[20] Տես *Тамаз Папуашвили*. Грузия и Китай объявили о стратегическом партнерстве. «Meydan.tv», 11 августа 2023 (https://www.meydan.tv/ru/article/gruziya-i-kitaj-obyavili-o-strategicheskom-partnyorstve/):

[21] Տես նույն տեղում:

[22] Տես նույն տեղում:

Այնուամենայնիվ, միջտարածաշրջանային բեռնափոխադրումներում Վրաստանի դերը դեռևս սահմանափակ է: Դա պայմանավորված է ոչ միայն Չինաստանի «Գոտի և ճանապարհի» նախաձեռնության կենտրոնական տրանսպորտային երթուղով բեռնափոխադրումների սակավությամբ, այլև Հյուսիս–Հարավ ուղղություններով բեռնափոխադրումների ծավալները մեծացնելու դժվարությամբ (մասնավորապես՝ ավտոճանապարհների դժվարանցանելիության և երկաթուղային ցանցի թերզարգացածության հետևանքով): Վրաստանով բեռնափոխադրումների ծավալները կարող են կրճատվել Հայաստան–Ադրբեջան և Հայաստան–Թուրքիա սահմանների բացման դեպքում:

Թեև «Վարդերի» հեղափոխությունից և 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո Վրաստանի իշխանությունները էապես սահմանափակեցին Ռուսաստանի հետ տնտեսական համագործակցությունը, այնուամենայնիվ, վերջին 5 տարիների ընթացքում Վրաստանը ավելացրել է Ռուսաստանի հետ առևտրաշրջանառությունը: Ավելին. նրա ներկայիս իշխանությունները չեն պատրաստվում մեծացնել ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ տնտեսական համագործակցության ծավալները՝ ի հաշիվ Ռուսաստանի:

Հեռանկարում Թուրքիայի և Ադրբեջանի հետ Վրաստանի տնտեսական համագործակցությունն ավելի է խորանալու: Թուրքիան և Ադրբեջանը Վրաստանում առավել խոշոր ներդրող պետություններից են և իրենց ներդրումներն ուղղում են տնտեսության բոլոր ոլորտներ: Նրանք Վրաստանի հետ նաև իրականացրել և իրականացնում են համատեղ ներդրումային նախագծեր էներգետիկ ու տրանսպորտային ոլորտներում: Այդ համագործակցության շրջանակներում վերջին տարիներին ակտիվորեն ձեռնարկվում է Ադրբեջան–Վրաստան–Թուրքիա մաքսային ընթացակարգերի ներդաշնակումը: Վրաստանը կարևորում է Ադրբեջանի և Թուրքիայի հետ իր համատեղ նախագծերը, քանի որ չի ցանկանում հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից հետո նվազեցնել տարածաշրջանում իր տնտեսական դերը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասի պետություններն ունեցել են զարգացման տարբեր նախադրյալներ: Ներկայումս երեքն էլ գտնվում են ագրարային-արդյունաբերական զարգացման փուլում: Միևնույն ժամանակ, բոլոր երեք պետություններում էլ տարեցտարի ավելանում է ՀՆԱ-ում ծառայությունների ոլորտի մասնաբաժինը: Այնուամենայնիվ, եթե Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարությունները ձգտում են իրենց ազգային տնտեսություններում նպաստելու բարձր ավելացված արժեք ունեցող բարձրտեխնոլոգիական ծառայությունների դերի մեծացմանը, ապա այս հարցում Վրաստանի հաջողությունները խիստ համեստ են: Միևնույն ժամանակ, և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը փորձում են ակտիվորեն համագործակցել բարձրտեխնոլոգիական ոլորտներում համաշխարհային առա-

ջատար դիրքեր զբաղեցնող պետությունների հետ: Դրա հետ մեկտեղ երեք պետություններն էլ, գտնվելով կարևոր միջտարածաշրջանային տրանսպորտային երթուղիների խաչմերուկում, ձգտում են տարածաշրջանային և արտատարածաշրջանային պետությունների հետ համագործակցության միջոցով միանալու խոշոր ենթակառուցվածքային նախագծերին:

## ОСОБЕННОСТИ И ТЕНДЕНЦИИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ЮЖНОКАВКАЗСКИХ ГОСУДАРСТВ

*А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, доцент, ученый-аналитик Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Изучение и анализ истории экономического развития государств Южного Кавказа в постсоветский период, а также сравнение их основных макроэкономических показателей свидетельствует о том, что в промежутке с 1990-ых по начало 2000-ых годов для всех трех государств насущными являлись проблемы создания оптимальной рыночной структуры, монополизации, социального неравенства, неравномерного территориального развития, а также формирования значительной по удельному весу теневой экономики. Эти факторы существенно повлияли на перспективы экономического развития этих государств. Тем не менее, в последние годы последствия отмеченных негативных факторов в значительной степени были устранены во многом благодаря выявлению новых возможностей для экономического развития, увеличению объема иностранных инвестиций и совершенствованию транспортной и энергетической инфраструктур. При этом в особенности со второй половины 2000-х годов государства региона стали активнее расширять торгово-экономические отношения со странами Европы, Китаем, Индией и Ираном, стремясь тем самым максимально диверсифицировать свою зависимость от зарубежных рынков.

Анализ перспектив дальнейшего экономического развития этих южнокавказских государств с точки зрения происходящих в регионе существенных процессов последних лет позволяет прийти к выводу о том, что внерегиональные государства рассматривают Южный Кавказ как важнейший узел транспортных грузоперевозок и транзита энергоресурсов. Внимание к нашему региону таких центров силы, как США, ЕС, Россия, Иран, Турция, Китай и Индия, значительно возросло, и все три государства региона стали ареной их геополитической и геоэкономической конкурентной борьбы. Эти центры силы стремятся углубить как экономические, так и политические отношения с Арменией, Грузией и Азербайджаном, имея целью максимальное использование транзитного потенциала региона, что создает благоприятные

условия для экономического развития государств региона и самого региона в целом. При этом для каждого из этих государств возникает проблема умелого использования во благо своей экономики создавшейся в регионе и вокруг него экономической обстановки.

## THE PECULIARITIES AND TENDENCIES OF ECONOMIC DEVELOPMENT OF THE SOUTH CAUCASIAN STATES

*A. G. DAVTYAN, PhD in Economics, Associate Professor, Research Fellow, Strategic Gaming and Simulation Group, INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

The study and analysis of the history of economic development of the states of the South Caucasus in the post-Soviet period, as well as the comparison of their main macroeconomic indicators, shows that in the period from the 1990s to the early 2000s, the problems of the creation of an optimal market structure, monopolization, social inequality, uneven territorial development, as well as the formation of a shadow economy, significant by its specific weight, were pressing for all three states. These factors significantly affected the perspectives for economic development of these states. Nevertheless, in recent years, the consequences of the mentioned negative factors have been considerably precluded, largely due to the eduction of new opportunities for economic development, increase of the volume of foreign investments and improvement of transport and energy infrastructures. Withal, especially since the second half of the 2000s, the states of the region have began to more actively expand their trade and economic relations with European countries, China, India and Iran, thereby trying to diversify their dependence on foreign markets as much as possible.

The analysis of the perspectives for further economic development of the South Caucasian states from the viewpoint of the significant processes occurring in the region in recent years makes it possible to conclude that non-regional states consider the South Caucasus as the most important hub for cargo transportation and transit of energy resources. The attention to our region from such centers of power as the USA, EU, Russia, Iran, Turkey, China and India, has significantly increased, and all three states of the region have become the arena for their geopolitical and geoeconomic competitive activity. These centers of power seek to deepen both economic and political relations with Armenia, Georgia and Azerbaijan, having the objective to maximally use the transit potential of the region, this creating favorable conditions for the economic development of the states of the region and the region itself as a whole. In addition to that, each of these states faces the problem of skillfully using the economic situation shaped in the region and around it for the benefit of its economy.

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



ՀՀ Անվտանգության խորհրդի արտահերթ նիստը, որը ղեկավարում էր Վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիայի հետևանքով ստեղծված իրավիճակը և դրա կարգավորմանն ուղղված քայլերը

Երևան, 2023 թ. սեպտեմբերի 21



ՀՀ Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի
և Հարավային Կովկասի և Վրաստանում ճգնաժամի հարցերով
ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարի ու ՀՀ-ում ԵՄ-ի
պատվիրակության ղեկավար, Արտակարգ և Լիազոր դեսպան
Վասիլիս Մարագոսի հանդիպումը տարածաշրջանում
ստեղծված անվտանգային իրադրության հարցով

Երևան, 2023 սեպտեմբերի 22



Ֆրանսիա կատարած իր աշխատանքային այցի ժամանակ
Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար
Սուրեն Պապիկյանը հանդիպել է Ֆրանսիայի Հանրապետության
Պաշտպանության նախարար Սեբաստիեն Լեկոռնյուի հետ

Փարիզ, 2023 թ. հոկտեմբերի 22

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի գիտական խորհրդի նիստ

Երևան, 2023 թ. հոկտեմբերի 26








Դրվագներ հրատարակությանը «Հայկական բանակ» ՌԳՀ հերթական համարի նախապատրաստման աշխատանքներից

Երևան, 2023 թ. հոկտեմբերի 26







# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ*

*Վ. Ա. ՇԵՐԵՆՑ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան*



## Ներածություն

21-րդ դարի երկրորդ տասնամյակում, երբ միաբևեռ աշխարհակարգը ճաք է տվել, իսկ տարածաշրջայնացման վրա հիմնվող բազմաբևեռ կարգը դեռ չի ձևավորվել, առանձնակի կարևորություն են ստանում այն տարածաշրջանային դերակատարները, որոնք, մի կողմից, ունեն ռազմաքաղաքական և տնտեսատեխնոլոգիական մրցակցային ներուժ, մյուս կողմից՝ փոխակերպվող աշխարհում գերիշխանության հասնելու տեսլական և կամք: Այս առումով անթաքույց հավակնություններ ունի նաև Թուրքիայի Հանրապետությունը, որի բացառիկ աշխարհագրական տեղադիրքը, չորս սահմանակից ծովերը և միջազգային տարանցիկ նեղուցները, տնտեսական ներուժը, կայսերական ժառանգությունն ու ժողովրդագրական աճը նպաստում են ռազմավարական մտածողության, հետևապես նաև ռազմավարական պլանավորման սկզբունքների փոփոխությանը: Գտնվելով Եվրոպայի և Մերձավոր Արևելքի ջրբաժանում՝ Թուրքիան հաշվի է առնում, մի կողմից, ապագային միտված ԵՄ-ի ռազմավարական մշակույթը, որի հիմքում դրված են արևմտյան քաղաքակրթության արժեքներն ու վերազգային համակարգերի փնտրտուքը, իսկ մյուս կողմից՝ մերձավորարևելյան երկրների ռազմավարական մշակույթը, որն առաջնորդվում է անցյալի իներցիայով և չդադարող հակամարտությունների պայմաններում փորձում է հաջողել ազգակերտման առաքելությունը: Այդ է պատճառը, որ Թուրքիան, հայտնվելով այս իրարամերժ ռազմավարական մշակույթների կենտրոնում, ցուցաբերում է տարբեր վարքեր. Եվրոպայի (Բալկաններ) հետ խոսում է միջազգային իրավունքի լեզվով, իսկ Մերձավոր Արևելքի հետ՝ «ռեալ քաղաքականության» (գերմ.՝ *“Realpolitik”*) տրամաբանությամբ: Ավելին. հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մերձավոր Արևելքում միջազգային հարաբերությունների վարման հիմնական միջոցը հակամարտությունն է (բնական ռեսուրսների համար, համոզմունքների, ինքնությունների և գաղափարախոսությունների), Մերձավոր Արևելքի երկրների հետ հարաբերվելիս «ռեալ քաղաքականությունը» Թուրքիայի համար դառնում է ոչ թե ընտրութ-

---

* Հոդվածը նախնական տարբերակով ստացվել է 28.06.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 10.11.2023:

յուն, այլ անհրաժեշտություն[1]: Ասվածը գործնականում դրսևորվում է թուրքական ռազմավարական մշակույթի վերաարժեքավորմամբ, քանի որ այն ոչ միայն նպաստում է համաթուրքական ինքնության ամրապնդմանը, այլև հիմք է ծառայում պետության անվտանգային ճարտարապետության, ինչպես նաև միջազգային հարաբերություններում Թուրքիայի տեղի ու դերի վերանայման համար:

Ավանդաբար ռուսական ազդեցության գոտի համարվող Հարավային Կովկասում, որտեղ Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով խախտվել է ստատուս-քվոն և առաջացել է տարածաշրջանային գործընթացների կառավարման ճգնաժամ, Թուրքիան ցուցաբերում է շեշտված նախաձեռնողականություն: Այդ ակտիվությունն արտահայտվում է ինչպես տարածաշրջանի պետությունների համագործակցության «3+3» ձևաչափի ձևավորելու առաջարկությամբ, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացով, որը, փաստորեն, Թուրքիան պայմանավորում է խաղաղության հայ-ադրբեջանական պայմանագրի կնքմամբ ու արտատարածքային կապուղիների անցկացմամբ[2]: Այս առումով մեծ կարևորություն է ստանում Թուրքիայի ինքնուրույնության աստիճանի բարձրացման ձգտումների և ռազմավարական մշակույթի փոխկապվածության ուսումնասիրությունը, քանի որ այն հանգամանքը, թե ռազմավարական ի՛նչ մտածողությամբ ու շարժառիթներով է որոշումներ կայացնում թուրքական քաղաքական վերնախավը, ուղղակիորեն առնչվում է այն հարցին, թե ինչ ռազմավարական մշակույթով է ձգտում Թուրքիան հանդես գալու Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում:

**Ռազմավարական մշակույթի գիտական քննարկում**: Ակադեմիական գրականության մեջ ընդունված է առանձնացնել ռազմավարական մշակույթ հետազոտողների երեք սերունդ[*]: Առաջին սերնդի ներկայացուցիչները ռազմավարական մշակույթի ձևավորումը կապում են պատմական փորձառության, քաղաքական մշակույթի և աշխարհագրության հետ՝ համարելով, որ այս կամ այն հասարակության ռազմավարական մշակույթը համասեռ ու միատարր է և, անկախ ժամանակից, ռազմավարական ընտրության դեպքում թելադրում է որոշակի վարքագիծ: Առաջին սերնդի ականավոր մտածող Քոլին Գրեյը համարում է, որ ռազմավարական մշակույթն առաջարկում է ոչ թե վարքագծի բացատրական պատճառականություն, այլ հարատեքստ: Ըստ գիտնականի՝ ռազմավարական մշակույթը որպես ընդհանրական երևույթ ընկալելու համար, հարկավոր է որպես մեկ ամբողջություն դիտարկել մի շարք սկզբունքներ՝ ռազմավարական վարքագծի ու մշակույթի ան-

[1] Տես *H. Özdemir.* Türkiye'nin "Sınır-Ülke" Niteliği: Farklı Stratejik Kültürler Arasında Türk Dış Politikası. "Avrasya Etüdleri", 2008, Cilt: 33, Sayı: 1:

[2] Տես *Y. D. Bozkuş.* Karabağ Savaşı Sonrası Türkiye-Azerbaycan-Ermenistan İlişkileri. "Journal of Balkan and Black Sea Studies", June 2022, Year 5, Issue 8:

[*] Ներկայումս որոշ մասնագետներ առանձնացնում են ռազմավարական մշակույթի չորս սերունդ՝ սկսած 2000-ական թվականներից մինչև մեր օրերը:

քակտելիությունից ընդհուպ մինչև ռազմավարական մշակույթի տարաբնույթ դասակարգումների հնարավորություն[3]: Այդպիսի դասակարգումների շարքում (օրինակ՝ ըստ աշխարհագրության, սերունդների և այլն) Գրեյը ռազմավարական մշակույթները դասակարգում է նաև ըստ «մեծ ռազմավարության» գոյության: Երկրորդ սերնդի հետազոտողներն, ընդհակառակը՝ ռազմավարական մշակույթը տարանջատում են վարքագծից՝ համարելով, որ քաղաքական որոշում կայացնողներն ունեն մշակույթով պայմանավորված սահմանափակումներից կամավոր կերպով խուսափելու հնարավորություն[4]: Իսկ ահա երրորդ սերնդի ներկայացուցիչները մշակույթի սկզբնաղբյուր համարում են ոչ այնքան պատմական հիշողությունը, որքան վերջին փորձառությունը: Ավելին. ռազմավարական մշակույթի բնութագրման համար որպես անկախ փոփոխականներ նրանք օգտվում են ռազմական, ռազմաքաղաքական, կազմակերպական և այլ մշակույթներից՝ կենտրոնանալով այն դեպքերի ուսումնասիրության վրա, երբ շահերի վերաբերյալ նյութական պատկերացումներով չի բացատրվում որոշակի ռազմավարական ընտրությունը[5]:

Սերունդների գաղափարական ու հետազոտական մոտեցումների այս տարբերությունները չափազանց բարդացնում են ռազմավարական մշակույթի սահմանումը: Օրինակ՝ երրորդ սերնդի ներկայացուցիչ Ալաստեր Ջոնստոնը ռազմավարական մշակույթը դիտում է որպես «խորհրդանիշների համակարգ», որն ունի 2 բաղադրիչ: Խորհրդանիշների առաջին համախումբը, ըստ գիտնականի, վարքագծի ընտրությունը սահմանափակող գաղափարական միջավայրի՝ բնականոն լինելու վերաբերյալ դատողություններն են, այն է՝ պատերազմի դերը (անխուսափելի է, թե նորմայից շեղում է), հակառակորդի բնույթն ու նրանից բխող սպառնալիքը, ինչպես նաև ուժի կիրառման նպատակահարմարությունը: Իսկ ահա երկրորդ ենթահամակարգը գործառական մակարդակի դատողություններն են այն մասին, թե որոնք են սպառնալիքներին դիմագրավելու առավել արդյունավետ ռազմավարական տարբերակները: Հիմնվելով իր հետազոտության արդյունքների վրա՝ Ջոնստոնը ձևակերպում է պարզ, բայց տարողունակ սահմանում. «Ռազմավարական մշակույթը գաղափարական միջավայր է, որը սահմանափակում է վարքագծային ընտրությունները»[6]:

**Թուրքիայի ռազմավարական մշակույթի էությունը:** Առհասարակ ինչպես ցանկացած պետության, այնպես էլ Թուրքիայի դեպքում, հնարավոր

---

[3] Տես *C. S. Gray.* Strategic culture as context: the first generation of theory strikes back. “Review of International Studies”. Cambridge University Press, January 1999, Vol. 25, N 1:

[4] Տես *B. S. Klein.* Hegemony and Strategic Culture: American Power Projection and Alliance Defence Politics. “Review of International Studies”, April 1988, Vol. 24, N 2:

[5] Տես *A. I. Johnston.* Cultural Realism: Strategic Culture and Grand Strategy in Chinese History. Princeton University Press. Princeton, USA, 1998, PP. 40–41:

[6] Տես *A. I. Johnston.* Thinking about Strategic Culture. “International Security”, Spring 1995, Vol. 19, N 4:

է ռազմավարական մշակույթի հաշվառմամբ բացատրել և ավելի կանխատեսելի դարձնել միջազգային հարաբերությունների մրցակցային պայմաններում տվյալ պետության վարքը: Եթե երկբևեռ աշխարհակարգում «Սառը պատերազմը» պատճառ էր դարձել, որ Թուրքիայի «ռեալ քաղաքականության» մշակույթը հանգեցնի պաշտպանողական արտաքին քաղաքականության, ապա ԽՍՀՄ փլուզումից հետո տնտեսության զարգացման հաշվին Թուրքիան հաստատակամ դարձավ բռնության սպառնալիքի և ուժի կիրառման միջոցով իր ազգային անվտանգության խնդիրները լուծելու հարցում: Մինչև 20-րդ դարի վերջը Թուրքիայի ռազմավարական մշակույթը կառուցվում էր երկիրն արևմտականացնելու գաղափարախոսական առանցքի շուրջ: Բացի այդ, թեպետ քաղաքական իշխանությունները փոխվում էին, սակայն ռազմական վերնախավն էր որոշում արտաքին քաղաքականության առաջնահերթությունները: Եվ, որ պակաս կարևոր չէ, միջազգային ասպարեզում Թուրքիայի բարեկամ և թշնամի երկրները որոշվում էին Հյուսիսատլանտյան դաշինքի համար սպառնալիքների և նրա առաջնահերթությունների ընկալման համատեքստում, ինչը ժամանակի ընթացքում խոր հետք թողեց Թուրքիայում սոցիալ-մշակութային ճանաչողության երկակի կառուցվածքի ձևավորման վրա[7]: Բիրդիշլին ու Բաշուրգանն այս առումով նկատի ունեն Թուրքիայում յուրային և օտար մշակույթների գոյակցությունն ու այդ տեսանկյունից աշխարհընկալման ձևավորումը: Ավելին. ըստ հեղինակների՝ տարբեր մշակույթների միջև եղած բացերը լրացվում են արևելականության (օրիենտալիզմ) և արևմտականության (օքսիդենտալիզմ) վերաբերյալ կարծրատիպերով:

Թեպետ 2002 թ. «Արդարություն և զարգացում կուսակցության» (ԱԶԿ) իշխանության գալուց հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ազատական պետություն կառուցելու համար, սակայն, ինչպես ցույց տվեց ներքին դերակատարների (ընդդիմադիր կուսակցություններ, փոքրամասնություններ) և սիրիական վարչակազմի դեմ պայքարը, թուրքական քաղաքական վերնախավը հետևողականություն է ցուցաբերում 1990-ական թվականների «ռեալ քաղաքականության» մշակույթի նկատմամբ՝ աշխարհն ընկալելով անվտանգակենտրոն (անգլ.՝ *security-centric*) դիտանկյունից[8]: Բայցևայնպես, հարկ է նկատել, որ ԱԶԿ-ն իր կառավարման ավելի քան 20 տարիների ընթացքում չի կիրառել միևնույն մարտավարությունը: Ա. Դավութօղլուի առաջ քաշած «զրո խնդիր հարևանների հետ» ու «հավասարակշռություն անվտանգության ու ազատության միջև» սկզբունքների գերակայության և մերձավոր հարևանների նկատմամբ «փափուկ» ուժին դիմելու շրջանում Թուրքիան նախապատվություն է տվել փոխզիջումային մշակույ-

---

[7] Տես *F. Birdişli, A. Başurgan.* Güvenlik Politikalarının Konstrüktivist Bir Unsuru Olarak Güvenlik Kültürü ve Türkiye Örneği. “Sosyal Bilimler Enstitüsü Dergisi”. Adnan Menderes Üniversitesi, 2017, Cilt: 4, Sayı: 4:

[8] Տես *O. Erpul.* Strategic Culture and Turkey. “Foreign Policy”. Foreign Policy Institute, 2014, Vol. XXXXI:

թին՝ հիմնված տնտեսության զարգացման հայեցակարգի վրա, ինչի լավագույն օրինակը 2010–2011 թթ. մշակված «Տեսլական 2023»-ն է, ըստ որի՝ Թուրքիան պետք է դառնա աշխարհի ամենահզոր տնտեսությունն ունեցող տասը պետություններից մեկը[9]: Թուրքիայի անվտանգային մշակույթին բնորոշ նման մտածողությունը պայմանավորված է օսմանական ժառանգությամբ, քանի որ Օսմանյան Թուրքիան եղել է միջին տնտեսական ներուժով պետություն, սակայն ֆինանսական բացը չի խանգարել, որ թուրքերը հավասարը հավասարի պես հարաբերվեն մեծ տերությունների հետ: Բայցևայնպես, եթե հանրապետության հռչակումից հետո առաջնային էր նոր ինքնության կերտման հարցը, քանի որ Մուսթաֆա Քեմալը լուծում էր քաղաքական ազգ ձևավորելու խնդիր, իսկ տնտեսության վրա հիմնված արտաքին քաղաքականության մշակման օրակարգը մղել էր երկրորդ պլան, ապա Էրդողանի կառավարման տարիներին, երբ ազգային շահերը սահմանվում են շատ ավելի մեծ աշխարհագրության հաշվառմամբ, քան Թուրքիայի Հանրապետության տարածքն է, արտաքին և անվտանգային քաղաքականությունը պայմանավորվում է ինչպես ֆինանսական հզորության մեծացմամբ, այնպես էլ քաղաքական ու տնտեսական համաշխարհային համակարգում Թուրքիայի ինտեգրմամբ[10]:

Ինչպես երևում է մասնագիտական գրականության քննությունից, օսմանյան պետության ուրվականը շարունակում է շրջել հանրապետական Թուրքիայում, քանի որ կայսրության փլուզումը խոր հետք է թողել թուրքական հավաքական էքնոհոգեբանության վրա: Սա ամենևին էլ զարմանալի չէ, քանի որ Թուրքիան մասնատելու արտաքին ուժերի փորձերը շարունակվել են նաև հետագայում (որպես օրինակ՝ երկրորդ աշխարհամարտից հետո խորհրդային Հայաստանի ու Վրաստանի պատմական հողերի վերադարձի առնչությամբ ԽՍՀՄ արդարացիորեն ներկայացրած պահանջները): Այս հանգամանքն իր հերթին ունի տարբեր ենթաշերտեր, որոնցից թերևս ամենակարևորը մրցակից մեծ պետությունների՝ փոքր ազգերին ընդդեմ Թուրքիայի օգտագործելու մտավախությունն է:

Հարկ է նկատել, որ ամերիկացի տեսաբանների աշխատությունների հիման վրա Թուրքիայի ռազմավարական մշակույթը բնութագրելիս մի շարք հարցեր են առաջանում: Նախ. արդյոք գլխավորապես արևմտյան փորձի ուսումնասիրությամբ ձևավորված տեսությունը պետք է տեղայնացվի հիմնականում Արևելքի մշակույթից ազդված Թուրքիայի պարագայում: Երկրորդ. որքանով է Թուրքիայի մշակույթը համապատասխանում, դիցուք, ռազմավարական մշակույթ հետազոտողների, հատկապես՝ առաջին սերնդի ներկայացուցիչների տեսությանը, եթե վերջիններիս աշխատությունների

---

[9] Տես *R. Erdağ, T. Kardaş.* Türk Dış Politikası ve Stratejik Kültür. Türk Dış Politikası Yıllığı 2012. Siyaset, Ekonomi ve Toplum Araştırmaları Vakfı (SETAV), 1. Baskı. Ankara, Aralık 2013, s. 70–71:

[10] Տես *T. Oğuzlu.* Güvenlik Kültürü ve Türk Dış Politikası. “Bilig”. Türk Dünyası Sosyal Bilimler Dergisi, Ahmet Yesevi Üniversitesi. Ankara, Kış 2015, Sayı: 72:

առանցքում «միջուկային մշակույթն» է, իսկ Թուրքիան իր զինանոցում ատոմային զենք չունի: Երրորդ. որ սերնդի գաղափարներն են, որ կարող են հնարավորինս դիպուկ կերպով նկարագրել Թուրքիայի ռազմավարական մշակույթը, հատկապես երբ խնդիր չի դրվում պաշտպանելու կամ հերքելու որևէ սերնդի առաջ քաշած մոտեցումները: Այս շարքում առավել կարևոր է երրորդ հարցադրումը, որին հնարավոր է պատասխանել բուն թուրքական ռազմավարական մշակույթին նվիրված հետազոտությունների առադրման միջոցով:

Մասնագետների մեծ մասի կարծիքով՝ Թուրքիայի ռազմավարական մշակույթն ունի երկճյուղավորում (դիխոտոմիա), քանի որ մրցակցային պայմաններում գոյակցում են հանրապետական և նորօսմանական մտածողությունները: Ընդ որում, հանրապետական ռազմավարական մշակույթին բնորոշ են միատարրության և միասնության մղումը, Սևրի բարդույթը, ինքնիշխանությամբ և տարածքային ամբողջականությամբ սահմանափակվող նեղ անվտանգային պատկերացումները, փոխզիջման դիմելու ցանկություն չունենալու և կողմնակի հակամարտություններում ներգրավվելու դժկամությունը, մինչդեռ նորօսմանականին հատուկ են տարբեր ինքնությունների (հատկապես՝ իսլամական) ընդունումը, Արևմուտք–Արևելք կողմնորոշումների վերահաշվեկշռումը, մերձավոր տարածաշրջաններում ռազմաքաղաքական և տնտեսական գլխավոր ուժը դառնալու ձգտումը, ակտիվության և անզամ միջամտության պատրաստակամությունը (հատկապես՝ Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասում), ինչպես նաև տարածքային ամբողջականության շրջանակում չսահմանափակվող անվտանգային շահերը[11]:

Որոշ փորձագետներ, սակայն, չեն առանձնացնում իրարից անկախ գոյություն ունեցող երկու ռազմավարական մշակույթներ: Թեպետ ընդունում են, որ թուրք ժողովրդի պատմությունը կարելի է բաժանել երկու շրջանի, սակայն թուրքական ռազմավարական մտածողությունը դիտում են շղթայական զարգացման մեջ՝ համարելով, որ պատվի, փառքի և ուժի ընկալումների վրա կառուցված թուրքական ռազմավարական մշակույթին բնորոշ են միատարրությունը (ըստ որի բոլոր թուրքերը նույնական են), անապահովության զգացումը (դրսևորվում է ազգային անվտանգության հայեցակարգի սահմանափակմամբ զուտ ֆիզիկական չափումներով, ամենուր թշնամիների որոնմամբ, դաշնակիցների նկատմամբ անվստահությամբ), ռիսկից խուսափումը (չեն դիմի որևէ քայլի, եթե վստահ չլինեն, որ կհաջողեն) և ժխտելու ու

[11] Տես *R. Evans.* Turkey’s Shifting Strategic Culture: Part 2 – The Rise of Republican Strategic Culture. “Foreign Policy Research Institute”, 20 October 2014 (https://www.fpri.org/ 2014 /10/turkeys-shifting-strategic-culture-part-2-the-rise-of-republican -strategic-culture/); *նույնի*՝ Turkey’s Shifting Strategic Culture: Part 3 – From Republican to Neo-Ottoman. Foreign Policy Research Institute, 22 October 2014 (https://www.fpri.org/2014/10/turkeys-shifting-strategic-culture-part-3-from-republican-to-neo-ottoman/):

խաբելու հակվածությունը ինչպես բանակցելիս, այնպես էլ միջազգային դիվանագիտական գործիքակազմը մեկնաբանելիս[12]:

Թեպետ անվիճելի է, որ Թուրքիան է Օսմանյան Կայսրության իրավահաջորդը, և առաջին հայացքից կարելի է խոսել թուրքական անփոփոխ ու կուռ ռազմավարական մշակույթի մասին, սակայն պայմանավորված թեկուզ միայն այն հանգամանքով, որ Թուրքիայի քաղաքական համակարգն առնվազն 1950 թվականից կառուցվում է աշխարհիկ-արևմտամետների և իսլամամետ-պահպանողականների գաղափարական պայքարի առանցքի շուրջ, ինքնըստինքյան հաստատվում է Թուրքիայի ռազմավարական մշակույթի երկճյուղավորման վարկածի իրավացիությունը: Պնդումը կարելի է հիմնավորել նաև ինչպես ռազմավարական մշակույթի հետազոտության երրորդ սերնդի ներկայացուցիչ Ա. Ջոնստոնի խոսքով («Որոշակի հասարակության աշխարհագրական, քաղաքական, մշակութային և ռազմավարական փորձի բազմազանությունը կստեղծի ռազմավարական բազմաթիվ մշակույթներ»), այնպես էլ Մ. Մուֆթիի հիմնարար աշխատությամբ, ըստ որի Թուրքիայի քեմալական ավանդույթներին Թ. Օզալը հակադրվել է ռազմավարական մշակույթի հակահանրապետական հարացույցով, Ն. Էրբաքանն իր իսլամականությամբ, իսկ Էրդողանն ու Դավութօղլուն՝ նորօսմանականության տեսլականից բխող իսլամական արժեքների ու ժողովրդավարության համակցման փորձով[13]:

**Ռազմավարական ինքնուրույնության ձգտումները Թուրքիայի ռազմավարական մշակույթի համատեքստում:** Թեպետ «ռազմավարական ինքնուրույնություն» արտահայտությունը փորձագիտական համայնքին հայտնի է դեռ 1994 թվականից, երբ «Պաշտպանության մասին սպիտակ թղթում» Ֆրանսիան ամրագրեց ինքնուրույնության ձգտելու իր տեսլականը, սակայն Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավի համար սա նոր մոտեցում է՝ արձագանքելու այն մարտահրավերներին, որոնք ցնցում են երկիրը 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից և Սիրիա կատարած ներխուժումից («Եփրատի վահան» օպերացիա) հետո:

Ռազմավարական ինքնուրույնության ձևակերպման և առաջնահերթությունների սահմանման գործում մեծ դեր ու նշանակություն ունի «Քաղաքական, տնտեսական և սոցիալական հետազոտությունների հիմնադրամ» (թուրք.՝ *SETAV*) վերլուծական կենտրոնը, որը սերտորեն կապված է Նախագահ Էրդողանի գլխավորած ԱԶԿ-ի հետ և գործում է ոչ միայն որպես խորհրդատու, այլև՝ որպես «ուղեղների մատակարար»: Հիմնադրամի ջանքերով լույս տեսած «Թուրքիայի մեծ ռազմավարություն» հիմնարար աշխա-

[12] Տես *M. A. Templar.* Turkey: Conceptual Framework. Ideology, Strategic Culture, and National Security. “Macedonian league”, 15 November 2015, PP. 3–4 (http://www.macedonianleague.org/news/turkey-conceptual-framework-ideology-strategic-culture-and-national-security):

[13] Տես *M. Mufti.* Daring and Caution in Turkish Strategic Culture: Republic at Sea. Hampshire: Palgrave Macmillan, January 2009:

տության մեջ Թուրքիայի արտաքին և անվտանգային քաղաքականության վերաիմաստավորման նպատակով կայունությանն ու ռազմավարական ճկունությանը զուգահեռաբար առանձնացվում է նաև ռազմավարական ինքնուրույնությունը իր երեք բաղադրիչներով՝ քաղաքական ինքնուրույնություն, քաղաքացիական և ռազմական գործողությունների անկախ պլանավորման համար անհրաժեշտ օպերատիվ ինքնուրույնություն և դրա համար՝ արդյունաբերական (տեխնոլոգիական) ինքնուրույնություն[14]: Կարելի է փաստել, որ ռազմավարական ինքնուրույնությունը Թուրքիայի՝ որպես պետության միայնակ գործելու հնարավորությունների և կարողությունների ցուցիչն է ինչպես ազգային և տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային մակարդակում, ընդ որում, այնպիսի կարողությունների, որոնք ունեն նյութական և ոչ նյութական գնահատականներ: Այլ ձևակերպմամբ՝ առաջ է քաշվում ռազմավարական ինքնուրույնության այնպիսի մոդել, որը Թուրքիային հնարավորություն կտա տնտեսական և ռազմատեխնոլոգիական առումով լինելու զգալիորեն ինքնաբավ՝ արտաքին և անվտանգային քաղաքականության մեջ կատարելով զսպիչ դեր: Առանձնակի ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ օպերատիվ ինքնուրույնության հարցում վճռորոշ գործոն է որոշումներ կայացնելու ազատությունը: Սա կարևոր է այնքանով, որ աշխարհաքաղաքական ճարտարապետության վրա ազդելու համար տարածաշրջանային քաղաքականության մեջ ոչ միայն կասկածի տակ չի դրվում նախաձեռնողականության (պրոակտիվության) պահպանման հարցը, այլև բնական է համարվում դաշնակիցների հետ առճակատումը (օրինակ՝ Միացյալ Նահանգների, որն աջակցում է Սիրիայում ինքնավարության ձգտող քրդերին):

Հատկանշական է, որ արտասահմանցի մասնագետներից ոմանք Թուրքիայի ռազմավարական մշակույթը բնութագրելիս մատնանշում են այնպիսի հատկանիշներ, որոնք գրեթե նույնությամբ կրկնում են «Թուրքիայի մեծ ռազմավարության» մեջ տեղ գտած ինքնուրույնության բաղադրիչները: Այսպես. առանձնացվում են արտաքին քաղաքականության կոնկրետ նպատակակետերին հասնելու համար ռազմավարական մշակույթի հիմքում դրված երեք հրամայականներ՝ բարձրտեխնոլոգիական պաշտպանական համալիրի հիմնում, խլամական ինքնության գերակայություն և տարբեր ոլորտներում տարբեր պետությունների հետ ճկուն դաշինքների ձևավորում[15]: Փաստորեն, այն, ինչ համարվում է բարձրտեխնոլոգիական պաշտպանական համալիրի հիմնում, նույնական է «Թուրքիայի մեծ ռազմավարության» արդյունաբերական ինքնուրույնությանը, իսկ այն, ինչ համարվում է ճկուն դաշինքների ձևավորում, ոչ այլ ինչ է, քան քաղաքական ինքնու-

---

[14] Տես *M. Yeşiltaş, F. Pirinççi.* Küresel Dönüşüm Sürecinde Türkiye’nin Büyük Stratejisi. SETAV, 1. Baskı. İstanbul, Ağustos 2020, s. 81:

[15] Տես *П. В. Шлыков.* Турецкий кульбит: Стратегическое хеджирование – опыт практического применения. «Россия в глобальной политике», 2023, т. 21, № 3 (121):

րույնություն: Ընդ որում, «դաշինքը» պետք է հասկանալ ոչ թե բառի նեղ, այլ ամենալայն իմաստով, քանի որ այդպիսին կարող են համարվել ոչ միայն Սիրիական ճգնաժամը կարգավորող «Աստանայի ձևաչափը» (Թուրքիա–Ռուսաստան–Իրան), ուկրաինական հացահատիկի և սննդամթերքի անվտանգ տեղափոխման «Սևծովյան հացահատիկի գործարքը» (Ուկրաինա–Ռուսաստան–Թուրքիա–ՄԱԿ), այլև, այսպես կոչված բարձր մակարդակի 25 խորհուրդները, որոնք աշխարհում դիվանագիտական 5-րդ խոշորագույն ցանցն ունեցող Թուրքիայի համար կարևորվում են հարևան և մոտակա երկրների հետ կառուցողական երկխոսությունն ամրապնդելու առումով[16]: Այս խորհուրդները կարող են լինել ինչպես ռազմավարական (թուրք.՝ *YDSK*), օրինակ՝ Թուրքիայի և Ադրբեջանի միջև, այնպես էլ համագործակցային (թուրք.՝ *YDİK*), օրինակ՝ Թուրքիայի և Իրանի միջև:

Այսպիսով՝ Թուրքիայի՝ ուրույն ռազմավարական մշակույթի հիմքով ռազմավարական ինքնուրույնության գաղափարն իրագործվում է ճկուն դաշինքների կամ քաղաքական ինքնուրույնության (այդ թվում՝ գաղափարական), ինչպես նաև արդյունաբերական կամ տեխնոլոգիական ինքնուրույնության ամրապնդմամբ:

**Ճկուն դաշինքների ձևավորում (քաղաքական ինքնուրույնություն):** Ճկունության երևույթն ու բազմաշերտ դաշինքներում ներգրավվելու կարողությունն այնքան բնորոշ և կարևոր են Թուրքիայի համար, որ մասնագիտական դաշտում գրեթե չկա տարակարծություն թուրքական ռազմավարական մտածողության և որոշումների կայացման դրդապատճառների հարցում: Մասնավորապես՝ ռազմավարական ինքնուրույնության հասնելու քաղաքական բաղադրիչի հիմքում Անկարան ներդրել է մերձավոր հարևանությունում ընթացող հակամարտություններում ուղղակիորեն ներգրավվելու (Կիպրոս, Արևելյան Միջերկրական տարածաշրջան, Սիրիա, Իրաք, Լիբիա, Արցախ), հակամարտության կողմերից մեկին շեշտված կերպով աջակցելու (Արցախի դեպքում՝ Ադրբեջանին, կիպրական խնդրում՝ հյուսիսում բնակվող թուրքերին, Լիբիայում՝ Ֆայեզ ալ Սառաջին, Սիրիայում՝ ընդդիմությանը, այդ թվում՝ «Լևանտի ազատագրման կազմակերպությանը») և իբրև վերջնական արդյունք՝ քաղաքական բաղադրիչը տնտեսականով փոխարինելու ռազմավարությունը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ Թուրքիան ունի վառելիքաէներգետիկ հանգույցի վերածվելու տեսլական, որն անհնար է կենսագործել զուտ «Աքքույու» ԱԷԿ-ի ու ռուսաստանյան էներգակիրների միջոցով:

Թուրքիան, աջակցելով Ադրբեջանին, ցանկանում է նոր թափ հաղորդել Տրանսանատոլիական գազատարին՝ ներգրավելով Կենտրոնական Ասիայի կասպյան պետությունները, օգնելով Հյուսիսային Կիպրոսին՝ Արևելամիջերկրածովյան գազատարի նախագծի մաս դառնալուն և, Լիբիան վերածելով երկրորդ Սիրիայի, փորձում է օգտվել ածխաջրածնային պաշարներից,

---

[16] Տես "Türkiye Cumhuriyeti Dışişleri Bakanlığı 2019-2023 Stratejik Planı", 9 Ekim 2019, s. 6:

որոնք խոշորագույնն են ամբողջ Աֆրիկայում, իսկ տեղադիրքի առումով՝ բավական հարմար են Եվրոպա փոխադրելու համար: Այլ ձևակերպմամբ՝ քանի որ Թուրքիան ի վիճակի չէ ֆինանսատնտեսական ինքնաբավության հասնելու զուտ ներպետական տնտեսական քաղաքականությամբ, խնդրի լուծումը պայմանավորում է հակամարտություններում ներգրավվելու և աշխարհատնտեսական նշանակություն ունեցող նախագծերի կենտրոնում հայտնվելու հանգամանքներով: Ենթակառուցվածքներին առնչվող մասշտաբային նախագծերից ուշագրավ են հատկապես 2018 թ. բացված «Լապիս Լազուլի» («Լազուրիտ») միջանցքը, որով Թուրքիան Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքմենստանի տարածքներով կապվում է Աֆղանստանի հետ, և Թուրքիայից Չինաստան ձգվող Անդրկասպյան առևտրափոխադրումային ուղին (առավելապես հայտնի է «Միջին միջանցք» անվամբ), որը հաջողությամբ գործարկվելու դեպքում կմիացվի «Լազուրիտ» միջանցքին:

Նման զարգացումները շեշտակիորեն արագացնում են Թուրքիայի կերպափոխումը, քանի որ երկրորդ աշխարհամարտից հետո հաստատված աշխարհակարգում Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ-ի, իսկ խորքային առումով՝ արևմտյան քաղաքակրթության ծայրամաս, կարող է հրաժարվել «ռազմավարական հարավի» իր ավանդական գործառույթներից և տուրք տալ աշխարհագրական դետերմինիզմին՝ Արևմուտք–Արևելք խաչմերուկում իր բացառիկությունը շեշտելով բարձր մակարդակի ինքնաբավությամբ: Չինաստանի հետ սերտորեն համագործակցելու և տնտեսության հզորացմամբ հավաքական Արևմուտքի գերիշխանությունը թոթափելու Թուրքիայի բացահայտ ձգտումները, որոնք առաջացնում են Միացյալ Նահանգների դժգոհությունը, աշխարհառազմավարական նշանակությունից զատ ունեն նաև հոգեբանական բաղադրիչ: Օրինակ՝ եթե Չինաստանը եղել է «Ասիայի հիվանդ մարդը» և կարողացել է մեկ դար անց դառնալ աշխարհի երկրորդ տնտեսությունն ունեցող պետություն, ապա «Եվրոպայի հիվանդ մարդը» եղել է Օսմանյան Կայսրությունը*: Այդ է պատճառը, որ տնտեսապես անկայունության Թուրքիայի կերպարը բարդույթ է առաջացրել թուրքերի էթնոհոգեբանության մեջ, իսկ ԱԶԿ կառավարման տարիներին «Եվրոպայի հիվանդ մարդու» պիտակի հաղթահարումը դրվել է ռազմավարական մտածողության հիմքում:

**Գաղափարական ճկունությունը որպես քաղաքական ինքնուրույնության ամրապնդման ենթաբաղադրիչ:** Արտաքին քաղաքականության մեջ թուրքական դիվանագիտության ճկունությունը դրսևորվում է նաև գաղափարական մակարդակում: ԱԶԿ իշխանության գալուց հետո ոչ միայն կասկածի տակ են

* Կայսրությունն այս արտահայտությամբ բնորոշվել է «Արևելյան հարցի» և պետության արդիականացմանն ուղղված բարենորոգումների ծրագրի *(Tanzimât)* տապալումից հետո, երբ զինված ապստամբությունները, վարչակազմում տիրող կոռուպցիան, ֆինանսական խնդիրներն ու ռազմական պարտություններն Օսմանյան Կայսրությանը հանգեցրին անդառնալի անկման (տես *R. Johnson*. The Decline of the Ottoman Empire, C. 1798-1913. “History Review”, September 2005, Issue 52):

դրվել քեմալականության սկզբունքները, այլև բազմազանեցվել են ներքին և արտաքին քաղաքականությունն սպասարկող գաղափարախոսությունները: Դրանք, ընդհանուր առմամբ, երկուսն են՝ նորօսմանականությունը (այս տերմինը պաշտոնական մակարդակով չի գործածվում, ավելին. այն խուսափում է գործածել անգամ դրա գաղափարական հայրը՝ Ա. Դավութօղլուն) և թյուրքականությունը, որն ունի ինչպես ծայրահեղ (Թուրանի ստեղծում, թյուրքական բանակի ձևավորում), այնպես էլ չափավոր (Թյուրքական պետությունների կազմակերպություն) դրսևորումներ: Այսպես. եթե նորօսմանականության գաղափարները թուրքական պետության արտաքին քաղաքականությանը ծառայում են Մերձավոր Արևելքում, ապա թյուրքականությունը՝ Ադրբեջանում և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում: «Արաբական գարնան» հետևանքով բռնկված քաղաքացիական պատերազմից և թուրքական ներխուժումներից հետո տեղի է ունեցել նաև նորօսմանականության և թյուրքականության մի յուրատեսակ համադրում, որը Սիրիայում և Իրաքում դրսևորվում է թուրքմենների շահերի պաշտպանության ու անվտանգության ապահովման Անկարայի վարած քաղաքականության ձևով: Գաղափարախոսությունների տարանջատումն ըստ տարածաշրջանների, որքան էլ առաջին հայացքից կարող է հիմնավոր թվալ, պայմանավորված չէ սոսկ թյուրքական աշխարհով: Նախ. նորօսմանականության գոտին կենսական շահերի տարածաշրջան է, իսկ Կենտրոնական Ասիան՝ կարևոր, երկրորդ. Մերձավոր Արևելքում Թուրքիան դիմում է կոշտ և խելացի, իսկ Կենտրոնական Ասիայում՝ փափուկ ուժի քաղաքականությանը: Եվ երրորդ. Թուրքիայի աշխարհաքաղաքականությունը չի կրում որևէ տարածաշրջանի ազդեցությունն այն չափով, որքան Մերձավոր Արևելքինը: Հետևապես, չնայած երկու գաղափարախոսություններն էլ պարարտ հող են ստեղծում Թուրքիայի ռազմավարական ինքնուրույնության քաղաքական բաղադրիչն առաջ մղելու համար, սակայն նորօսմանականությունն է, որ իր հարուստ գիտականության շնորհիվ կարող է համարվել ռազմավարական մշակույթի ծնունդ: Ընդ որում, իբրև հիմնավորում բավական է նշել այն հանգամանքը, որ նորօսմանականությունը փաստացի գոյություն ունեցած ու միանգամից մի քանի միկրոտարածաշրջաններում պատմության ընթացքը փոխած Օսմանյան պետության կայսերական ռազմավարական մշակույթի ժառանգն է, մինչդեռ թյուրքականությունը, նախ, ընդհանրական իսլամականությանը (Օսմանյան Կայսրության տարիներին), ապա այսպես կոչված «թուրքական մոդելին» (ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած շրջանում) սերտաճած գաղափարախոսություն է, որի գաղափարատիպը, այն է՝ թյուրքական Թուրանը, երբևէ գոյություն չի ունեցել:

**Արդյունաբերական (տեխնոլոգիական) ինքնուրույնություն:** Ուժի կիրառման ռազմավարության, այդ ուժի նկատմամբ սպառնալիքի հարաբերակցության ու հավասարակշռման աստիճանի խնդրի հետազոտմամբ հնարավոր է պատասխանել այն հարցին, թե ինչու Թուրքիայի ուժի առավելագույն գործադրումը չի հանգեցնում հավասարակշռող դաշինքի ձևավորման: Թուրքիային հարող տարածաշրջաններում մրցակցող դերակատար-

ների հնգանկյան միջոցով մոդելավորելով՝ կարող ենք ցույց տալ, որ Թուրքիան ցանկացած ճնշման դեպքում դժվարխոցելի է, որովհետև ունի տարաշարժի ամենամեծ դաշտը: Մասնավորապես՝ Ռուսաստանի և Իրանի ճնշման դեպքում Թուրքիան կշարժվի դեպի ԱՄՆ, Հունաստանի և ԵՄ-ի հետ դիմակայության պայմաններում կարող է հույսը կապել ՌԴ-ի հետ, ընդ որում, ամենևին էլ պարտադիր չէ, որ դրա դիմաց Ռուսաստանը Թուրքիայից պահանջի Սիրիայում զիջումներ: Բացի այդ, քաղաքական առևտրում ճնշում գործադրելու համար Թուրքիան չունի տնտեսական և ռազմատեխնիկական ռեսուրսների գերակայություն, ընդսմին այդ բացը փորձում է համակշռել մրցակից գործընկերների շահերը հավասարակշռելով[17]: Թերևս սա է պատճառը, որ տնտեսության ինքնաբավության հարցում Թուրքիան առաջնահերթություն է տալիս ռազմաարդյունաբերության «ինքնուրույնությանը»: Անշուշտ, ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ աշխարհում նկատվում են ռուս-ուկրաինական ճգնաժամով պայմանավորված ռազմականացման և սպառազինությունների մրցավազքի զարգացման նոր միտումներ, իսկ Թուրքիան փորձում է օգտվել պատեհ առիթից՝ իր արտադրանքը արտահանելով միջազգային շուկա:

«Պաշտպանական և օդատիեզերական արդյունաբերության արտադրողների միավորման» (թուրք.՝ *SASAD*) 2022 թ. զեկույցի համաձայն՝ Թուրքիան ավելի շատ ռազմաարդյունաբերական արտադրանք է արտահանում (վաճառքից ստացված ընդհանուր եկամուտները աճել են 36,32 %-ով՝ կազմելով 4,4 մլրդ ԱՄՆ-ի դոլար), քան ներկրում (2,7 մլրդ ԱՄՆ-ի դոլար): Արտահանման ծավալում առյուծի բաժինը քաղաքացիական ավիացիայի ենթոլորտինն է (1,2 մլրդ ԱՄՆ-ի դոլար, մոտ 28 %-ը), որին հաջորդում են ցամաքային զինատեսակների (835 մլն ԱՄՆ-ի դոլար, 19 %-ը) և զենքզինամթերքի ու հրթիռների ենթոլորտները (686 մլն ԱՄՆ-ի դոլար, 15,60 %-ը): Ինքնուրույնության տեսանկյունից կարևոր է նաև այն հանգամանքը, որ Արևմուտք (ԱՄՆ, Եվրոպա) արտահանվող արտադրանքի համեմատությամբ Մերձավոր Արևելք, Ասիա, Աֆրիկա և Հարավային Ամերիկա արտահանվող արտադրանքի ծավալն ավելի մեծ է (մոտ 3 մլրդ ԱՄՆ-ի դոլար): Բայցևայնպես, ներկրման առումով Թուրքիայի առաջին գործընկերը շարունակում է մնալ Եվրոպան (1,3 մլրդ ԱՄՆ-ի դոլար), ապա՝ Միացյալ Նահանգները (մոտ 967 մլն ԱՄՆ-ի դոլար, 36 %)[18]: Հետևապես, թեպետ վաղ է շուկայի լիարժեք տարատեսակման (դիվերսիֆիկացում) կամ, առավել ևս, պաշտպանական արդյունաբերության առումով Թուրքիային ինքնաբավ համարել, սակայն կասկածից վեր է, որ հետևողական քաղաքականությամբ Թուրքիան դադարել է լինել սպառող պետություն և վստահորեն քայլում է ռազմավարական նշանակության ոլորտն ազգայնացնելու (թուրքացնելու)

[17] Տես *Д. Б. Графов.* Стратегия балансирования во внешней политике Турции. «Вестник МГИМО-Университета», 2022, т. 15, № 3:

[18] Տես “2022 Performans Raporu”. Savunma ve Havacılık Sanayii İmalatçılar Derneği (SASAD), s. 8–9, 12:

ուղղությամբ: Բավական է նշել, որ ԱԶԿ-ն իր կառավարման 20 տարիների ընթացքում պաշտպանական արդյունաբերության արտաքին կախվածությունը 80 %-ից հասցրել է 20 %-ի, իսկ պաշտպանական 62 ծրագրերի փոխարեն իրականացնում է 750 ծրագիր: Սա, իհարկե, անհնար կլիներ, եթե պաշտպանական բյուջեն 5,5 մլրդ ԱՄՆ-ի դոլարից չհասցվեր 75 մլրդ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ Թուրքիայի ռազմավարական մշակույթի տեսամեթոդական քննության ու ռազմավարական ինքնուրույնության հասնելու նկրտումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Թուրքիայի ռազմավարական մտածողությանն առավելապես բնորոշ են ռազմավարական մշակույթի հետազոտողների առաջին սերնդի առաջ քաշած գաղափարները, քանի որ Թուրքիայի քաղաքական վերնախավը որոշումների կայացմանը պատմականություն է հաղորդում՝ հենվելով անցյալի համընդգրկուն փորձառության վրա: Բայցևայնպես, դա չի նշանակում, թե կարող ենք հավասարության նշան դնել ռազմավարական մշակույթի ու թուրքական էթնոհոգեբանության միջև՝ հաշվի առնելով հակադրվող հանրապետական և նորօսմանական մշակույթները: Ըստ այդմ՝

1. Թուրքիան, նորօսմանական ռազմավարական մշակույթի հայեցակարգը կառուցելով արտաքին ճնշումներից ձերբազատվելու և իր շահերին սպասարկող քաղաքականություն վարելու կարողությունների զարգացման վրա, որպես տարածաշրջանային տերություն, դիրքավորվում է իբրև համաշխարհային հավակնություններ ունեցող պետություն՝ օգտվելով ինչպես զինված հակամարտություններում ներգրավվելուց, այնպես էլ միջնորդական դերի մեծացումից:
2. Թուրքիայի ռազմավարական ինքնուրույնության ձգտումն ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական շարժառիթներ: Եթե ներքաղաքական շարժառիթներից են ռազմաքաղաքական և տնտեսատեխնոլոգիական ձեռքբերումները, իսլամական ինքնության զարթոնքն ու գերիշխող կուսակցության գաղափարախոսությունը, ապա արտաքին շարժառիթն աշխարհակարգի վերափոխմանը լծված ուժային կենտրոնների հետ մրցակցային համագործակցությունն է, որի դրական պտուղները Թուրքիան քաղում է Մերձավոր Արևելքում: Գաղափարական մակարդակում այս ամենին Թուրքիան հասնում է ռազմավարական մշակույթի հիմքում ընկած նորկայսերական մտածողությամբ և օսմանական ժառանգության վերափոխմամբ, քանի որ եթե դասական օսմանականությունը վերազգային գաղափարախոսություն է, ապա նորօսմանականությունն էականորեն ազդված է ազգ-պետություն հայեցակարգից և հիմնվում է ոչ թե օսմանական, այլ փոքրասիական թուրքական մշակույթի վրա: Այս է պատճառը, որ կենսական շահերի տարածաշրջաններ մուտք գործելիս Թուրքիան այլևս չի կարողանում հաջողության հասնել փափուկ ուժի քաղաքականության միջոցով և դիմում է ավելի կոշտ ու ագրեսիվ քայլերի:
3. Ի տարբերություն ռազմավարական ինքնուրույնության ձգտող մի շարք

սուբյեկտներից (Ֆրանսիա, ԵՄ)՝ Թուրքիան փորձում է ինքնաբավության մակարդակի բարձրացմամբ մերձավոր հարևանությունում ձևավորել իր ընկալումներին համապատասխանող կայուն ու անվտանգ միջավայր: Այս տեսլականը ոչ այլ ինչ է, քան արդիականացված «Օսմանյան խաղաղություն» (լատ. *“Pax Ottomana”*) այն է՝ սպառնալիքների բոլոր օջախների վերացում, չափելի անվտանգության հստակեցում (օրինակ Սիրիայում՝ 30-40 կիլոմետրանոց անվտանգության գոտու տեսքով) և ազդեցության գոտիների ձևավորում (այդ թվում՝ Հարավային Կովկասում):

## ПРОБЛЕМА СТРАТЕГИЧЕСКОЙ САМОСТОЯТЕЛЬНОСТИ В ПАРАДИГМЕ СТРАТЕГИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ ТУРЦИИ

*В. А. ШЕРЕНЦ, ученый-аналитик Центра региональных стратегических исследований ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Видение Турции путей достижения стратегической самостоятельности было обобщено и институционализировано после революционной волны «Арабской весны». Воспользовавшись благоприятной геополитической обстановкой, партия «Справедливость и развитие» смогла продвинуть свою исламско-национальную консервативную идеологию как на внутриполитической, так и на внешнеполитической аренах, благодаря неоосманизму оставив вне конкуренции республиканскую стратегическую культуру.

Находясь под оборонно-безопасностным покровительством коллективного Запада, но фактически проводя региональную политику, вытекающую из собственных интересов, Турция позиционирует себя как самостоятельный игрок, принимающий вызовы конкурентного сотрудничества с региональными и глобальными игроками. Анкара добивается всего этого как за счет резкого роста числа несостоявшихся государств в ближнем соседстве, так и благодаря новым системным подходам, направленным на укрепление позиций и роли Турции в новом мировопорядке. В частности, учитывая общий контекст своей стратегической культуры, то есть всеобъемлющий исторический опыт и узкие турецкие восприятия мира и стабильности, Турция приняла и постепенно реализует отечественную формулу достижения стратегической самостоятельности. В этом аспекте для Турции стало императивом увеличение числа гибких союзов и повышение степени политико-идеологической, а также экономико-технологической самодостаточности и уменьшение внешней зависимости.

# THE PROBLEM OF STRATEGIC INDEPENDENCE IN THE PARADIGM OF TURKEY’S STRATEGIC CULTURE

*V. A. SHERENTS, Research Fellow, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

Turkey's vision of the ways to achieve strategic independence was generalized and institutionalized after the revolutionary wave of the Arab Spring. Taking advantage of the favorable geopolitical situation, the Justice and Development Party was able to promote its Islamic-national conservative ideology in both domestic and foreign policy arenas, due to neo-Ottomanism leaving out of competition the republican strategic culture.

Being under the defense and security auspices of the Collective West, but actually pursuing a regional policy ensuing from its own interests, Turkey is positioning itself as an independent player taking the challenges of competitive cooperation with regional and global players. Ankara achieves all this both at the expense of a drastic rise in the number of failed states in its immediate neighborhood and due to new systemic approaches targeted at strengthening Turkey’s positions and role in the new world order. In particular, given the overall context of its strategic culture, i.e., the comprehensive historical experience and narrow Turkish perceptions of peace and stability, Turkey has adopted and is gradually implementing its own formula for achieving strategic independence. In this regard, it has become imperative for Turkey to increase the number of flexible alliances and the degree of political-ideological, as well as economic-technological self-sufficiency, and reduce external dependence.

# «ԾԱՅՐԱՄԱՍԱՅԻՆ ԴՈԿՏՐԻՆՆ» ՈՒ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ «ՀԱՏՎԱԾԱՅՆԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ԻՍՐԱՅԵԼԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

*Վ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն*



**Ներածություն**

2023 թ. հոկտեմբերի 7-ին պաղեստինա-իսրայելական հակամարտությունը կրկին մտավ ակտիվ մարտական գործողությունների փուլ, որոնք վերաճեցին լայնամասշտաբ պատերազմի: Ստեղծված պայմաններում, երբ տեղական, տարածաշրջանային ու համաշխարհային դերակատարները պարզաբանում կամ պարզորոշում են իրենց դիրքորոշումը տարածաշրջանային լայնամասշտաբ պատերազմի վերաճելու ներուժ ունեցող, սակայն առայժմ հիմնականում Գազայի հատվածով սահմանափակվող ներկայիս ռազմական գործողությունների նկատմամբ, կարևորվում է նաև Իսրայելի ազգային անվտանգության ռազմավարությանն առնչվող դոկտրինների, հայեցակարգերի, անվտանգային գաղափարախոսություն դարձած տեսությունների և տարածաշրջանային անվտանգության իսրայելական ընկալումների դիտարկումը:

Հոդվածում համակողմանիորեն քննարկվում են «Ծայրամասային դոկտրինը» («Ծայրամասային երկրների ռազմավարություն») և Հատվածայնացման տեսության էությունը, դրանց կերպափոխման փուլերը և այդ կերպափոխումները պայմանավորող իսրայելական անվտանգային ընկալումները:

**«Ծայրամասային դոկտրինը» Իսրայելի անվտանգության ռազմավարական սկզբունքների համատեքստում**

Իսրայելի անվտանգության ռազմավարական սկզբունքները ձևակերպվել են պետության գոյության առաջին երկու տասնամյակներում Դավիդ Բեն-Գուրիոնի ղեկավարությամբ և ստացել «անվտանգության հայեցակարգի գերագույն նպատակներ» անվանումը: Բեն-Գուրիոնը հստակ կերպով գիտակցում էր, որ Իսրայելը երկարատև պայքար է վարելու, քանի դեռ տարածաշրջանը չի ճանաչել Իսրայելի Պետության գոյության իրավունքը: Ըստ այդմ՝ Իսրայելը, հաշվի առնելով աշխարհառազմավարական տեսանկյունից արաբական պետությունների ունեցած բացահայտ առավե-

* Հոդվածը նախնական տարբերակով ստացվել է 26.07.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 07.11.2023:

լությունը (տարածք, բնակչություն, բնական ռեսուրսներ), որդեգրեց հետևյալ հիմնարար սկզբունքները.

- *որակական առավելություն սովորական (ավանդական) սպառազինությունների ոլորտում.* Իսրայելի Պետությունը ձգտում էր ապահովելու իր Պաշտպանության բանակի (ՑԱՀԱԼ) շեշտված որակական առավելությունը այն ժամանակվա իր ախոյանների՝ Եգիպտոսի, Սիրիայի, Հորդանանի և այլ պետությունների բանակների նկատմամբ: Այս սկզբունքը հանգեցրեց 1956 թ. Սուեզի կանխիչ պատերազմին, որի նպատակն էր զսպել սպառնալից տեմպերով Եգիպտոսի հզորացումը, ինչպես նաև 1967 թ. կանխիչ հարվածին ու «Վեցօրյա պատերազմին»,
- *լայն ընդգրկմամբ զսպում (Broad deterrence).* ըստ այդմ Բեն-Գուրիոնը նպատակ ուներ ստեղծել ու պահպանել Իսրայելի որակական գերազանցության վրա հիմնված ռազմական զսպման հաստատուն և ընդգրկուն համակարգը*,
- **առանձնահատուկ հարաբերություններ գերտերություններից մեկի հետ.** Բեն-Գուրիոնը սահմանեց երկու մոտեցում, որոնք մինչ օրս կազմում են Իսրայելի անվտանգության հիմքը: Առաջինը Միացյալ Նահանգների հետ ամուր կապեր հաստատելու ռազմավարական որոշումն էր, որը, ըստ էության, հանգեցնելու էր Խորհրդային Միությանը հակադրվելուն: Երկրորդը՝ գերտերությունների աջակցությունն ստանալու կարիքն էր: Այս մոտեցումն արտահայտվեց Սուեզի պատերազմի ժամանակ՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ կապերի հաստատմամբ և հետագայում ֆրանսիացիների հետ ռազմական կապերի ամրապնդմամբ: 1960-ական թվականներին Ֆրանսիայի հետ հարաբերությունների որոշակի սառեցումից հետո Իսրայելն ավելի ու ավելի սերտացրեց հարաբերություններն ԱՄՆ-ի հետ: Այսպիսով՝ Բեն-Գուրիոնի այս երկու մոտեցումները միավորվեցին և փոխակերպվելով վերածվեցին Միացյալ Նահանգների հետ «առանձնահատուկ հարաբերությունների»,
- *տեխնոլոգիական և տնտեսական գերազանցություն.* Բեն-Գուրիոնը հասկանում էր, որ Իսրայելը, որը հիմնականում չունի բնական ռեսուրսներ և շրջակա պետությունների համեմատությամբ փոքր է (տարածքով ու բնակչությամբ), կարող է գոյատևել միայն այն դեպքում, երբ ձեռք բերի այդ երկրների նկատմամբ տեխնոլոգիական և տնտեսական գերազանցություն՝ ինչպես քանակական, այնպես էլ որակա-

* «Սովորական (ավանդական) զսպման» *(conventional deterrence)* ամրապնդմանն ուղղված միջոցառումներին զուգահեռաբար Իսրայելը զարգացնում էր նաև զսպման իր կարողության երկրորդ հիմնասյունը՝ անկախ միջուկային ծրագիրը, կամ միջուկային զսպումը *(nuclear deterrence),* որը պետք է համարվեր որպես այսպես կոչված «անձրևոտ օրվա» օգտագործման տարբերակ: Թեև Բեն-Գուրիոնը միաժամանակ աշխատում էր այս երկու ճակատներում, նա ձգտում էր նաև «պահպանելու երկուսի միջև հնարավորինս մեծ տարանջատում» (տես *Avner Cohen.* Israel and the Bomb. New York, 1998):

կան տեսանկյունից առավելագույնի հասցնելով իր ամենակարևոր ու մատչելի ռեսուրսի՝ մարդկային կապիտալի օգտագործումը: 1950-ական թվականների կեսերից մինչև «Ահեղ դատաստանի օրվա» («Յոմ Կիպուրի») պատերազմը (1973 թ.) եղած ժամանակահատվածում ընդհանուր առմամբ Իսրայելի բնակչության անման տեմպերը տպավորիչ էին: Միայն «Ահեղ դատաստանի օրվա» պատերազմին հաջորդած «կորցրած տասնամյակն» ազդարարեց այդ միտման փոփոխությունը,

- *ազգային տոկունություն, ճկունություն և հաստատակամություն.* Իսրայելի առաջին վարչապետը հասկանում էր նաև, որ Իսրայելը չի կարողանա պահպանել իր հարևանների նկատմամբ առավելությունները առանց խթանելու իրեական ոգու և ինքնության վրա հիմնված ազգային տոկունությունը, ճկունությունը և հաստատակամությունը: Սա հիմք դարձավ մի շարք նոր մոտեցումների մշակման համար.

ա) սահմանվեց պարտադիր զինվորական ծառայության սկզբունքը, ընդսմին դա կազմեց «ժողովրդի բանակ» հասկացությամբ որակվող սկզբունքի բաղկացուցիչ մասը, որը հետագայում դրվեց «Ազգ–բանակ», կամ «Զինված ազգ», հասկացության հիմքում[1],

բ) կարևորվեց նաև Իսրայելի՝ որպես համաշխարհային հրեականության համար ծգողականություն և գրավչություն ունեցող պետության կերպարի ստեղծումն ու պահպանումը, ինչի շնորհիվ խրախուսվում էր կենսական նշանակություն ունեցող ներգաղթը, որը տնտեսական և անվտանգային ճգնաժամների փուլում երկրին հնարավորություն էր տալիս բարգավաճելու: Այս մոտեցման էական բաղադրիչներն էին ամբողջ աշխարհում հրեաների իրավունքների պաշտպանությունը և բոլոր հրեական համայնքների հետ հաստատուն կապի պահպանումը:

Իսրայելի քաղաքական վերնախավը հստակ կերպով գիտակցում էր, որ նշված սկզբունքների և Իսրայելի ռազմավարական կարգավիճակի միջև գոյություն ունի զգալի անհամապատասխանություն: Մասնավորապես՝ ենթադրվում էր, որ սակավ բնակչությունն ու նվազ ռեսուրսները հնարավորություն չեն տա երկարաժամկետ հեռանկարում պահպանելու թե՛ սովորական ռազմական գերազանցությունը, թե՛ տեխնոլոգիական ու տնտեսական առավելությունները: Սակայն, մյուս կողմից, կարևորվում էր իսրայելական հասարակության մեծ ներուժն՝ իր մարդկային ու տեխնոլոգիական կարողությունները կոնկրետ ռազմական նպատակներին ու գործողություններին ծառայեցնելու գործում, ինչի շնորհիվ առաջնահերթ խնդիրներում ձեռք էին բերվում վճռորոշ ու անհերքելի հաղթանակներ:

[1] Տես *U. Ben-Eliezer.* A Nation-in-Arms: State, Nation, and Militarism in Israel's First Years. “Comparative Studies in Society and History”, 1995, Vol. 37, N 2; *B. Kimmerling.* Patterns of Militarism in Israel. “European Journal of Sociology”, 1993, Vol. 34, N 2; *S. A. Cohen.* The Israel Defense Forces (IDF): From a "People’s Army" to a “Professional Military” – Causes and Implications. “Armed Forces & Society”, 1995, Vol. 21, N 2:

Այսպիսով՝ Իսրայելի ազգային անվտանգության ռազմավարությունը կենտրոնացած էր ապագա ռազմական առճակատումները հնարավորինս հետաձգելու և դրանց միջև հնարավորինս երկարատև հանգստի ժամանակաշրջաններ ապահովելու ջանքերի վրա: Անդորրի ընթացքում կուտակված միջոցները հնարավորություն կընձեռեին ցանկացած պատերազմի դեպքում հասնելու արագ ու վճռական արդյունքի, որն իր հերթին կհանգեցներ երկարատև խաղաղության և կայունության պարտադրմանը:

**Վերը շարադրված հինգ սկզբունքները հետագայում լրացվեցին երեք նոր սկզբունքներով, որոնք էին.**

- **«Ծայրամասային դոկտրինը»**. Իսրայելի նկատմամբ թշնամաբար տրամադրված պետությունների հակազդեցության պատճառով Բեն-Գուրիոնը հարկադրված եղավ դիմել տարածաշրջանային դերակատարների հետ դաշինքների ձևավորմանը: Իսրայելը խորացրեց կապերը Եգիպտոսին հարակից աֆրիկյան (այսպես կոչված Աֆրիկյան եղջյուրի) պետությունների, շահական Իրանի, Թուրքիայի և տարածաշրջանի մի շարք պետութենազուրկ ժողովուրդների (մասնավորապես՝ իրաքյան քրդերի* և լիբանանյան մարոնիների) հետ,
- **«Էշկոլի դոկտրինը»**[**]**.** մշակվել էր «թուլացած Սամսոնի» բարդույթը հաղթահարելու հեռանկարով: Դա ներկայումս տարածված «փափուկ ուժի» իսրայելական նախատիպն էր, որն ուներ որոշակի առանձնահատկություններ: Դոկտրինով նախատեսվում էր զերծ մնալ հաճախակի ագրեսիվ գործողություններից (բացառել «կոշտ ուժի» չարաշահումը), դիտարկել ներքին և արտաքին փոխզիջումային մոտեցումները, կիրառել նաև «փափուկ ուժի» զինանոցը, ռազմական ուժի ծավալմանը զուգահեռաբար որդեգրել «թույլերի» ուժի վերականգնումն ու ամրապնդումը: Ինչպես ցույց տվեց Վեցօրյա պատերազմին բարձր մակարդակի պատրաստությունը, այս դոկտրինը տվեց որոշակի պտուղներ, սակայն Լևի Էշկոլի մահից հետո (1969 թ.) այս մոտեցումն էական նահանջ ապրեց ու վերացավ: Սակայն Իսրայելի ռազմավարական մշակույթի մաս դարձավ պետության ուժեղ և թույլ կողմերը միաժամանակ խաղարկելու կարողությունը,
- **«Բեգինի դոկտրինը»**. դրանով նախատեսվում էր տարածաշրջանային պետություններում միջուկային զենքին առնչվող ցանկացած նախագծի մշակման խափանում և իրագործման բացառում[2]:

* Իրաքյան քրդերի հետ շփումները մշտական բնույթ էին կրել դեռ բրիտանական մանդատի շրջանում՝ նախքան Իսրայելի Պետության ստեղծումը: Պետության ստեղծումից հետո Իսրայելի և քրդերի համագործակցությունը զարգանում էր ավելի համակարգված ձևով՝ ունենալով Իրաքին իր ներքին խնդիրների ուղղությամբ շեղելու և Իսրայելի դեմ լիարժեք կերպով գործելու հնարավորությունից զրկելու նպատակ:

** Անվանի քաղաքական գործիչ Լևի Էշկոլը (Լևի Իցհակ Շկոլնիկ) Իսրայելի 3-րդ վարչապետն էր (1963–1969 թթ.):

[2] Ավելի հանգամանորեն տես “Weapons of Mass Destruction (WMD): Strategic Doctrine”. “GlobalSecurity.org”, 24.07.2011 (https://www.globalsecurity.org/wmd/world/israel/

Տվյալ սկզբունքներն արտացոլում են Իսրայելի երկարաժամկետ տեսլականը: Դրա հետ մեկտեղ Բեն-Գուրիոնը կարևորում էր այն հանգամանքը, որ Իսրայելը զերծ մնա «մտավոր իներցիայից», քանի որ պետության անվտանգությունը պահանջում էր այդ սկզբունքների մշտական վերանայում ու թարմացում, և ապագայամետ ու նորամուծական գաղափարների շրջանառում:

Այսպիսով՝ «Ծայրամասային դոկտրինը» Իսրայելի անվտանգության ութ հիմնական ռազմավարական սկզբունքների շարքում էր, հետևաբար՝ երկրի ընդհանուր ռազմավարության կարևոր մասը, սակայն որոշ մասնագիտական շրջաններ թյուրիմացաբար այն ընկալել են որպես առանձին ռազմավարություն[3]:

«Ծայրամասային դոկտրինը» Իսրայելի Պետության կազմավորման դեռ սկզբնական փուլում մշակել էին Իսրայելի առաջին վարչապետ Դավիդ Բեն-Գուրիոնն ու նրա մի շարք համախոհներ (անվանի քաղաքական գործիչներ, լրագրողներ ու տարածաշրջանագետներ)՝ տարածաշրջանում նորաստեղծ Իսրայելի դեմ ուղղված արաբական սպառնալիքներին դիմակայելու համար[*]: Ռազմավարական նշանակություն ունեցող այս դոկտրինի հիմքում դրվեցին հետևյալ նպատակները.

- ✓ ռազմավարական գործընկերության հաստատում տարածաշրջանի ոչ արաբական և արևմտամետ (առնվազն՝ ամերիկամետ) պետությունների հետ (Թուրքիա, Իրան, Եթովպիա), դրա տարածում նաև Մերձավոր Արևելքի կրոնական և էթնիկական փոքրամասնությունների վրա,
- ✓ տարածաշրջանի արաբական պետությունների՝ Իսրայելի դեմ ուղղված դիվանագիտական և տնտեսական բոյկոտի չեզոքացում,
- ✓ նաև հակաիսրայելական ներուժով օժտված աճող պանարաբականության հետ ուժերի ռազմավարական հավասարակշռության պահպանում:

«Ծայրամասային դոկտրինը» դրվեց տարածաշրջանում Իսրայելի վարած անվտանգային քաղաքականության հիմքում:

## Մերձավոր և Միջին Արևելքի՝ իբրև ոչ միասնական մշակութային տարածության իսրայելական ընկալումը

«Ծայրամասային դոկտրինն» ունի երկու չափում՝ «Ծայրամասային երկրներ» և Մերձավոր Արևելքի (գերազանցապես՝ արաբական պետությունների կազմում եղած) էթնիկական ու կրոնական փոքրամասնություններ, որոնք պատրաստ են համագործակցելու Իսրայելի հետ: Հետևաբար

doctrine.htm); *Herb Keinon.* Selling the 'Samson option'. “The Jerusalem Post”, 31.01.2002 (http://www.jpost.com/Editions/2002/01/31/News/News.42612.html); *Louis René Beres.* Israel and the “Samson option” in an Interconnected World. “Modern War Institute”, 16 November 2018 (https://mwi.westpoint.edu/israel-samson-option-interconnected-world/):

[3] Տես *Syed Wajahat Ali.* Israel’s periphery strategy. “The Times of Israel”, 20 August 2014 (https://blogs.timesofisrael.com/israels-periphery-strategy/):

[*] Սակայն «Ծայրամասային դոկտրինում» առկա առանձին ընկալումներ իրենց արմատներով հասնում են առնվազն մինչև Պաղեստինի մանդատային շրջան (1920–1947):

«Ծայրամասային դոկտրինը» չի կարող դիտարկվել բացառապես «Ծայրամասային երկրների» հայեցակարգի շրջանակներում:

Տվյալ դոկտրինը հասկանալու համար կարևոր է Մերձավոր ու Միջին Արևելքի՝ իբրև ոչ միասնական մշակութային տարածության (նույնիսկ՝ ոչ տարածաշրջանի) իսրայելական ընկալման արմատավորումը*: Ըստ այդմ ենթադրվում էին հույժ կարևոր և սկզբունքային փոփոխություններ, որոնք հանգեցնելու էին Մերձավոր ու Միջին Արևելքի՝ իբրև միասնական երևույթի համակարգային ընկալման փլուզմանը: Տվյալ տարածաշրջանային ընկալման համար որպես ելակետ էին դիտվում Մերձավոր ու Միջին Արևելքի նկատմամբ 19-րդ և 20-րդ դարերում ձևավորված արևելագիտական ընկալման հիմնադրույթները, սակայն իրականում սույն ընկալումը վերամեկնաբանվում էր հակառակ տեսանկյունից: Մասնավորապես՝ 19-րդ և 20-րդ դարերի արևելագիտական միտքը Մերձավոր ու Միջին Արևելքի տարածաշրջանը դիտում էր ոչ միայն իբրև պետություններից, այլև բազմաթիվ էթնիկական խմբերից, ազգություններից և մշակույթներից կազմված խճանկար կամ խճանկարային իրողություն: Այնուամենայնիվ տարածաշրջանն ընկալվում էր թերևս որպես փոխկապված ու փոխադարձ կախման մեջ գտնվող տարրերից բաղկացած մեկ միասնական մարմին, մի իրողություն, որտեղ յուրաքանչյուր, թեկուզև լիարժեք ու նախկինում ինքնուրույն միավորն ընդամենը խճանկարի մի տարրն էր: Սակայն իրական, ապա նաև իսրայելական տեսանկյունից անհրաժեշտ էր շեշտել ոչ արաբական մշակութային, էթնիկական և ազգային տարրերի, իսկ որոշ դեպքերում նաև ոչ մահմեդական կրոնական համայնքների՝ իբրև ինքնուրույն և նույնիսկ կենսունակ միավորների թեզը: Այստեղ կարևոր էին ոչ միայն Իսրայելի անվտանգության ապահովումը, այլև այն հարցի պատասխանը, թե ինչ խաղի կանոններով պետք է շարժվի Իսրայելը. պետք է, արդյոք, որ նա ինտեգրվի այս տարածաշրջանում և հետևի Միջին Արևելքում խաղի հաստատված կանոնների տրամաբանությանը, թե՝ ոչ: Տվյալ համատեքստում Իսրայելի և սիոնիզմի գաղափարախոսությունը «Իսրայելի ձայնը» վերտառությամբ իր աշխատությունների ժողովածուում մեկնում է Աբբա Էբանը[4]: Նա վիճարկում է այն ենթադրությունը, թե Միջին Արևելքը մեկ միասնական մշակութային միավոր է և որ Իսրայելի համար պարտադիր է ինտեգրվել այդ միավորին: Փոխարենը նա պնդում է, որ արաբները միշտ ապրել են պառակտման, արմատապես տարբերվող ու անհամեմատելի պայմաններում, և որ միասնության կարճատև փուլերը տեղ են գտել բացառապես սրի գերիշխանության ներքո: Էբանը նաև պնդում է, որ քաղաքական պառակտումն ամենևին էլ արևմտյան գաղութատիրության արդյունք չէ՝ շեշտելով նաև, որ մշակութային և ավան-

* Ընդ որում, թե՛ դոկտրինը, թե՛ այս ընկալումը մշտապես փոխազդել են՝ հիմնավորելով միմյանց գոյությունը:

4 Տես *Abba Eban.* Voice of Israel. New York, 1957: Գիտնական, դիվանագետ ու քաղաքական գործիչ Աբբա Էբանն Իսրայելի փոխվարչապետն էր (1963–1966 թթ.) և ԱԳ նախարարը (1966–1974 թթ.):

դական (նաև՝ ավանդույթի ուժ ստացած) կապերը, որոնք միավորում են արաբական երկրները, ամենևին էլ բավարար չեն քաղաքական միասնության հիմք ծառայելու համար: Այս պատճառով է, որ միմյանց հաջորդող իսրայելական կառավարությունները որդեգրել են ոչ արաբական էթնիկական ու մշակութային փոքրամասնություններին հովանավորելու քաղաքականություն: Իսկ սիոնիստական շարժման վերաբերյալ գրականությունը, մասնավորապես՝ 1930-ական թթ. վերջերին և պաղեստինյան խնդրի արաբականացման փուլում հրապարակված աշխատությունները վկայում են, որ սիոնիստական առաջնորդներն ընդհանրապես և «իշուվի[*]» ղեկավարները՝ մասնավորապես իրենց հույսերն ու մտավախությունները պայմանավորել են արաբական աշխարհում ներառված յուրաքանչյուր ոչ արաբական փոքրամասնության և հարևան ոչ արաբական երկրների հետ հարաբերությունների հաստատմամբ: Այսպես. նախքան Իսրայելի Պետության հռչակումը՝ դեռ 1930-ական թթ. սկսած, Բեն-Գուրիոնը հստակ կերպով ձևակերպել էր որոշ սկզբունքներ, որոնք դառնալու էին այս հարցում սիոնիստական, իսկ հետագայում նաև իսրայելական մոտեցումների անվիճելի հիմքը:

1. Արաբները սիոնիստական շարժման՝ համար մեկ թշնամիներն են: Այս գլխավոր թշնամուն դիմագրավելու համար շարժմանն անհրաժեշտ է դաշնակիցներ փնտրել Արևելքում, սակայն չհրաժարվել նաև Արևմուտքում ունեցած դաշնակիցներից: «Մեր և նրանց միջև պատերազմն անխուսափելի է»,– համարում էին սիոնիստները: Ուստի և ցանկացած ուժ կամ խմբավորում, որը դիմադրում է արաբական ազգայնամոլությանը՝ «հրեա ժողովրդի հիմնական և առաջին թշնամուն», կամ պատրաստ է պատերազմելու դրա դեմ, դաշնակից է:
2. Հրեա ժողովուրդը արաբական երկրներում ապրող, արաբների կամ մահմեդականների «ճնշումների ենթարկվող» բոլոր կրոնական, էթնիկական փոքրամասնություններին ու խմբերին ընկալում է իբրև դաշնակիցների և գործընկերների: Հետևաբար ճնշումներից ազատվելու կարիքն ընդհանուր է երկուսի համար էլ:

Այս երկու գաղափարը դրվեցին «Ծայրամասին դաշնակցելու», կամ «Ծայրամասը դաշնակից դարձնելու տեսություն» *(The Theory of Allying the Periphery),* կոչվող դոկտրինի հիմքում: Սույն տեսությունը հետագայում լրացվել ու վերամշակվել է: Մասնավորապես՝ Իսրայելի Պետության ստեղծումից հետո Բեն-Գուրիոնը, զարգացնելով այս տեսությունը, առաջ քաշեց արաբական երկրների շուրջ **«ախոյանների (հակառակորդների) օղակ»** կերտելու գաղափարը: Նա իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրեց Թուրքիայի, Իրանի և Եթովպիայի հետ ռազմավարական հարաբերությունների ու համագործակցության հաստատման վրա: Ձևավորվեց «Շրջափակման տեսությունը»: Այն նույնպես հետագա զարգացում ապրեց ու նպատակաուղղվեց արաբական աշխարհի շրջափակման դաշտի ընդլայն-

[*] Իշուվ՝ հրեական բնակչության հավաքական անվանումը նախքան Իսրայելի Պետության ստեղծումը: – *Խմբ.:*

մանը այլ ասիական և աֆրիկյան երկրների հետ Իսրայելի հարաբերությունների զարգացման ճանապարհով: Սույն քաղաքականության իրագործման հետագա փուլում Իսրայելի ուշադրության կենտրոնում հայտնվեց Հնդկաստանը, ինչը պայմանավորված էր այն հանգամանքներով, որ Պակիստանը ձեռք էր բերել միջուկային զենք, Հնդկաստանում տարածվել էր հինդու ռևիզիոնիզմը, և Իսրայելը ձգտում էր ներթափանցելու Հնդկաստանի սպառելի շուկան:

Բեն-Գուրիոնի Ծայրամասին դաշնակցելու և Շրջափակման տեսությունները, որոնք ձևակերպվեցին նաև սիոնիզմի այլ առաջնորդների աշխատություններում, հիմք դարձան արաբական աշխարհի դեմ դաշնակիցների հետ Իսրայելի համագործակցության ծավալման համար: Այս տեսությունների բերումով էր, որ Իսրայելն աջակցեց անջատողական շարժումներին Սուդանում, Իրաքում, Եգիպտոսում և Լիբանանում, ինչպես նաև իր թշնամի արաբական պետություններում ծավալվող ցանկացած անջատողական շարժումների: Միևնույն ժամանակ, Իրաքի հետ կապված մտահոգությունները ու նրան թուլացնելու և հզորացումը կանխելու մտադրությունը մշտապես տեղ են գտել սիոնիստների նպատակներում: Ժամանակ առ ժամանակ Իսրայելին հաջողվել է Իրաքում հենակետեր ձեռք բերել քրդական առաջնորդների հետ թեև գաղտնի, սակայն խիստ սերտ և ամուր հարաբերություններ հաստատելու միջոցով*: Ի տարբերություն Իրաքում իր հաջողություններից՝ Իսրայելը չկարողացավ դաշնակցային հարաբերություններ հաստատել Եգիպտոսի ղպտիական համայնքի հետ, ինչի պատճառը Եգիպտոսի պետականության պատմական անընդհատությունն էր:

1960–1970-ական թվականներին Իսրայելի սերտ համագործակցությունը Իրանի ու Եթովպիայի հետ, 1964–1975 թթ. իրաքյան քրդերի շարժման առաջնորդներից Մուստաֆա Բարզանիի հետ, ինչպես նաև 1990-ական թվականներից Թուրքիայի հետ աննախադեպ թափ առած համագործակցությունը և ներկայումս զարգացող հարաբերությունները Իրաքյան Քրդստանի, Ադրբեջանի ու Կենտրոնական Ասիայի պետությունների հետ հաճախ դիտվում են «Ծայրամասային հայեցակարգի» համատեքստում: Սակայն 1950–1970-ական թվականների և 1990-ական թվականներից մինչ օրս ձգվող ժամանակահատվածներում «Ծայրամասային հայեցակարգն» ունեցել է միանգամայն տարբեր բովանդակություններ:

## Իսրայելի «Ծայրամասային երկրների հայեցակարգն» ու դրա կերպափոխումը

Ծայրամասային քաղաքականության առանցքը աշխարհաքաղաքական կառուցվածքի ընկալումն էր, որի համաձայն Իսրայելը գտնվում էր Մերձավոր Արևելքի կենտրոնում՝ շրջապատված լինելով արաբական թշնամական

* 1930-ական թվականներին քրդերի հետ շփումներ հաստատելու պատասխանատվությունն ընկնում էր սիոնիստական հետախուզության հայտնի գործակալ Ռուբին Շիլուահի վրա, որը «Ծայրամասին դաշնակցելու» ռազմավարության գլխավոր նախագծողներից ու կանխամտածողներից էր:

պետություններով: Քանի որ սա պարզ էր եղել նաև Իսրայելի Պետության ստեղծումից առաջ, դեռ Պաղեստինի մանդատի շրջանում հրեա քաղաքական գործիչները կապեր էին հաստատել Լիբանանի մարոնիների և Իրաքի քրդերի հետ: Դրան հետևեց հաջորդ քայլը՝ Իսրայելի շուրջը եղած երկրորդ և երրորդ օղակների ոչ արաբական երկրների հետ համագործակցության ձևավորումը[5]:

«Ծայրամասային երկրների հայեցակարգի» էությունը հետևյալն էր. Մերձավոր Արևելքը բացառապես արաբական ոլորտ չէ, քանի որ նրա բնակչության մեծ մասը ոչ թե արաբներ են, այլ ուրիշ ազգերի ներկայացուցիչներ (թուրքեր, պարսիկներ, հրեաներ, քրդեր և այլն): Այն դեպքում, երբ տարածաշրջանի արաբական երկրների և Իսրայելի միջև հարաբերությունները մնում են թշնամական, «ծայրամասի» ոչ արաբական երկրները, մասնավորապես՝ շահական Իրանը, Թուրքիան, Եթովպիան, պահպանում են Իսրայելի հետ «բարեկամական կապեր»: Իսրայելական ղեկավարությունը նախատեսում էր ամրապնդել տարածաշրջանում իր դիրքերը՝ հենվելով «ծայրամասի» ոչ արաբական երկրների վրա:

Իսրայելի ռազմավարները Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև հյուսիսային Աֆրիկայի երկրները բաժանում էին երեք խմբի.

1. **«Կենտրոն»**՝ հինգ արաբական երկրներ (Իրաք, Հորդանան, Եգիպտոս, Սիրիա և Լիբանան) և Իսրայելն ինքը,
2. **«Ծայրամաս»**՝ ութ երկրներ. որոնցից չորսը արաբական (Ալժիր, Քուվեյթ, Սաուդյան Արաբիա, Թունիս), երկուսը՝ մահմեդական, սակայն ոչ արաբական (Թուրքիա, Իրան) և երկուսը՝ քրիստոնեական պետություններ (Կիպրոս և Եթովպիա),
3. **«Պետությունների արտաքին շրջան»** (Լիբիա, Մարոկկո, ոչ արաբական Սոմալի, Հյուսիսային և Հարավային Եմեններ, Սուդան):

Այսպիսով՝ «Ծայրամասային ռազմավարությունը», որով քաղաքականություն վարելիս Իսրայելն առաջնորդվում էր 1950–1970 թվականներին, նպատակաուղղված էր Իսրայելի անմիջական հարևանների թիկունքում, այսպես կոչված «երկրորդ-երրորդ շրջաններում», կամ «երկրորդ և երրորդ գծում», գտնվող պետություններին (առաջին հերթին՝ մահմեդական Թուրքիային և Իրանին, քրիստոնեական Եթովպիային), ինչպես նաև արաբական պետությունների ազգային ու կրոնադավանական փոքրամասնություններին:

Եվ նա որոշեց «ցատկել» հարևան արաբական պետությունների վրայով՝ հարաբերություններ հաստատելով առաջին հերթին Թուրքիայի և Իրանի հետ, և այդ իրողությունը ներկայացրեց որպես հրեական ու մահմեդական պետությունների գոյակցության և արդյունավետ համագործակցության մոդել:

[5] Տես *Jean-Loup Samaan.* Israel's Foreign Policy beyond the Arab World: Engaging the Periphery. Reviewed by Ziv Rubinovitz. “H-Net Reviews in the Humanities & Social Sciences”, September 2018 (https://www.h-net.org/reviews/showpdf.php?id=51708): Տես նաև *նույնի*՝ Israel's Foreign Policy beyond the Arab World: Engaging the Periphery. Routledge Studies in Middle Eastern Politics Series. London: Routledge, 2017:

Եվ այսպես. «Ծայրամասային ռազմավարությունը» կոչված էր լուծելու մի շարք խնդիրներ.

- հաղթահարելու Իսրայելի տարածաշրջանային մեկուսացումը,
- նվազեցնելու Իսրայելի վրա արաբական պետությունների անմիջական զինված հարձակման սպառնալիքը,
- ներսից քայքայելու արաբական պետությունների վարչակարգերը՝ աջակցելով այդ երկրներում ապրող էթնիկական ու դավանական փոքրամասնություններին,
- իսլամական աշխարհում գտնելու պետություններ, որոնք այս կամ այն պատճառով պատրաստ են համագործակցելու իր հետ և դրանց հետ հաստատելու հուսալի հարաբերություններ, որոնք կներկայացվեին որպես Իսրայելի ու մահմեդական պետությունների միջև խաղաղ և փոխշահավետ համագործակցության մոդել:

«Ծայրամասային դոկտրինի» հիմքում դրված էր Իսրայելի մասնակցությամբ երկու խումբ եռանկյունաձև հարաբերություններ ձևավորելու խնդիրը: **Հյուսիսում** Իսրայելը Իրանի և Թուրքիայի հետ կապ հաստատեց այսպես կոչված եռաժանիի *(Trident)* տեսքով: Ըստ էության, դա արմատական գաղտնի հետախուզական դաշինք էր, որի թիրախն էին արաբական պետությունները, այդ թվում՝ Սիրիան և Իրաքը: **Հարավում** Իսրայելը մերձեցավ Եթովպիայի և նորանկախ Սուդանի հետ՝ ձևավորելով հարավային եռանկյունին, որի թիրախն էր գերազանցապես Նասերական Եգիպտոսը: Հարավային եռանկյունուց Սուդանի դուրս գալուց հետո էլ Եթովպիայի հետ Իսրայելի համագործակցությունն առժամանակ շարունակվեց[6]: Հետագայում այդ հարաբերությունները լրացվեցին աշխարհագրորեն ծայրամասային արաբական պետությունների՝ Մարոկկոյի և Օմանի հետ համագործակցությամբ:

«Ծայրամասային երկրների հայեցակարգի» միջոցով Իսրայելը ձգտում էր նաև ամրապնդելու իր դիրքերը ԱՄՆ-ի հետ հարաբերություններում՝ իր նախագիծը «վաճառելով» նրան[*]: Թեև նախագիծն այդպես էլ չկենսագործվեց, փաստացի ձևավորվեց Իսրայելի՝ գրավոր կերպով չձևակերպված, սակայն հաստատուն դաշինքը ամերիկամետ Թուրքիայի և շահական Իրանի հետ:

«Ծայրամասային դոկտրինը» վճռորոշ գործոն է եղել նորաստեղծ Իսրայելի Պետության գոյատևման համար, քանի որ ընդհուպ մինչև 1980-

[6] Տես *Yossi Alpher.* Israel: alternative regional options in a changing Middle East. “NOREF/ Norsk ressurssenter for fredsbygging Report”. The Norwegian Peacebuilding Resource Centre, June 2013 (https://www.files.ethz.ch/isn/166559/b151938c198b0872c368a0eacebe96f0.pdf):

[*] 1958 թ. մայիսին Լիբանանյան իրադարձությունների ընթացքում Իսրայելի Գլխավոր շտաբի պետ Մոշե Դայանը մարշալ Մոնտգոմերիին ներկայացրեց Բեն-Գուրիոնի հավանությանն արժանացած մի ծրագիր: Հաշվի առնելով այն դժվարությունները, որոնք արևմտյան երկրների ղեկավարների համար ի հայտ էին եկել արաբական աշխարհում, Դայանն առաջարկեց ի հակակշիռ արաբական պետությունների ստեղծել ծայրամասային պետությունների մի նոր դաշինք, որի մեջ պետք է մտնեին Թուրքիան, Իրանը և Իսրայելը:

ական թվականների սկիզբը Իսրայելը հաճախակի էր պատերազմում իր արաբ հարևանների հետ: Իսրայելը գիտակցում էր «Ծայրամասային դաշինքի» փխրունությունը, և որ այն չի կարող երկարաժամկետ երաշխիք կամ, առավել ևս, հիմք դառնալ իր անվտանգության համար: Սակայն այն ընդունվեց որպես արաբների միասնական ճակատի դեմ Իսրայելի պայքարի անհրաժեշտ ռազմավարություն: Միևնույն ժամանակ, Իսրայելի անվտանգության տեսլականում երբեք չի անտեսվել այն գաղափարը, որ հաստատուն անվտանգության կարելի է հասնել միայն արաբների հետ հաշտության պայմանագրերի կնքմամբ: Բացի այդ, նա երբեք չէր անտեսում նաև գերտերությունների հետ ռազմավարական դաշինք կազմելու իր հիմնական անվտանգային դրույթը: 1948–1949 թթ. Իսրայելը ռազմական աջակցություն ստացավ ԽՍՀՄ-ից, 1950-ականներից մինչև 1960-ական թվականների սկիզբը՝ Ֆրանսիայից, իսկ 1962-ից մինչ օրս ստանում է ԱՄՆ-ից:

Այսպիսով՝ 1970-ական թվականների վերջերին «Ծայրամասային դոկտրինը» կորցրեց իր նախկին բովանդակությունը ոչ միայն որոշ դաշնակիցների հեռանալու, այլև այն պատճառով, որ Իսրայելի անվտանգային ընկալումները աստիճանաբար փոփոխվեցին:

Այսպիսով՝ Իսրայելի «Ծայրամասային երկրների» հայեցակարգի առաջին՝ «դասական», տարբերակը գործել է 1950–1970-ական թվականներին և փաստացի դադարել է գործելուց 1983 թ.: Տվյալ իրողությունը պայմանավորված էր մի շարք իրադարձություններով.

- 1974 թ. միապետության տապալումը Եթովպիայում՝ Հայլե Սելասիեի հեռացումը,
- 1978–1979 թթ. Քեմփ Դևիդի գործընթացն ու Եգիպտոսի հետ Իսրայելի հաշտեցումը,
- 1979 թ. Իսլամական հեղափոխությունն Իրանում և Իրանի՝ որպես դաշնակցի կորուստը,
- 1991 թ. Մադրիդի գործընթացը,
- 1993 թ. Օսլոյի գործընթացը,
- 1994 թ. Հորդանանի հետ համաձայնագիրը,
- 1995–1996 թթ. Պաղեստինի ինքնավարության ստեղծման գործընթացը,
- 2002 թվականից սկսած՝ Թուրքիայում ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո, թուրք-իսրայելական հարաբերություններում հաճախակի դարձած ճգնաժամները,
- 2020–2021 թթ. Աբրահամի համաձայնագրերն* ու Իսրայելի հետ հարաբերություններ հաստատող արաբական պետությունների ճամբարի ընդլայնումը:

* Աբրահամի համաձայնագրերը 2020 թ. օգոստոս–դեկտեմբեր ամիսներին կնքված այն պայմանագրերի և արձանագրությունների շարքն է, որոնցով հաստատվում և կարգավորվում են Իսրայելի և չորս արաբական պետությունների՝ Արաբական Միացյալ էմիրությունների (ԱՄէ), Բահրեյնի, Սուդանի և Մարոկկոյի միջև դիվանագիտական հարաբերություններ: Այս գործընթացին օժանդակեց ԱՄՆ-ի վարչակազմը: Պայմանագրերն ստացան «Աբրահամի համաձայնություններ» անվանումը ի պատիվ հուդայականության,

## «Հատվածայնացման» գաղափարը

«Ծայրամասային երկրների հայեցակարգի» առաջին՝ «դասական», տարբերակից Իսրայելի հրաժարվելու փուլում, երբ Իսրայելի հետ համագործակցող ծայրամասային պետություններն աստիճանաբար դուրս էին գալիս նախագծից, նա, այդուհանդերձ, չէր անտեսում ազգային ու կրոնադավանական փոքրամասնություններին իր տեսածրում պահելու տարբերակները:

Դեռ 1982 թ. իսրայելցի պատմաբան Օդեդ Յինոնը առաջ քաշեց արդի ընկալմամբ «բալկանացման» մի յուրահատուկ պլան[7]: Մասնավորապես՝ նա առաջարկեց մանրամասնորեն ու վարպետորեն մշակված մի նոր նախագիծ՝ հիմնված արաբական երկրների «հատվածայնացման» գաղափարի վրա: Ըստ դրա՝ նախատեսվում էր Մերձավոր Արևելքում (մերօրյա Մեծ Մերձավոր Արևելքում) էթնիկական ու կրոնադավանական առանձնահատկությունների հենքի վրա ստեղծել մինիպետություններ (քրդերի, մարոնիների, դրուզների, ղպտիների և այլ ազգությունների), իսկ Իսրայելին վերապահել տարբեր համայնքների խաղաղ գոյակցությունը երաշխավորելու դեր: Տվյալ պլանը էապես կթուլացներ ու կքայքայեր արաբական աշխարհը՝ խիստ նվազեցնելով նրա դերը, փոխելով նաև արաբական աշխարհի պատմության ընթացքը[8]: Այս կարգի գաղափարները լուրջ կերպով արծարծվում էին մինչև 1980-ական թվականների կեսերը, ինչից հետո առժամանակ մոռացության մատնվեցին: Սակայն դրանք, լինելով հեռանկարային հակախաղ, պարբերաբար վերադառնում են Իսրայելի քաղաքական օրակարգ:

Նշենք, որ Օդեդ Յինոնի առաջարկած «հատվածայնացման» գաղափարը ամենևին էլ նորույթ չէր թե՛ Իսրայելի, թե՛ նույնիսկ դեռ նրա հիմնումից առաջ Հրեական գործակալության արտաքին քաղաքականության ասպարեզում: Ավելին. այն արդեն փորձարկվել էր տարածաշրջանում «անկլավների» ստեղծման գաղափարի տեսքով:

Իսրայելը, ինքը լինելով գերազանցապես մահմեդական տարածաշրջանում անկլավ, սկզբնական շրջանում խրախուսում էր «մինիպետությունների խճանկար» ստեղծելու գաղափարը, ինչը կքայքայեր արաբների հեգեմոնիան ոչ արաբների նկատմամբ: Այսպես. Սուդանում տեղի ունեցած առաջին քաղաքացիական պատերազմի ընթացքում ակնհայտ էր Իսրայելի աջակցությունը հարավի ընդդիմադիր ուժերին: Հյուսիսային Իրաքում

---

քրիստոնեության և իսլամի համար ընդունելի նախահայր Աբրահամի (Տես “The Abraham Accords”. “Stand With Us (SWU)” (https://www.standwithus.com/theabrahamaccords?gad_source=1&gclid=EAIaIQobChMIlP6Fudz4gQMVb4poCR0TdAnQEAAYASAAEgJelfD_BwE)):

[7] Տես *Oded Yinon.* A Strategy for Israel in the Nineteen Eighties. “The Zionist Plan for the Middle East”. Translated and edited by Israel Shahak. Association of Arab-American University Graduates. Inc. Belmont, Massachusetts, 1982 (https://www.academia.edu/30591347/The_Zionist_Plan_for_the_Middle_East):

[8] Տես *Oded Yinon.* Stratégie pour Israël dans les années 80. “Revue d'études palestiniennes”, Automne 1982, N 5; *Mirella Galletti.* Kurdistan: A Mosaic of Peoples. “Acta Kurdica”. The International Journal of Kurdish & Iranian Studies, 1994, Vol. 1:

Իսրայելի գործակալներն աջակցում էին քրդերին: Սակայն Լիբանանում է, որ իրեական պետությունը լիովին խաղարկեց քրիստոնեական անկլավի խաղաքարտը. 1975–1977 թթ. Իսրայելի աջակցությունը Արևելյան Բեյրութի և հարավային սահմանամերձ շրջանների քրիստոնյա մարտիկներին վերածվեց լիարժեք կերպով կազմակերպված համագործակցության, որի գագաթնակետն էին 1982 թ. իսրայելական ներխուժումը և Լիբանանի Նախագահի պաշտոնում Բաշիր Ժմայելի ընտրությունը: Սակայն ժամանակի ընթացքում քրդերի, մարոնիների, դրուզների և այլ փոքրամասնությունների խմբերի համար անկլավների խճանկար ստեղծելու հարցում իսրայելական քաղաքականությունը վերանայվեց ու փոփոխվեց: 1975 թ. Ալժիրի իրանա-իրաքյան համաձայնագրի կնքումից հետո Իրանի շահը դադարեցրեց իր աջակցությունը հյուսիսային Իրաքի քրդերին, և Իսրայելը հետևեց շահի օրինակին, քանի որ նա կարող էր աջակցել միայն Իրանի տարածքով ու համաձայնությամբ: Հետագայում Իսրայելի քաղաքականությունը փոխվեց նաև Մերձավոր Արևելքի քրիստոնյաների և մյուս կրոնական ու էթնիկական փոքրամասնությունների՝ իրենց անկլավներն ստեղծելու ձգտումների նկատմամբ: Խնդիրն այն է, որ Իսրայել–Եգիպտոս հաշտության գործընթացը, ինչպես նաև Իսրայելի քաղաքականությունը ԱՄՆ-ի Կառավարության դիրքորոշման հետ համաձայնեցնելու ձգտումը Իսրայելին ստիպեցին վերանայել մի շարք նախկին մոտեցումներ: Ավելին, Եգիպտոսի հետ Քեմփ-Դևիդի համաձայնագրերի կնքումից հետո Իսրայելը չարձագանքեց ո՛չ համագործակցության վերաբերյալ դրուզների, ո՛չ էլ իրենց աջակցելու վերաբերյալ հարավային Սուդանի ապստամբների խնդրանքներին, քանի որ Կահիրեի հետ հաշտությունը Իսրայելի համար ուներ ավելի մեծ արժեք: Իսրայելի կարծիքով՝ Քեմփ-Դևիդի գործընթացը հնարավոր էր դարձնում արաբա-իսրայելական հակամարտությունը ապագայում իսրայելա-պաղեստինյան խնդրի վերածելու հեռանկարը: Հետևաբար 1980-ական թվականներից մինչև օրս եղած ժամանակահատվածում վերջ դրվեց նաև մարոնիների հետ Իսրայելի շփումներին:

Հարկ է նշել, որ դրա հետ մեկտեղ Իրաքի և Իսրայելի միջև հակամարտությունը պահպանվում էր, ուստի Իսրայելի և իրաքյան քրդերի համագործակցության ներուժը սպառված չէր: Այդուհանդերձ, Իրաքյան Քրդստանում գործող հիմնական կուսակցություններից մեկի՝ Քրդստանի հայրենասիրական միության փոխնախագահ Մուստաֆա Նավշիրվանը 1992 թ. նշում էր, որ փոքր պետությունների դարն անցել է[9], ինչին արևմտյան փորձագետները հակադրեցին հետևյալ թեզը. «Եթե փոքր պետությունների ժամանակն անցել է, ապա սահմանային շրջանների հատվածյնացման վերլուծությունը կատարելիս անհրաժեշտություն է առաջանում գտնելու պետության նոր մոդել, որպեսզի հնարավոր լինի վերականգնել այդ տարածքների (նկատի ունի առաջին հերթին Իրաքը, – *Վ. Պ.*) էթնիկական և կրոնական խճանկարը (նկա-

[9] Տես “Interview with Mustafa Nawshirwan, PUK Deputy General Secretary”. Sulaymaniyah (Iraqi Kurdistan), October 1992: Բերված է ըստ՝ *Միրելա Գալետի,* Նշ. աշխ.:

տի ունի ամբողջականության մեջ և ոչ իբրև մասնատված բեկորներ, – *Վ. Պ.*) խաղաղ և ժողովրդավարական ճանապարհով»[10]:

Այդուհանդերձ մերձավորարևելյան խնդրի ներկայիս սրման և փակուղային թվացող զարգացման պայմաններում միանգամայն հնարավոր է, որ Իսրայելը կրկին, թեկուզև մասամբ ու խիստ ընտրողաբար, վերադառնա «անկլավային կազմավորումների խճանկարին» կամ որոշ արաբական ու նաև ոչ արաբական, գերազանցապես ծայրահեղ հակաիսրայելական դիրքորոշմամբ երկրների «հատվածայնացման» պլաններին: Առավել ևս, որ թուրք-իսրայելական դաշինքի խորացման պայմաններում Իսրայելը մասնակիորեն վերադարձավ «ծայրամասային դոկտրինին»: Սակայն այս երկուսի համատեղումը (օրինակ՝ թուրք-իսրայելական դաշինքի պայմաններում Իսրայելի աջակցությունն իրաքյան քրդերին «հատվածայնացման» նպատակով) ծայրահեղ դժվար է: Եվ ամենայն հավանականությամբ ներկայիս լարված իրավիճակում Իսրայելը հանում երևակայական շահերի (Իրաքն առանց այդ էլ թույլ է, իսկ իրաքյան քրդերը՝ փաստացի անկախ) չի դիմի թուրք-իսրայելական դաշինքի վտանգմանը:

### «Նոր ծայրամասային ռազմավարություն»

20-րդ դարի վերջին – 21-րդ դարի սկզբին Իսրայելի համար տարածաշրջանային մակարդակով ի հայտ են գալիս որոշակի անբարենպաստ միտումներ: Տարածաշրջանային զարգացումներում, ինչպես նաև արաբաիսրայելական հակամարտությունում էթնիկական համերաշխության հետ մեկտեղ վերստին աճել է իսլամական համերաշխության դերը: Ավելին. տարածաշրջանում իրենց դիրքերն զգալիորեն ամրապնդած Թուրքիան և Իրանը սկսել են անմիջական ազդեցություն գործել արաբա-իսրայելական հակամարտությանն առնչվող զարգացումների վրա*:

ԻԻՀ-ի միջուկային ծրագիրը, «Արաբական գարնան» իրադարձությունները և արաբական պետություններում, այդ թվում՝ Իսրայելին սահմանակից երկրներում, արմատական իսլամի դերի նկատելի աճումը, ժամանակ առ ժամանակ սրվող թուրք-իսրայելական հարաբերությունները Իսրայելի օրակարգ մտցրին երկրի դեմ թշնամանքի և սպառնալիքների նոր օղակի ձևավորման մասին պնդումը: Այս անգամ որպես սպառնալիքների հիմնական աղբյուրներ էին նշվում ԻԻՀ-ն, արմատական իսլամը՝ ի դեմս ոչ պետական դերակատարների («Համաս», «ԻԼԻՊ», «Հեզբոլլահ»), իսկ որպես հավանական սպառնալիք՝ Թուրքիան: Սպառնալիքներին դիմակայելու հնարավոր տարբերակների թվում վերստին կարևորվեց «Ծայրամասային ռազմավարությունը»: Աստիճանաբար շրջանառության մեջ դրվեց

---

[10] Տես *Միրեյա Գալետի,* Նշ. աշխ.:

* Նախ Իրանը (1979 թ. Իսլամական հեղափոխությունից հետո), իսկ այնուհետև Թուրքիան (2002 թ. իսլամական «Արդարություն և զարգացում կուսակցության» իշխանության գալուց հետո) սկսեցին ակտիվացնել պաղեստինյան խնդիրը և սուր քննադատության ենթարկել Իսրայելին:

դրա վերանայված ու նորացված մեկնակերպը: Կիրառվեց նաև «Հակադարձված (շրջված) ծայրամասային դոկտրինը» *(Reverse periphery doctrine)*, որում ակնարկվում էր, որ եթե նախկինում Իսրայելը համագործակցում էր Իրանի և Թուրքիայի հետ, ապա այժմ Ադրբեջանի, Կենտրոնական Ասիայի և արաբական աշխարհի՝ իր հետ համագործակցող որոշ պետությունների միջոցով ձգտում է օղակի մեջ առնելու ԻԻՀ-ն, իսկ Միջերկրածովյան պետությունների՝ Հունաստանի ու Կիպրոսի միջոցով զսպելու Թուրքիայի նկրտումները: Սակայն Իսրայելը հաշվի է նստում այն փաստի հետ, որ Կիպրոսը, Հունաստանը, Բուլղարիան, Ռումինիան և Ադրբեջանը ո՛չ առանձին, ո՛չ միասին վերցրած իրենց տնտեսական ներուժով և քաղաքական ազդեցությամբ չեն կարող հակակշռել կամ փոխարինել Թուրքիային և Իրանին: Նրանք չեն կարող նպաստել Իսրայելի և նրա հարևանների միջև խաղաղության հաստատմանը, ինչպես դա ժամանակին արեցին Իրանի շահն ու Մարոկկոյի թագավորը Իսրայելի և Եգիպտոսի հաշտեցման գործում: Նմանապես Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային ուժային կենտրոնի ազդեցությունը չեն կարող հավասարակշռել կամ հակակշռել այն երկրները, որոնց հետ Իսրայելը ներկայումս սերտորեն համագործակցում է: Իսրայելը չի բացառում ինչպես Թուրքիա–Հունաստան, այնպես էլ ԻԻՀ–Ադրբեջան համագործակցությունը, համապատասխանաբար՝ ՆԱՏՕ-ի և շիադավանության շրջանակներում: Հասկանալի է նաև, որ այս փուլում Իսրայելը չի կարող միաժամանակ համագործակցել և՛ Թուրքիայի, և՛ Հունաստանի ու Կիպրոսի հետ:

Իսրայելն առաջին հերթին ձգտում է «Նոր ծայրամասային ռազմավարությունում» ներառված պետությունների միջոցով առավելագույնս բացառելու տարածաշրջանում ԻԻՀ-ի ազդեցության հետագա տարածումը, նվազագույն հակակշիռ ապահովելու ընդդեմ Թուրքիայի, իրացնելու մեծ սպառում ունեցող մի շարք գաղափարներ՝ ահաբեկչության և արմատական իսլամի դեմ պայքար, տեխնոլոգիաների և սպառազինությունների վաճառք, տնտեսական համագործակցության ծավալում (այդ թվում՝ համագործակցություն էներգակիրների ոլորտում):

Իսրայելի՝ ներկայիս անվտանգային սպառնալիքների ընկալումներում առանձնանում է ԻԻՀ-ի խնդիրը: 2022 թ. Իսրայելն ԻԻՀ-ի դեմ հակամարտության շրջանակներում անցում կատարեց «Երկարաժամկետ մրցակցության դոկտրինին» *(Long-Term Competition Doctrine)*, որը, ըստ էության, մանրամասնում է «Հակադարձված (շրջված) ծայրամասային դոկտրինի» կամ «Նոր ծայրամասային ռազմավարության» մեջ ուրվագծվող՝ ԻԻՀ-ին վերաբերող քայլերի ալգորիթմը[11]: «Երկարաժամկետ մրցակցության դոկտրինը» այլ քայլերի հետ մեկտեղ նախատեսում է նաև «Տարածաշրջանում

---

[11] Իրանի և Իսրայելի հակամարտության կիբեռբաղադրիչի մասին հանգամանորեն տես *Գաուդատ Բահգատ,* Իրանա-իսրայելական առճակատման կիբեռտիրույթ: «ՀԲ», 2022, հմ. 1:

ԻԻՀ-ի դեմ բազմակողմ երկարաժամկետ արշավի կազմակերպում, որի շրջանակներում հստակեցվում են դերակատարները (Մերձավոր Արևելքի այն պետությունները, որոնց սպառնում է Իրանը) ու դրանց դերերը»[12]:

«Նոր ծայրամասային ռազմավարությունն» իր նախորդից էականորեն տարբերվում է դերակատարների թվով ու շարժառիթավորմամբ, նոր դաշինքների կամ համագործակցության առջև դրվող նպատակներով, դրանց հասնելու մեթոդներով: Այս նոր ռազմավարությունն ուղղված է պետությունների երրորդ և չորրորդ շրջաններին (օղակներին)՝ ներառելով Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի որոշ պետությունների, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի չափավոր արաբական պետություններին և Միջերկրական ծովի ոչ մահմեդական երկրներին: Ի տարբերություն նախորդից՝ «Նոր ծայրամասային ռազմավարությունում» ներառված երկրները չեն թաքցնում Իսրայելի հետ իրենց համագործակցությունը: Այս բոլոր դերակատարներին միավորող ընդհանուր սպառնալիքների հետ մեկտեղ կողմերն առանձնահատուկ կարևորություն են տալիս հատկապես տնտեսական համագործակցությանը: Իսրայելը բավականաչափ զգայուն է «նոր ծայրամասային» երկրների շահերի նկատմամբ: Սակայն իրավիճակը ներկայումս այլ է. Իսրայելը ռազմական տեսանկյունից տարածաշրջանում ամենահզոր պետությունն է և միակն է, որն ունի միջուկային զենք: Ընդսմին «Ծայրամասային նոր ռազմավարության» միջոցով նա նաև հաստատում է իր՝ որպես Մերձավոր Արևելքում ինքնուրույնաբար ու լեգիտիմորեն գործող սուբյեկտի դերը: Միևնույն ժամանակ, նա ամրապնդում է իր դիրքերը հետխորհրդային տարածությունում, մասնավորապես՝ Կենտրոնական Ասիայում և Կովկասում:

Իսրայելը կարևորում է նաև նոր ծայրամասային գործընկեր պետություններում հրեական համայնքների առկայությունը՝ հետագայում դրանց ներգաղթն ապահովելու տեսանկյունից[*]:

Իսրայելը հաշվի է առնում տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքը և Մերձավորարևելյան միջուկի կերպափոխման փաստը: Աշխարհաքաղաքական առումով՝ աշխարհագրական, քաղաքական և տնտեսական տեսանկյունից, Իսրայելը պատկանում է մերձավորարևելյան տարածաշրջանի միջուկին (կամ՝ մերձավորարևելյան միջուկին), որի ուրվագիծը պայմանավորված է մի շարք պատմական, մշակութային-քաղաքակրթական և քաղաքական գործոններով: «Մերձավորարևելյան միջուկի» շրջանակներում, իր հերթին, կարելի է առանձնացնել հետևյալ երկու կենտրոնները.

**միջերկրածովյանը**, որը ներառում է, նախ և առաջ, այսպես կոչված «Բարեբեր կիսալուսնի» *(Fertile Crescent)* տարածքները, ինչպես նաև

[12] *Yaakov Lappin*. The Long-Term Competition Doctrine – Israel’s Theory of Victory vs Iran “The MirYam Institute”, 4 October 2022 (https://www.miryaminstitute.org/commentary-blog/the-long-term-competition-doctrine-israels-theory-of-victory-vs-iran).

[*] Այս տեսանկյունից նա էական անելիքներ ունի հատկապես Ադրբեջանում, քանի որ Կենտրոնական Ասիայի առանձին երկրներում տվյալ գործընթացն արդեն ավարտվել է:

Եգիպտոսը: Սույն կենտրոնի կիզակետը, կամ առանցքային կետը, արաբա-իսրայելական հակամարտության հիմնական գոտին է՝ հուդայականության և քրիստոնեության օրրանը, որտեղ գտնվում են երեք միաստվածական կրոնների կենտրոնը,

**արաբականը**, որը ներառում է իսլամական աշխարհի նավթային ու ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև նրա գլխավոր հոգևոր կենտրոնները:

Իսրայելի «Նոր ծայրամասային ռազմավարությունը» նոր հնարավորություններ է ընձեռում Մերձավորարևելյան միջուկի կերպափոխման պայմաններում:

**Եզրակացություն**

1950-ական թվականների կեսերին Իսրայելում մշակված «Ծայրամասային ռազմավարությունն» ուներ տարածաշրջանային բնույթ: Այն մշակվել և իրագործվում էր ի պատասխան համաարաբականության և տարածաշրջանում Իսրայելի մեկուսացման սպառնալիքների: Իր էությամբ տվյալ ռազմավարությունը կարող է բնորոշվել որպես Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի ոչ արաբական, մահմեդական ու ոչ մահմեդական պետությունների, ինչպես նաև տարածաշրջանի արաբական երկրների ոչ արաբական (անկախ կրոնից ու դավանանքից) փոքրամասնությունների շրջանում դաշնակիցների որոնում՝ սպառնալիքների ընդհանուր ընկալման հիմքով: Իսրայելի «ծայրամասային» առաջին, կամ «դասական», ռազմավարությունը բովանդակության տեսանկյունից կարող է գնահատվել որպես «շահերի դաշինք»:

«Ծայրամասային երկրների հայեցակարգի» էությունը հետևյալն էր. Մերձավոր Արևելքը բացառապես արաբական ոլորտ չէ, նրա բնակչության մեծ մասը արաբներ չեն, այլ ուրիշ ազգերի ներկայացուցիչներ են (թուրքեր, պարսիկներ, հրեաներ, քրդեր և այլն): Այն դեպքում, երբ տարածաշրջանի արաբական երկրների և Իսրայելի միջև հարաբերությունները մնում էին թշնամական, «ծայրամասի» ոչ արաբական երկրները, ներառյալ՝ Թուրքիան, Իսրայելի հետ պահպանում էին «բարեկամական կապեր»: Հենվելով «ծայրամասի» ոչ արաբական երկրների վրա՝ իսրայելական ղեկավարությունը մտադրվել էր ամրապնդելու տարածաշրջանում իր պետության դիրքերը:

Ծայրամասային երկրների հետ դաշնակցելու Իսրայելի առաջին, կամ «դասական», ռազմավարությունն ընդհանուր առմամբ հաջողված էր: Նաև այս ռազմավարության շնորհիվ է, որ արաբական պետությունների օրակարգ մտավ Իսրայելի հետ հաշտեցման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման թեզը:

Իսրայելի «Նոր ծայրամասային ռազմավարությունը» դեռ կայացման փուլում է: Սակայն այն որոշակիորեն բխում է ոչ միայն ռազմական սպառնալիքների (տես նկ. 1), այլև տնտեսական և էներգետիկ անվտանգության իսրայելական ընկալումներից:




Նկ. 1. Ռազմական սպառնալիքի իսրայելական ընկալումը

Տրամաբանական են թվում Հունաստանի և Կիպրոսի, Ադրբեջանի, Կենտրոնական Ասիայի պետությունների և նույնիսկ Հարավային Սուդանի հետ Իսրայելի ունեցած հարաբերությունների դիտարկումն ու վերլուծությունը «նոր ծայրամասային քաղաքականության» համատեքստում, թեև նշված երկրներից շատերի աշխարհաքաղաքական դիրքն ու դերը համարժեք չեն Թուրքիայի, շահական Իրանի և Եթովպիայի երբեմնի դիրքին ու դերին և չեն արտացոլում «դասական ծայրամասային քաղաքականության» տրամաբանությունը: Սպառնալիքներն ու մարտահրավերները և դրանց մարմնավորող պետական ու ոչ պետական դերակատարներն այլ են: Բացի այդ, Իսրայելի կառավարությունը թերևս չի պատրաստվում Մերձավոր Արևելքի ծայրամասերում կերտվող ու կերտվելիք հարաբերություններով փոխարինել կամ վերակերտել անցյալում արդյունավետ, բայց հետագայում ճախողված հարաբերությունները: Բնական է, որ Հունաստանը չի կարող փոխարինել Թուրքիային, Ադրբեջանը՝ Իրանին կամ Հարավային Սուդանը՝ Եթովպիային, առավել ևս այն դերերում, որոնք տվյալ զույգերում նշված երկրորդ երկրները խաղացին 1950-ական թվականներին: Ներկայումս Իսրայելը շատ ավելի հզոր է, քան 1950–1970-ական թվականներին, և ունի անհամեմատ ավելի ամուր քաղաքական ու տնտեսական դիրքեր, քան իր բոլոր նոր դաշնակիցներն ու գործընկերները: Հետևաբար վերջիններս կոչված են ոչ թե հավասարակշռելու կամ համակշռելու Իսրայելի երբեմնի դաշնակիցներ, իսկ այժմ մրցակիցներ Իրանին ու Թուրքիային, այլ միայն հակազդեցություն գործելու դրանց:

Հիմնական հարցերը, որ ծագում են, հետևյալն են. արդյոք Իսրայելին իսկապես պետք են դաշնակիցներ, որպեսզի խաղան այն դերը, որը 1950-ական թվականներին խաղում էին Թուրքիան և Իրանը, արդյոք Իսրայելը կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում Թուրքիային դիտելու է որպես սպառնալիք, և, վերջապես, ի՞նչ տեղ է նոր սպառնալիքների, վտանգների, ռիսկերի ու մարտահրավերների պայմաններում Իսրայելի ազգային անվտանգության ռազմավարությունում հատկացվում Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի պետություններին:

# «ПЕРИФЕРИЙНАЯ ДОКТРИНА» И «ТЕОРИЯ ФРАГМЕНТАЦИИ» БЛИЖНЕГО ВОСТОКА В КОНТЕКСТЕ СТРАТЕГИЧЕСКИХ ВОСПРИЯТИЙ ИЗРАИЛЯ

*В. С. ПЕТРОСЯН, кандидат исторических наук, доцент,*
*Директор Института арменоведческих исследований ЕГУ*

РЕЗЮМЕ

7 октября 2023 года Палестино-израильский конфликт вновь вступил в фазу активных боевых действий. В создавшихся условиях, когда местные, региональные и глобальные акторы разъясняют или уясняют свою позицию относительно текущих военных действий, имеющих потенциал перерастания в региональную и широкомасштабную войну, придается значение и рассмотрению доктрин, концепций и теорий, ставших идеологиями в сфере обеспечения Израилем собственной безопасности и его восприятий региональной безопасности в целом.

В этом плане рассматриваются «Периферийная доктрина» («Стратегия периферийных стран») и сущность «Теории фрагментации», этапы их трансформации и обусловливающие эти трансформации безопасностные восприятия Израиля.

Данные доктрина и теория рассматриваются в контексте стратегических принципов безопасности Израиля и его восприятий Ближнего и Среднего Востока как гетерогенного культурного пространства.

Всесторонне анализируется также ось, которая прочерчивается в результате разработанной Израилем «Новой периферийной доктрины», иногда называемой «доктриной обратной периферии», отражающая стремление Израиля ввести блокаду настоящих периферийных стран – Ирана и Турции – или сдерживать их. Особый интерес представляют рассмотрение и сравнительный анализ различий между классической периферийной доктриной и «Новой» (не только в контексте числа и мотивов акторов, целей, стоящих перед новым союзом или сотрудничеством, методов их достижения, но и в рамках факта придания особого значения их экономической составляющей наряду с общими угрозами, объединяющими все стороны).

Проведенный анализ позволяет заключить, что первая, или «классическая», доктрина Израиля «о заключении союза с периферийными странами» и Теория фрагментации в целом имели успех. Также благодаря этой стратегии в повестку дня арабских государств вошел тезис о примирении с Израилем и установлении дипломатических отношений с ним.

В свою очередь, «Новая периферийная доктрина» Израиля все еще находится на этапе формирования. Однако в некоторой степени она исходит из израильских восприятий не только военных угроз, но и экономической и энергетической безопасности.

# THE “PERIPHERY DOCTRINE” AND “THEORY OF FRAGMENTATION” OF THE MIDDLE EAST WITHIN THE CONTEXT OF ISRAEL’S STRATEGIC PERCEPTIONS

*V. S. PETROSYAN, PhD in History, Associate Professor, Director, Institute for Armenian Studies, YSU*

SUMMARY

October 7, 2023, saw the Israeli-Palestinian conflict step up on a new stage of combat operations. Consequently, with local, regional and global actors elucidating or clarifying their position on current military actions that hold the potential to escalate into a regional and large-scale war, importance is attached to the consideration of doctrines, concepts and theories that have become ideologies in the aspect of ensuring Israel's own security, and its perceptions of regional security as a whole.

In this sense, the article discusses the “Periphery Doctrine” (“Strategy of periphery countries”), and the essence of the “Theory of Fragmentation”, stages of their transformation and Israel’s security perceptions stipulating those transformations.

The aforementioned doctrine and the theory are considered within the context of Israel’s strategic security principles and its perceptions of the Near and Middle East as somewhat a heterogeneous cultural domain.

The axis drawn due to the Israeli-developed "New Doctrine of Periphery", sometimes called the "Reverse periphery doctrine", is also comprehensively analyzed, representing Israel’s desire to impose a blockade on the real periphery countries – Iran and Turkey – or to contain them. The article attaches particular interest to the consideration and comparative analysis of the differences between the classical Periphery Doctrine and the "New" one (not only in the sense of the number and motives of actors, the goals facing the new alliance or cooperation, methods of achieving them, but also within the framework of the fact of attaching special importance to their economic component along with common threats uniting all parties).

The analysis allows us to sum up that Israel’s first, or "classical" doctrine "on concluding an alliance with periphery countries", and the theory of fragmentation as a whole, were successful. Besides, owing to this strategy, the thesis on reconciliation with Israel and establishment of diplomatic relations with it was put on the agenda of the Arab States.

In its turn, Israel’s "New Periphery Doctrine" is still at the formation stage. However, to some extent it comes from Israeli perceptions of not only military threats, but also economic and energy security.

# ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ*

*Դ. Վ. ՍԵՐՈԲՅԱՆ, գնդապետ, ՌԴ ԶՈՒ-ի ԳՇ Ռազմական ակադեմիայի ունկնդիր*



Ժամանակակից ռազմական հակամարտություններին բնորոշ է մեծ չափերով գերճշգրիտ զենքի կիրառումը, ինչը դառնում է զգալի թվաքանակով սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) շարքից դուրս գալու պատճառ[1]: Գաղտնիք չէ, որ ռազմական գործողությունների ընթացքում շարքից դուրս եկած ՍՌՏ նմուշների վերականգնման ուղղությամբ զինված ուժերի հնարավորությունները բավարար չեն նորոգման (հատկապես՝ միջին և հիմնական) խնդիրները ամբողջ ծավալով լուծելու համար: Բացի այդ, զորքերը (ուժերը) զինվում են նորագույն տեսակների ՍՌՏ-ով, որոնց մարտական պատրաստությանը և ռազմական գործողությունների ընթացքում աշխատանքի հուսալիությանը ներկայացվող պահանջներն զգալիորեն մեծացել են: Այդ պատճառով շարքից դուրս եկած ՍՌՏ նմուշների վերականգնման գործում ներգրավվում են արդյունաբերական ձեռնարկությունները, ինչը հնարավորություն է տալիս ընդգրկելու զգալիորեն ավելի մեծ ծավալներով նորոգումային ֆոնդ: Մինչդեռ նորոգման աշխատանքների արդյունավետությունը հնարավորություն է տալիս ՍՌՏ թվաքանակն ու որակը պահպանելու պահանջվող մակարդակով, ինչը պետության զինված ուժերի տեխնիկական զինվածության հիմնական ցուցանիշն է:

Սպառազինության և ռազմական տեխնիկայի վերականգնումը այն կազմակերպատեխնիկական միջոցառումների (աշխատանքների) համալիրն է, որոնց նպատակն է շարքից դուրս եկած ՍՌՏ նմուշների բերումը կիրառման համար պատրաստության՝ դրանք շարք վերադարձնելու միջոցով (տես նկ. 1)[2]: Գործառութային հատկանիշով այն ներառում է տեխնիկական հետախուզությունը, տարահանումը, նորոգումը, ինչպես նաև նորոգված (տարահանված) նմուշների բերումը կիրառման համար պատրաստի վիճակի և

* Հոդվածը նախնական տարբերակով ստացվել է 16.06.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 30.10.2023:

[1] Այս և հաջորդ հղումները տես ռուսերեն տեքստից հետո: – *Խմբ.:*

զորամասերին (ստորաբաժանումներին) դրանց փոխանցումը (վերադարձը շարք կամ պահման համար):

ՍՌՏ վերականգնումը մարտական գործողությունների նախապատրաստման և վարման (վերախմբավորման) ժամանակ դրանց կորուստների լրացման հիմնական, իսկ երբեմն նաև միակ աղբյուրն է: Տվյալ խնդիրները հնարավոր է հաջողությամբ լուծել, եթե ապահովված են.

- իրադրության և կատարվելիք խնդիրների մասին մշտական իրազեկվածությունը,
- մարտական գործողությունների (վերախմբավորման) մտահղացմանն ու բնույթին տեխնիկական ապահովման ստեղծվելիք ուժերի և միջոցների խմբավորման համապատասխանությունը,
- գլխավոր հարվածի (հիմնական ջանքերի կենտրոնացման) և այլ կարևոր ուղղություններում (շրջաններում) նորոգումնատարահանման ուժերի և միջոցների հիմնական ջանքերի կենտրոնացումը,
- շարքից դուրս եկած ՍՌՏ նմուշների թվաքանակի, տեղադիրքի և վիճակի մասին տեղեկությունների պատեհաժամ հավաքումը (հայթայթումը),
- առավել մեծ թվով վնասված ՍՌՏ գտնվելու շրջաններ (վայրեր) նոր ՍՌՏ արագ առաջքաշմամբ նորոգումնատարահանման ուժերով և միջոցներով կատարվող տարաշարժը,
- հակառակորդի գրավման սպառնալիքի տակ գտնվող շրջաններից վերականգնման ենթակա ՍՌՏ դուրսբերմանն ուղղված գործուն միջոցների ձեռնարկումը,
- նորոգումնավերականգնողական ուժերի համակողմանի պատրաստումը և դրանց հնարավորությունների արդյունավետ օգտագործումը,
- զորքերում վերականգնողական աշխատանքներով չընդգրկված ՍՌՏ նմուշների՝ համապատասխան գործարաններ ու հիմնարկներ պատեհաժամ փոխադրումը,
- ռազմատեխնիկական գույքով (ՌՏԳ) և աշխատանքների կատարման համար անհրաժեշտ այլ նյութական միջոցներով նորոգումնային զորամասերի և կազմավորումների պատեհաժամ ապահովումը,
- նորոգումնավերականգնողական մարմինների (ՆՎՄ) հուսալի պահպանությունն ու պաշտպանությունը և հակառակորդից խոցվելու դեպքում դրանց աշխատունակության պատեհաժամ վերականգնումը,
- նորոգումնատարահանման ուժերի ու միջոցների վստահ և անընդհատ կառավարումը:

ՍՌՏ վերականգնման՝ որպես զինված ուժերի շինարարության ու զարգացման հիմնական միջոցառումներից մեկի բաղադրիչի որակական ու քանակական բնութագրերը ներառում են բազմաթիվ պայմաններ և գործոններ, որոնց մի մասը նպաստում է աշխատանքների արդյունավետության մեծացմանը, իսկ մյուսը, ընդհակառակը, նվազեցնում է այն: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի առնչությամբ որպես հիմնական դրական գործոններից մեկը պետք է նշել **անսարք ՍՌՏ վերականգնման նկատմամբ այն մոտեցումները**, որոնք ձևավորվել են ՀՀ ԶՈՒ-ի կազմավորման և զարգացման ժամանակաշրջանում: Դրանք ժառանգվել

էին խորհրդային «դպրոցից», որը այն ժամանակ հիմնարար նշանակություն ուներ ամբողջ հետխորհրդային տարածության, Արևելյան Եվրոպայի, Աֆրիկայի և Ասիայի շատ պետությունների ԶՈՒ-երի համար: Այս ուղղությամբ խորհրդային ժամանակաշրջանում կատարված զգալի աշխատանքը հնարավորություն տվեց 1991–1994 թվականներին տեղի ունեցած մարտական գործողություններում հաջողությամբ լուծելու վերականգնման խնդիրները, ինչը Հայաստանի Հանրապետության տրանսպորտային ու տնտեսական շրջափակման, դեռևս ոչ լիակատար կերպով ձևավորված Զինված ուժերի, ըստ էության տեխնիկայի մատակարարումներից զուրկ լինելու պայմաններում հայկական կողմի համար դարձավ ռազմական գործողությունների հաջող ելքի վճռորոշ գործոններից մեկը:

Ինչպես ցույց է տալիս փորձը, ՀՀ ԶՈՒ-ում անսարք ՍՌՏ վերականգնման նկատմամբ վերջին տասնամյակներում մշակված մոտեցումները այսօր էլ հնարավորություն են տալիս դրա մարտունակությունը (ըստ նախանշանակման կիրառվելու պատրաստությունը) պահպանելու համապատասխան ղեկավար փաստաթղթերով սահմանված մակարդակում: Ընթացիկ նորոգում (ԸՆ) պահանջող տեխնիկայի վերականգնման խնդիրները հիմնականում կատարում են զորային օղակի ուժերը ու միջոցները, մինչդեռ բարդ ընթացիկ և միջին նորոգում (ՄՆ) պահանջող տեխնիկայի վերականգնումը կատարում են համապատասխան զորամասերն ու ստորաբաժանումները[3]: Հիմնական նորոգում (ՀՆ) պահանջող ՍՌՏ նմուշները, ինչպես նաև միջին նորոգման կարիք ունեցող ՍՌՏ մի մասը, որոնք ընդգրկված չեն օպերատիվ-մարտավարական օղակի ՆՎՄ ոլորտում, վերականգնվում են Կենտրոնի նորոգումային բազաների ուժերով: Տարբեր մակարդակներով նորոգումային աշխատանքների բաշխվածությունը հնարավորություն է տալիս վերականգնումը կազմակերպելու զուգահեռաբար, ինչը նպաստում է ՍՌՏ վերականգնման արդյունավետության էական մեծացմանը: Նորոգումային ֆոնդի հոսքի տրոհման դեպքում նախատեսվում է, որ յուրաքանչյուր օղակի ՆՎՄ-ն պետք է վերականգնողական աշխատանքները կատարի ամբողջ ծավալով՝ սկզբից մինչև լրիվ ավարտը, ինչը հնարավորություն է տալիս տեղական արդյունաբերական բազայի կարողությունների օգտագործման հետ մեկտեղ սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական պատրաստության ցուցիչները պահելու ղեկավար փաստաթղթերով սահմանված մակարդակում:

ՍՌՏ-ն կիրառման համար պատրաստ պահելուն զգալիորեն նպաստում են արդյունաբերական բազայի (այդ թվում՝ ռազմաարդյունաբերական համալիրի) հնարավորությունների օգտագործումը և համագործակցությունը քաղաքացիական հատվածի նորոգումային ծառնարկությունների, ինչպես նաև շահագործվող ՍՌՏ նմուշները թողարկող ընկերությունների պաշտոնական ներկայացուցիչների հետ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ կատարված մասնագիտական գրականության նյութերի վերլուծության հիման վրա, հնարավորություն է տալիս կազմելու ՍՌՏ վերականգնման աշխատանքների հետևյալ սխեման

(տես նկ. 2)[4]: ԶՈՒ-ի զարգացմանը զուգընթաց, այն հնարավորության հաշվառմամբ, որ հակառակորդը կարող է կիրառել զինված պայքարի նոր մեթոդներ, ինչպես նաև նոր տեսակների սպառազինություն, զինված ուժերի տեխնիկական ապահովումը, այդ թվում նաև ՍՌՏ վերականգնման խնդիրների լուծման նկատմամբ մոտեցումների կատարելագործումը[5], իրագործվել է տեխնիկական իրադրության զարգացման գործում տեղ գտած փոփոխություններին և դրանց վերաբերյալ կանխատեսումներին համապատասխանությամբ: Որպես արդյունք՝ ձևավորվել է արդյունաբերական ձեռնարկությունների ներգրավմամբ վերականգնման խնդիրների կատարման հետևյալ հաջորդականությունը: Նորոգման տեսակը (ԸՆ, ՄՆ, ՀՆ) որոշում է անմիջականորեն միավորումներում, զորամիավորումներում կամ զորամասերում գործող համապատասխան հանձնաժողովը: Ղեկավար փաստաթղթերով սահմանված կարգով կազմվում են անհրաժեշտ փաստաթղթեր ՀՆ պահանջող տեխնիկայի և դրա հիմնական ագրեգատների վերականգնման համար և ուղարկվում ԶՈՒ-ի ԳՇ համապատասխան վարչություն, որտեղ նորոգումային ֆոնդը բաշխվում է ըստ ՍՌՏ նորոգում կատարող ձեռնարկությունների: Նորոգման ենթակա տեխնիկան նորոգումավերականգնողական գումարտակի տարահանման դասակի կամ Կենտրոնի տարահանման և փոխադրման առանձին բազայի (ՏՓԱԲ) ուժերով (եթե անհնար է ինքնընթաց կերպով այն տեղափոխել) տարահանվում է համապատասխան ձեռնարկություն: Նեղ մասնագետների մասնակցություն պահանջող ավելի փոքր ծավալների աշխատանքների անհրաժեշտության դեպքում ՍՌՏ վերականգնումը կատարվում է տեղաբաշխման վայրերում՝ արտագնա բրիգադների ներգրավմամբ:

Պատերազմական պայմաններում արդյունաբերական ձեռնարկություններում նորոգման ենթակա տեխնիկայի տարահանումը կատարվում է շարքից դուրս եկած ՍՌՏ փոխանցման համար նախանշանակված շրջաններից համապատասխան ուղղությամբ գործող տարահանումային խմբերի ուժերով[6]:

Վերջին շրջանի մի շարք ժամանակակից պատերազմների ու զինված հակամարտությունների փորձն ապացուցում է նկարագրված մոտեցումների կենսունակությունը: Դրա հետ մեկտեղ ընդդիմամարտող կողմերի տարածքի ամբողջ խորությամբ մեծ մասամբ գերճշգրիտ զենքի կիրառմամբ հասցվող զանգվածեղ հարվածների հնարավորությունը անհրաժեշտ դարձրեց այդ մոտեցումների կատարելագործումը:

ՀՀ ԶՈՒ-ի նկատմամբ միջազգային փորձի մեր վերլուծության կիրարկումը հնարավորություն է տալիս հանգելու որոշ եզրակացությունների և առաջարկությունների: Հարկ է հաշվի առնել, որ ՀՀ ԶՈՒ-ն իրականացնում է մարտական հերթապահություն արտաքին սահմանների մեծ մասի երկայնքով, որի մոտավորապես չորս հինգերորդը դժվարանցանելի լեռնային տեղանք է, որտեղ զորքերի դիրքերը գտնվում են ծովի մակերևույթից 2000 – 3500 մետր բարձրություններում: Նման պայմաններում մարտական հերթապահության համար ենթադրվում է ՍՌՏ (հատկապես՝ թրթուրավոր տեխնիկայի և մեծ անցունակությամբ ավտոմեքենաների) ակտիվ օգտագործում:

Բարդ ֆիզիկաաշխարհագրական և կլիմայական պայմաններում ՍՌՏ ինտենսիվ շահագործումը հանգեցնում է արագ մաշվածության, ինչի հետևանքով տեխնիկական (շահագործական) պատճառներով տեխնիկան ավելի արագ է շարքից դուրս գալիս: Բացի այդ, ավելանում է նաև դրա նորոգման համար անհրաժեշտ ռազմատեխնիկական գույքի (ՌՏԳ) սպառումը: Հետևաբար սարքին ՍՌՏ-ի գծով զորքերի (ուժերի) մարտական պատրաստության և մարտունակության պահպանումը նորոգումավերականգնողական մարմինների՝ համապատասխան մակարդակով մշտական լարված աշխատանքի պարագայում պայմանավորված են վերականգնման ցուցանիշներին ներկայացվող շատ ավելի խիստ քանակական ու որակական պահանջներով:

Հայտնի է, որ ռազմական գործողությունների մեծ ինտենսիվությունը կարող է սահմանափակ ժամկետներում շարքից դուրս բերել մեծ թվով ՍՌՏ: Եթե հակառակորդը լայնորեն կիրառի խոցման գերճշգրիտ միջոցներ, ապա 10-15 %-ով կաճի այն նմուշների անդառնալի կորուստների (ԱԿ) թիվը, որոնց համար պահանջվում են գործարանային պայմաններում հիմնական, ինչպես նաև այլ տեսակների նորոգումներ՝ ընթացիկ նորոգման կարիք ունեցողների թվի նվազեցման հաշվին:

Անգամ եթե նորոգումային ֆոնդից արդյունաբերական ձեռնարկությունների ապահովման աստիճանը հնարավորություն տա լիովին օգտագործելու նորոգման դրանց կարողությունները, անսարք նմուշների տարահանման համար կպահանջվի զգալի ժամանակ: Տվյալ իրավիճակը բացատրվում է Կենտրոնի տարահանման և փոխադրման առանձին բազայի մեծ ծանրաբեռնվածությամբ, քանի որ այն, բացի անսարք տեխնիկայի տարահանման խնդիրների լուծումից, պետք է ապահովի վերադաս հրամանատարության որոշումներով զորամիավորումների ՍՌՏ փոխադրումը, սակայն չունի լրացուցիչ ուժեր՝ արդյունաբերական ձեռնարկություններ տեխնիկայի տարահանման ծավալները մեծացնելու համար: Միևնույն ժամանակ, ձեռնարկությունների մի մասը, որը պատասխանատու է կոնկրետ տեսակների սպառազինության և տեխնիկայի մարտունակության վերականգնման համար, գտնվում է մարտական գործողությունների վարման գոտուց որոշակի հեռավորության վրա, ինչի հետևանքով անսարք ՍՌՏ փոխանցման շրջաններից տարահանումը սովորաբար կազմում է 300 – 450 կմ:

Իրավիճակը բարդանում է նաև այն պատճառով, որ շարքից դուրս եկած ժամանակակից ՍՌՏ նմուշների մի մասի վերականգնումը բարձր տեխնոլոգիականության նկատառումով պահանջում է նեղ մասնագետների ներգրավում և համապատասխան նյութատեխնիկական բազա, ինչը արտագնա նորոգումային բրիգադները չեն կարողանա հաջողությամբ հաղթահարել:

Խաղաղ և պատերազմական ժամանակ ՍՌՏ վերականգնման համար ներգրավվող արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում տեղակայված են խոշոր բնակավայրերում կամ դրանց հարակից տարածքում: Ձեռնարկությունների մեծ մասն ունի նեղ մասնագիտական ուղղվածություն, ինչը սահմանափակում է տարբեր տեսակի ՍՌՏ նորոգման հնարավորությունները: Մյուս կողմից՝ ձեռնարկությունները խաղաղ ժամանակ էլ գործում

են մեծ ծանրաբեռնվածությամբ, ինչի հետևանքով ավելանում է ՍՌՏ տարահանված նմուշների պարապուրդի ժամանակը՝ պայմանավորված իրենց «հերթի» սպասմամբ: Բնականաբար, շատ ձեռնարկություններ զբաղվում են նաև ԶՈՒ-ի կազմի մեջ չմտնող այլ պետական և մասնավոր հիմնարկների կարիքների բավարարմամբ:

Վերը նշվածի հաշվառմամբ կարծում ենք, որ նպատակահարմար է ավելացնել նորոգումային ձեռնարկությունների թիվը՝ ի հաշիվ խոշոր քաղաքներում դրանց մասնաճյուղերի բացման, ինչպես նաև պետության մասնակցությամբ նոր ձեռնարկությունների ստեղծման: Տվյալ մոտեցումը հնարավորություն կտա մեծացնելու արդյունաբերական ձեռնարկությունների՝ ՍՌՏ նորոգելու արտադրական ներուժը, ինչպես նաև խնայելու անսարք նմուշների տարահանման և նորոգման համար պահանջվող ժամանակը:

Նորոգման լրացուցիչ հզորությունների ստեղծումը մեր կարծիքով անհրաժեշտ է ոչ միայն հիմնական նորոգման ծավալով ՍՌՏ վերականգնման, այլև հիմնական ագրեգատների ու հանգույցների նորոգման համար, ինչը հատկապես կարևոր է ՍՌՏ ժամանակակից բարձրտեխնոլոգիական նմուշների համար:

Մեր կարծիքով հույժ կարևոր է նաև արդյունաբերական ձեռնարկությունների ապահովվածությունը ռազմատեխնիկական գույքով: Արդյունաբերական ձեռնարկություններում հիմնական տեսակների սպառազինության, զրահատանկային և ավտոմոբիլային տեխնիկայի նորոգման համար անհրաժեշտ գույքի պաշարները կուտակվել են Կառավարության ղեկավար փաստաթղթերի և որոշումների պահանջներին համապատասխան: Սակայն, կարծում ենք, որ մարտական գործողությունների մեծ ինտենսիվությունը, զինված պայքարի վարման նոր եղանակների կիրառումը, հիմնական նորոգում պահանջող ՍՌՏ թվաքանակի կտրուկ մեծացումը կհանգեցնեն ձեռնարկությունների կուտակած որոշակի անվանացանկով նյութական միջոցների պաշարների արագ սպառման: Մասնավորապես՝ սահմանափակ հզորությամբ լիցքով գերճշգրիտ զինամթերքի կիրառման դեպքում խոցիչ ազդեցության են ենթարկվում հիմնականում զրահատեխնիկայի թույլ պաշտպանված մոտորաշարժիչային և ավտոմոբիլային տեխնիկայի շարժիչային հատվածամասերը: Նույնանուն հանգույցների և ագրեգատների վերականգնման համար համանուն անվանացանկի պահեստամասերի մեծ ծախսը, ի վերջո, կարող է հանգեցնել դրանց պակասուրդի:

Մեր կարծիքով՝ վերականգնման տեսանկյունից տվյալ պրոբլեմի լուծումը հնարավոր է հետևյալ համալիր միջոցառումների իրագործման միջոցով.

1. նախապատրաստել համապատասխան օրենսդրական բազա, որը արդյունաբերական ձեռնարկություններին իրավունք կտա օգտագործելու շարքից դուրս եկած և վերականգնման ոչ ենթակա (այն է՝ անդառնալի կորուստների) ՍՌՏ-ից հանված պիտանի պահեստամասերը: Դա հնարավորություն կտա ՍՌՏ նորոգումը կատարելու դիմազուրկ մեթոդով*, ինչը կհանգեցնի վերականգնման համար պահանջվող ժամանակի նվազեցմանը:

2. Արդյունաբերական ձեռնարկություններում նյութական միջոցների ավելի մեծ պաշարների ստեղծում՝ պահեստամասերի կոնկրետ անվանացանկի պահանջմունքների հաշվառմամբ:

3. ԶՈՒ-ի կենտրոնական պահեստներից արդյունաբերական ձեռնարկությունները պահեստամասերով ապահովելու դրական փորձի հաշվառմամբ (այդ թվում՝ Հայրենական մեծ պատերազմի) որոշակի ծավալով նյութական միջոցներ տարաբաշխված եղանակով պահել համապատասխան արդյունաբերական ձեռնարկություններին հնարավորինս մոտ կամ դրանց տարածքում: Տվյալ միջոցառումը արդյունաբերական ձեռնարկություններին հնարավորություն կտա ՍՌՏ վերականգնման համար օգտագործելու անհրաժեշտ ռազմատեխնիկական գույքը (ԶՈՒ-ի ներկայացուցիչների հսկողությամբ) կամ անհրաժեշտության դեպքում այն տրամադրելու զորքերին:

Անսարք ՍՌՏ վերականգնման համար անհրաժեշտ ՌՏԳ պաշարներով արդյունաբերական ձեռնարկությունների ապահովվածությունը մեծացնելու նկատմամբ այս նոր մոտեցման իրացումը ենթադրում է այնպիսի ենթաօրենսդրական ակտերի մեջ փոփոխությունների կատարում, որոնք կարգավորում են պետության պաշտպանության ոլորտում արդյունաբերական ձեռնարկությունների գործունեությունը և դրանց ավելի սերտ համագործակցությունը պաշտպանության նախարարության հետ:

---

* Նորոգման մեթոդ, որի դեպքում չի պահպանվում վերականգնվող բաղադրյալ մասերի պատկանելությունը արտադրանքի որոշակի նմուշի: Այս դեպքում ամբողջ մեքենայի կամ դրա առանձին միավորների հավաքումը կատարվում է այն նորոգված մասերից, որոնք վաղ հանվել էին նույնատիպ անսարք մեքենայից կամ համապատասխան պահեստամասերից:

Թարգմանությունը՝ *Նարինե Մկրտչյանի*

## ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА

# ИСПОЛЬЗОВАНИЕ ВОЗМОЖНОСТЕЙ ПРЕДПРИЯТИЙ ПРОМЫШЛЕННОСТИ ПО ВОССТАНОВЛЕНИЮ ВООРУЖЕНИЯ И ВОЕННОЙ ТЕХНИКИ В ХОДЕ ВЕДЕНИЯ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ

*Д. В. СЕРОБЯН, полковник, слушатель ВА ГШ ВС РФ*

Современные военные конфликты характеризуются высокой степенью применения высокоточного оружия, что является причиной повышенного выхода из строя вооружения и военной техники (ВВТ)[1]. Не секрет, что возможности вооруженных сил по восстановлению вышедших из строя в ходе военных действий образцов ВВТ не позволяют решать ремонтные задачи (в особенности по среднему и капитальному ремонту) в полном объеме. Кроме того, войска (силы)

оснащаются новейшими видами ВВТ со значительно повышенными требованиями к их боевой готовности и обеспечению надежной работы в ходе военных действий. Именно поэтому для восстановления вышедших из строя образцов ВВТ привлекаются предприятия промышленности, что позволяет охватить значительно больший объем ремонтного фонда. Между тем эффективное осуществление ремонта позволяет поддерживать на требуемом уровне количество и качество ВВТ, что является основным показателем технической оснащенности вооруженных сил государства.

Восстановление вооружения и военной техники – это комплекс организационно-технических мероприятий (работ), направленных на приведение вышедших из строя образцов ВВТ в готовность к использованию с возвращением их в строй (см. рис.1)[2]. По функциональному признаку оно включает: техническую разведку, эвакуацию, ремонт, а также приведение отремонтированных (эвакуированных) образцов в готовность к использованию и передачу (возвращение в строй или на хранение) их в воинские части (подразделения).




Рис. 1. Структура задачи восстановления ВВТ
Նկ. 1. ՍՌՏ վերականգնման խնդրի կառուցվածքը

Восстановление ВВТ является основным, а иногда и единственным источником восполнения их потерь при подготовке и ведении боевых действий (перегруппировке). Успешное решение задач по восстановлению ВВТ достигается: постоянным знанием обстановки и выполняемых задач; созданием группировки сил и средств технического обеспечения, отвечающей замыслу и характеру боевых действий (перегруппировке); сосредоточением основных усилий ремонтно-эвакуационных сил и средств на направлении главного удара (сосредоточения основных усилий) и на других важнейших направлениях (в районах); своевременным сбором (добыванием) сведений о количестве, местонахождении и состоянии вышедших из строя ВВТ; осуществлением маневра ремонтно-эвакуационными силами и средствами путем быстрого их выдвижения в районы (места) наибольшего выхода ВВТ из строя; принятием действенных мер к выводу ВВТ, подлежащих восстановлению, из районов, находящихся под угрозой захвата противником; всесторонней подготовкой ремонтно-восстановительных сил и эффективным использованием их возможностей; своевременной передачей образцов ВВТ, не охваченных восстановительными работами в войсках, соответствующим

заводам и учреждениям; своевременным обеспечением ремонтных частей и формирований военно-техническим имуществом и другими материальными средствами, необходимыми для проведения работ; надежной защитой, охраной и обороной ремонтно-восстановительных органов (РВО), своевременным восстановлением их работоспособности при поражении противником; твердым и непрерывным управлением ремонтно-эвакуационными силами и средствами.

Качественные и количественные характеристики восстановления ВВТ как составной части одного из основных мероприятий строительства и развития Вооруженных Сил слагаются из множества условий и факторов, некоторые из которых способствуют повышению эффективности восстановления, другие, наоборот, снижают ее. В частности, в случае Вооруженных Сил Республики Армения в качестве одного из основных положительных факторов следует отметить существующие **подходы к восстановлению неисправных ВВТ**, сформировавшиеся в период становления и развития ВС РА. Они были унаследованы от советской «школы», являющейся на тот момент основополагающей для ВС всего постсоветского пространства, многих стран Восточной Европы, Африки и Азии. Значительный советский задел по этому направлению позволил успешно выполнять задачи восстановления во время боевых действий в период с 1991 по 1994 годы, что в условиях транспортной и экономической блокады Республики Армения, еще не полностью сформированных Вооруженных Сил, при фактическом отсутствии поставок техники стало одним из решающих факторов успешного исхода военных действий для армянской стороны.

Как показывает опыт, выработанные в Вооруженных Силах Республики Армения за последние десятилетия подходы к восстановлению неисправных ВВТ и сегодня позволяют поддерживать ее боевую готовность (готовность к применению по назначению) на установленном соответствующими руководящими документами уровне. Задачи по восстановлению техники, требующей текущего ремонта (ТР), в основном выполняются силами и средствами войскового звена, восстановление же техники, требующей сложного текущего и среднего ремонта (СР), – соответствующими частями и подразделениями[3]. Вышедшие из строя образцы ВВТ, требующие капитального ремонта (КР), а также часть ВВТ, нуждающегося в СР, и неохваченного РВО оперативно-тактического звена, восстанавливаются силами ремонтных баз Центра. Распределение ремонтных работ по различным уровням позволяет организовать параллельное протекание процессов восстановления, что способствует существенному повышению эффективности восстановления ВВТ. При расчленении потока ремонтного фонда предусматривается выполнение ремонтно-восстановительным органом каждого звена всего объема восстановительных

работ от начала до полного завершения, что совместно с использованием возможностей местной промышленной базы позволяет поддерживать показатели технической готовности вооружения и военной техники на уровне, определенном руководящими документами.

Поддержанию ВВТ в готовности к применению значительно способствует использование возможностей промышленной базы (в том числе и военно-промышленного комплекса) и взаимодействие с ремонтными предприятиями гражданского сектора, а также с официальными представителями компаний, выпускающих эксплуатируемые в ВС РА образцы ВВТ.

На основании изучения международного опыта по материалам специальной литературы можно вывести следующую схему выполнения работ по восстановлению ВВТ (см. рис. 2)[4]. В процессе развития ВС, с учетом возможности применения противником новых методов вооруженной борьбы, а также новых видов вооружения, техническое обеспечение Вооруженных Сил, в том числе и развитие подходов к решению задач восстановления ВВТ[5], осуществлялось адекватно изменениям и прогнозам развития технической обстановки. В результате




Рис. 2. Схема восстановления ВВТ с привлечением предприятий промышленности в мирное время

Նկ. 2. Խաղաղ ժամանակ արդյունաբերական ձեռնարկությունների ներգրավմամբ ՍՌՏ վերականգնման գծապատկեր

была сформирована следующая последовательность выполнения задач восстановления с привлечением предприятий промышленности. Вид ремонта (ТР, СР, КР) определяет соответствующая комиссия, действующая непосредственно в объединениях, соединениях или воинских частях. В установленном руководящими документами порядке составляется необходимая документация для восстановления техники и ее основных агрегатов, требующих КР, и направляется в соответствующее управление ГШ ВС, где производится распределение ремонтного фонда по предприятиям, осуществляющим ремонт ВВТ. Подлежащая ремонту техника эвакуируется на соответствующее предприятие силами взвода эвакуации ремонтно-восстановительного батальона либо отдельной базы эвакуации и перевозок (ОБЭП) Центра (при невозможности перемещения своим ходом). При необходимости проведения работ меньших объемов, требующих привлечения узких специалистов, восстановление ВВТ осуществляется на местах дислокации с помощью выездных бригад.

В условиях военного времени эвакуация техники, подлежащей ремонту на предприятиях промышленности, осуществляется из назначенных районов передачи вышедших из строя ВВТ эвакуационными группами, действующими на соответствующем направлении[6].

Опыт ряда современных войн и вооруженных конфликтов показал жизнеспособность вышеописанных подходов. Вместе с тем возможность нанесения массированных ударов преимущественно высокоточным оружием на всю глубину территории противоборствующих сторон вызвала необходимость усовершенствования данных подходов.

Наш анализ международного опыта в применении к ВС РА дает основание для следующих выводов и предложений. ВС РА, фактически, на протяженности более половины внешних границ осуществляют боевое дежурство. Примерно четыре пятых всей линии соприкосновения – труднопроходимая горная местность, где позиции войск располагаются на высоте от 2000 до 3500 метров над уровнем моря. Несение боевого дежурства в таких условиях предполагает активное использование ВВТ (особенно гусеничной техники и автомобилей с повышенной проходимостью). Вследствие интенсивной эксплуатации ВВТ в сложных физико-географических и климатических условиях происходит их повышенный износ, что приводит к значительному увеличению выхода техники из строя по техническим (эксплуатационным) причинам. Кроме того, повышается также расход военно-технического имущества (ВТИ), необходимого для ее ремонта. Следовательно, поддержание боеготовности и боеспособности войск (сил) по наличию исправных ВВТ в условиях постоянной напряженной работы ремонтно-восстановительных органов на соответствующем уровне

определяется повышенными требованиями к количественно-качественным показателям восстановления.

Как известно, с вышеизложенным, высокая интенсивность военных действий может стать причиной выхода из строя большого числа ВВТ в ограниченные сроки. Массированное использование противником высокоточных средств поражения приведет к увеличению доли безвозвратных потерь (БП), образцов, требующих проведения капитального ремонта (КР), а также других видов ремонта в заводских условиях на 10-15 % за счет уменьшения доли текущего ремонта (ТР).

Даже если степень обеспечения ремонтным фондом предприятий промышленности в целом позволит использовать их возможности по ремонту, для эвакуации неисправных образцов потребуется значительное время. Данная ситуация объясняется большой нагрузкой на отдельную базу эвакуации и перевозок Центра, которая, кроме решения задач по эвакуации неисправной техники, обеспечивает перевозку ВВТ соединений в соответствии с решениями вышестоящего командования, но не имеет дополнительных сил для увеличения объема эвакуации техники на предприятия промышленности. К тому же, часть предприятий, ответственных за восстановление боеспособности конкретных видов вооружения и техники, находятся на удалении от зоны ведения боевых действий, в связи с чем плечо эвакуации от районов передачи неисправных ВВТ обычно составляет от 300 до 450 километров.

Ситуация осложняется и по той причине, что восстановление части вышедших из строя современных образцов ВВТ ввиду высокой технологичности потребует привлечения узких специалистов и соответствующей материально-технической базы, с чем в полной мере не смогут справиться выездные ремонтные бригады.

Предприятия промышленности, привлекаемые для восстановления ВВТ в мирное и военное время, в основном расположены в крупных населенных пунктах или на сопредельной их территории. Бо́льшая их часть имеет узкоспециальную направленность, что ограничивает их возможности по ремонту ВВТ разных видов. С другой стороны, налицо высокая загруженность предприятий в мирное время, в результате чего увеличивается время простоя эвакуированных образцов ВВТ в ожидании своей «очереди». Естественно, многие предприятия заняты также обеспечением потребностей других государственных и частных учреждений, не входящих в состав ВС.

С учетом вышеизложенного, полагаем целесообразным увеличение числа ремонтных предприятий за счет открытия филиалов в крупных городах, а также создания новых с участием государства. Данный подход позволит увеличить производственные возможности предприятий промышленности по ремонту ВВТ, а также сэкономить

время, требуемое на эвакуацию и ремонт неисправных образцов.

Создание дополнительных мощностей по ремонту представляется необходимым не только для осуществления восстановления ВВТ в объеме капитального ремонта, но и для выполнения ремонта основных агрегатов и узлов, что особенно актуально применительно к современным высокотехнологичным образцам ВВТ.

Важной представляется также проблема обеспеченности предприятий промышленности военно-техническим имуществом. Запасы имущества, необходимого для ремонта основных видов вооружения, бронетанковой и автомобильной техники на предприятиях промышленности накоплены в соответствии с требованиями руководящих документов и постановлений Правительства. Однако высокая интенсивность боевых действий, применение новых способов ведения вооруженной борьбы, резкое увеличение ВВТ, требующих капитального ремонта, по нашему мнению, могут привести к быстрому расходу накопленных предприятиями запасов материальных средств определенной номенклатуры. В частности, при применении противником высокоточных боеприпасов ограниченной мощности заряда их поражающее воздействие сказывается в основном на слабо защищенном моторно-двигательном отсеке бронетехники и моторном отсеке автомобильной техники. Большой расход запасных частей одноименной номенклатуры для восстановления одноименных узлов и агрегатов в конечном счете может привести к их дефициту.

Решение данной проблемы с точки зрения восстановления, на наш взгляд, возможно путем проведения комплекса следующих мероприятий.

1. Подготовка соответствующей законодательной базы для использования предприятиями промышленности пригодных запасных частей с вышедшей из строя ВВТ, не подлежащей восстановлению (БП). Это позволит осуществлять ремонт ВВТ обезличенным методом, что приведет к уменьшению времени, необходимого на восстановление.

2. Создание повышенных запасов материальных средств предприятиями промышленности с учетом потребностей в конкретной номенклатуре запасных частей.

3. С учетом положительного опыта обеспечения предприятий промышленности запасными частями с центральных складов ВС (в том числе и опыт Великой Отечественной войны) целесообразно рассредоточенное хранение определенного объема материальных средств вблизи соответствующих предприятий промышленности или на их территории. Данная мера позволит использовать необходимое для восстановления ВВТ военно-техническое имущество предприятиями промышленности (под контролем представителей ВС) или при необходимости распределять войскам.

Реализация нового подхода к повышению обеспеченности предприятий промышленности запасами ВТИ, необходимыми для восстановления неисправных ВВТ предполагает внесение изменений в подзаконные акты, регулирующие деятельность предприятий промышленности в области обороны государства и более тесное их взаимодействие с министерством обороны.

---

[1] *Б. Х. Давлетов.* Особенности организации ремонта военной техники в современных условиях. «Бюллетень науки и практики», 2022, т. 8, № 4 (https://cyberleninka.ru/article/n/osobennosti-organizatsii-remonta-voennoy-tehniki-v-sovremennyh-usloviyah).

[2] Там же.

[3] *Յու. Խաչատուրով, Պ. Ա. Շաղյան, Կ. Ա. Ղաղայան,* Ռազմական արդյունաբերությունը և նրա վերակազմավորման խնդիրները: «ՀԲ», 2008, hմ. 1:

[4] *Б. Х. Давлетов.* Ук. соч.

[5] Там же; «Основные положения по организации технического обеспечения (Организация восстановления вооружения и военной техники)». Учебно-методическое пособие, электронное издание. Минск, 2010 (https://rep.bntu.by/bitstream/handle/data/1952/Osnovnye_polozheniya_po_organizacii.pdf?sequence=10&isAllowed=y); “Maintenance Operations” (ATP 4-33). Headquarters Department of the Army. Washington, DC, July 2019 (https://armypubs.army.mil/epubs/DR_pubs/DR_a/pdf/web/ARN19571_ATP%204-33%20C1%20FINAL%20WEB.pdf); *I. Virca, V. Dascălu, C. Grigoraş.* Research on Improving the Maintenance Activities for Military Vehicles. International Conference Knowledge-Based Organization, 2015, Vol. XXI, N 3 (https://www.researchgate.net / publication / 284813215_Research_On_Improving_The_Maintenance_ Activities_For_ Military_Vehicles).

[6] *Д. Е. Проневич.* Техническое обеспечение боевых действий войск в локальных войнах и военных конфликтах (https://core.ac.uk/download/532404072.pdf).

## ИСПОЛЬЗОВАННАЯ ЛИТЕРАТУРА
## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Պաշտպանության մասին» hմ. ՀՕ-196-Ն օրենքը (https://www.arlis.am/documentview.aspx?docid=117631):
2. «Военное строительство и строительство ВС государства». Учебник. М., 2020.
3. *П. А. Дульнев.* Основные направления развития тактики сухопутных войск по опыту вооруженного конфликта в Нагорном Карабахе. «Военная мысль», 2021, № 11.
4. «ОАО «Чаренцаванский станкостроительный завод»». «ВПК Армении», 24.04.2013 (https://vpk-armenii.livejournal.com/3852.html).
5. «Подготовка и ведение боевых действий в локальных войнах и вооруженных конфликтах: учебное пособие». М., 2020.
6. «Техническое обеспечение группировки войск (сил) в операциях». Учебное пособие. М., 2020.

**ARMAMENTS AND MILITARY EQUIPMENT**

# USING THE CAPABILITIES OF INDUSTRIAL ENTERPRISES TO RESTORE ARMAMENTS AND MILITARY EQUIPMENT IN THE COURSE OF CONDUCTING MILITARY OPERATIONS

*D. V. SEROBYAN, Colonel, Attendee, Military Academy, General Staff, Armed Forces, RF*

SUMMARY

One of the distinguishing features of modern military conflicts is the increased failure of armaments and military equipment (AME) due to the mass use of the high-precision weapons and UAVs. As a rule, the capabilities of the military unit to restore samples of military equipment that collapsed during military actions do not make room for solving repair tasks (especially for medium and major repairs) at the required scale in a relatively short period of time. Moreover, in this regard, it is best to turn to international experience of the restoration of military equipment. It can be noted that in the RA Armed Forces, the principles of the organization of the restoration of military equipment have been developed on the basis Soviet experience, which proves their effectiveness and viability during combat operations. Meanwhile, the industrial enterprises have been assigned a major role in replenishing the losses of military equipment, which implies that it is necessary to use their potential capabilities in order to solve the tasks of maintaining the combat effectiveness of the Armed Forces with regard to the military equipment. With a view on the experience of a number of modern wars and armed conflicts, we can identify some issues of concern regarding the restoration of military equipment, referring to both the evacuation of broken equipment samples to industrial enterprises, and the implementation of their repair. Withal, the problem of providing these enterprises with military-technical equipment necessary for the timely restoration of the combat capability of broken military equipment is of particular importance. Based on the research conducted, proposals and recommendations have been developed on the possible solution of existing issues of concern regarding the creation of additional repair facilities and their provision with the necessary amount of military-technical equipment.

# ՄԻԿՐՈԱԼԻՔԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԵՏ ՇՓՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՎ ԾԵՐԱՑՄԱՆ ՏԵՄՊԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

*Գ. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ԵՊԲՀ ՌԲՖ բուժծառայության կազմակերպման և մարտավարության ամբիոնի պետ,*
*Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, պահեստազորի բ/ծ գնդապետ, բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊԲՀ ՌԲԿԳ կենտրոնի տնօրեն, Լ. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ, բ.գ.թ., ԵՊԲՀ ՌԲՖ աղետների բժշկության և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի ավագ դասախոս, Ա. Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, բ.գ.դ, պրոֆեսոր, ԵՊԲՀ հանրային առողջության և առողջապահության կազմակերպման ամբիոնի վարիչ*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն թեմային առնչվող գրականության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայիս ժամանակաշրջանում աշխատող բնակչության առողջության և մասնագիտական երկարակեցության պահպանման խնդիրը ծեռք է բերել կարևոր նշանակություն: Դա պայմանավորված է տվյալ թվակազմի ամենօրյա գործունեությամբ, որին բնորոշ են հոգեհուզական լարվածությունը, կոնկրետ ժամանակահատվածում երկարատև մասնագիտական մեկուսացումը, հոգեբանական խնդիրների առանձնահատկությունները, ոչ նորմավորված աշխատանքային պայմանները, առաջադրված խնդիրների կարևորությունն ու բարդությունը, որոշումներ կայացնելու մեծ պատասխանատվությունը, ժամանակի սղությունը, կրիտիկական իրավիճակներում ռեժիմասահմանափակությունը, բազմաթիվ ստրեսային գործոնների միաժամանակյա ազդեցությունը, ինչը հաճախ հանգեցնում է մարդու ֆունկցիոնալ ռեսուրսների սպառմանը, մարմնի վաղաժամ կենսաբանական ծերացմանը, հոգեկան և մարմնական (սոմատիկ) առողջության խանգարմանը և մարդկանց «մասնագիտական այրմանը»[1]:

Մյուս կողմից՝ համարվում է, որ ծերացումը բարդ կենսընթաց է, որը բնութագրում է օնտոգենեզի ընթացքում մարդու օրգանիզմի փոփոխությունները գենետիկական, մոլեկուլային, բջջային և օրգանների մակարդակներում: Ընդհանուր առմամբ, կենսաբանության մեջ ծերացումն արձանագրող չափանիշներից մեկը կենսաբանական տարիքի հասկացությունն է: Գիտնականների մեծ մասը, մի կողմից, ընդունում է, որ «կենսաբանական տարիք»,

---

* Հոդվածը նախնական տարբերակով ստացվել է 02.10.2023: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 10.11.2023:

[1] Տես «Биопсихологический возраст профессионалов». Коллективная монография. Под ред. Т. Н. Березиной. М., 2019; *K. E. Rentscher, J. E. Carroll, R. L. Repetti, S. W. Cole, B. M. Reynolds, T. F. Robles.* Chronic stress exposure and daily stress appraisals relate to biological aging marker p16[INK4a]. “Psychoneuroendocrinology”, April 2019, Vol. 102, PP. 139‒148:

կամ «զարգացման տարիք», հասկացությունը նշանակում է օրգանիզմի ձևաբանական (մորֆոլոգիական), ֆիզիոլոգիական զարգացման աստիճան և պահուստային ներուժ, իսկ մյուս կողմից՝ որ գոյություն ունեցող օրացուցային (անձնագրային, ժամանակագրական) տարիքը կարող է տարբերվել կենսաբանական տարիքից: Ընդ որում, դրանց միջև եղած անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս մասնագիտական զարգացման տարբեր փուլերում գնահատելու մարդու ծերացման ինտենսիվությունը և ֆունկցիոնալ կարողությունները, նրա հոգեֆիզիկական առողջության վիճակը և աշխատունակությունը[2]:

Ընդունված է համարել, որ հենց կենսաբանական տարիքն է մի շարք քրոնիկական հիվանդությունների զարգացման հույժ կարևոր ռիսկային գործոններից մեկը՝ կյանքի համար անբարենպաստ կանխատեսմամբ և մահվան հավանականությամբ[3]: Ընդ որում, թեև այն որոշվում է մարմնի նյութափոխանակության, կառուցվածքային, ֆունկցիոնալ, կարգավորիչ հատկանիշների և հարմարվողական կարողությունների համադրությամբ, սակայն կախված է նաև շրջակա միջավայրի պայմաններից ու մարդու ապրելակերպից: Որպես օրինակ նշենք մի շարք մասնագիտությունների տեր անձանց (իրավապահ մարմինների ծառայողներ, զինծառայողներ, մեխանիզատորներ, հանքափորներ), ինչպես նաև բևեռային կամ անապատային գոտում նոր վերաբնակվածների, մոլի ծխողների, հարբեցողների, զուտ նստակյաց կյանք վարող և այլ անձանց[4]:

Հայտնի է, որ գիտատեխնիկական առաջընթացն զգալի ազդեցություն է գործում բնակչության, ներառյալ՝ ՀՀ աշխատող բնակչությունը, կառուցված-

[2] Տես *Т. Н. Березина, Е. А. Чумакова.* Биологический возраст как предиктор успешности пенсионной реформы в России. «Человек в современном мире: идентичность и межкультурная коммуникация». Материалы международной научной конференции. Дюссельдорф, Германия, 2019, сс. 537–542; *А. В. Котенева.* Смысложизненные ориентации и биопсихологический возраст сотрудников уголовно-исполнительной системы. «Психология и право», 2020, т. 10, № 3:

[3] Տես *И. В. Самородская, М. А. Старинская.* Биологический возраст и скорость старения как фактор развития неинфекционных заболеваний и смертности. «Профилактическая медицина», 2016, № 5:

[4] Տես *Н. В. Коробко, Л. П. Семенова, А. А. Калаева, А. В. Терехина.* Биопсихологический возраст профессионалов профессий особого риска. «Биопсихологический возраст профессионалов». Коллективная монография. М., 2019, сс. 66–79; *М. П. Буш, С. Г. Абрамович.* Определение биологического возраста как способ оценки стресс-адаптивных реакций сотрудников правоохранительных органов. «Вестник Восточно-Сибирского института МВД России», 2010, № 2(53); *Н. А. Мешков.* Биологический возраст как показатель адаптационных возможностей организма военнослужащих в условиях боевых действий. «Инвалиды и общество», 2016, № 1(19); *Л. Б. Ким, А. Н. Путятина, П. М. Кожин.* Биологический возраст как показатель состояния здоровья рабочих горнорудной промышленности в арктической зоне Российской Федерации. Новосибирск: ФГБУ «НЦКЭМ» СО РАМН, 2014 (www.ras.ru/ FStorage/Download.aspx?id=302e4858-77aa-4de7-ab06-c2599966c174):

քի վրա, ինչի հետևանքով արձանագրվում է մտավոր ծանրաբեռնվածությամբ անձանց թվի կտրուկ աճում[5]: Հաստատված է, որ մտավոր աշխատանքը բնութագրվում է մեծ ծավալներով տեղեկույթի ընդունմամբ և մշակմամբ, պահանջում է ուշադրության մշտական լարվածություն:

Շարունակելով մեր համալիր հետազոտությունները միկրոալիքային ճառագայթման հետ մասնագիտական շփում ունեցող՝ ԶՈւ-ի ՀՕՊ-ի զինծառայողների շրջանում՝ ուսումնասիրել ենք անձնագրային և կենսաբանական տարիքների փոխառնչությունը՝ կապված աշխատանքային գործունեության ռիսկերի հետ: Քանի որ անձնագրային տարիքը (ԱՏ) ոչ միշտ կարող է լինել մասնագիտական վերակողմնորոշման կամ աշխատանքային գործունեության դադարեցման համար հիմք, առողջական վիճակի գնահատման համար էական դեր են հատկացվում այնպիսի ինդիկատորների, ինչպիսիք են կենսաբանական տարիքը և ծերացման տեմպը:

Գիտական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիտվում է միկրոալիքային ճառագայթման հետ մասնագիտական շփում ունեցող անձանց թվի հարաճունություն[6]:

Վերը նշվածի համատեքստում միկրոալիքային ճառագայթման ազդեցությունը բավական բարդ միջոլորտային պրոբլեմ է, որը բուժաշխատողներից պահանջում է ժամանակակից գիտելիքներ՝ այդ կարգախմբի անձանց շրջանում հնարավոր ախտահարումների առաջնային և երկրորդային կանխարգելումը կազմակերպելու, իսկ գերբարձր հաճախականությամբ էլեկտրամագնիսական դաշտի ներգործությունից հիվանդագին վիճակ զարգանալու պարագայում՝ համապատասխան բուժօգնություն ցուցաբերելու համար[7]:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մեր հետազոտության նպատակն էր պարզել մասնագիտական գործունեության ընթացքում ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքային ճառագայթման քրոնիկական ազդեցությանը ենթարկվող ԶՈւ-ի ՀՕՊ-ի զորքերի զինծառայողների կենսաբանական տարիքն ու ծերացման տեմպը:

## ՆՅՈՒԹԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հիմնական խումբը կազմել են ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքային ճառագայթման հետ 0-20 տարի տևողությամբ մասնագիտական

---

5 Տես *М. С. Бархударян, Г. Т. Саркисян, В. Ю. Коган.* Биологический возраст, темп старения и качество жизни работников некоторых компьютерных фирм г. Еревана. «Медицинская наука Армении НАН РА», 2013, т. LIII, № 1:

6 Տես *А. К. Намазов, О. Е. Пискун, К. А. Намазов.* Влияние внешней среды на организм человека. «Здоровье – основа человеческого потенциала: проблемы и пути их решения», 2020, т. 15, № 2:

7 Տես *А. С. Рудой, Е. В. Титкова, И. В. Загашвили.* Современные подходы к диагностике, терапии, профилактике поражений электромагнитного излучения сверхвысокочастотного диапазона. «Военная медицина», 2017, № 2:

շփում ունեցող արական սեռի 20-50 տարեկան՝ ՀՕՊ-ի զորքերի 100 զինծառայող: Ձևավորվել է 5 տարիքային խումբ՝ (մինչև 25 տարեկան, 26-ից 30, 31-ից 35, 36-ից 40 և 41-ից բարձր), ըստ մասնագիտական ստաժի՝ 4 խումբ (մինչև 5 տարի, 6-ից 10, 11-ից 15 և 16 ու ավելի):

Բոլոր հետազոտվածների համար հաշվարկվել են անձնագրային տարիքը (ԱՏ), կենսաբանական տարիքը (ԿՏ)[8], պատշաճ կենսաբանական տարիքը (ՊԿՏ)[9] և ծերացման տեմպը (ԾՏ): Ստացված տվյալների համեմատության, ինչպես նաև դրանց արժանահավատության գնահատման համար կիրառվել են վիճակագրական վերլուծության ընդունված մեթոդներ[10]:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աղյուսակ 1-ում բերվում են տարբեր տարիքային խմբերում ըստ տարիքային կարգախմբերի անձնագրային, կենսաբանական և պատշաճ կենսաբանական տարիքների միջին արժեքները (միջին տարիքները՝ ՄՏ) և ստանդարտ սխալները (ՍՍ), ինչպես նաև այդ արժեքների միջև եղած տարբերությունները:

*Աղյուսակ 1*

Միկրոալիքների հետ մասնագիտական շփում ունեցող անձանց տարբեր տարիքային խմբերում միջին տարիքի (ՄՏ) և ստանդարտ սխալի (ՍՍ) արժեքներն ըստ տարիքային կարգախմբերի

| Տարիքային (տարի) խմբեր | ԱՏ | | ԿՏ | | ՊԿՏ | | Տարբերություններ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՄՏ | ՍՍ | ՄՏ | ՍՍ | ՄՏ | ՍՍ | ԿՏ–ԱՏ | ՊԿՏ–ԱՏ |
| Մինչև 25 | 23,89 | 0,29 | 49,37 | 1,42 | 49,62 | 0,89 | 25,48 | 25,73 |
| 26–30 | 27,77 | 0,23 | 49,09 | 1,18 | 49,44 | 0,74 | 21,32 | 21,67 |
| 31–35 | 32,61 | 0,22 | 5,93 | 1,44 | 51,22 | 0,90 | 19,32 | 18,61 |
| 36–40 | 37,80 | 0,31 | 53,94 | 0,99 | 52,49 | 0,62 | 16,14 | 14,69 |
| 41 և բարձր | 44,60 | 1,50 | 58,40 | 2,03 | 55,28 | 1,27 | 13,8 | 10,68 |

[8] Տես *Л. Д, Маркина.* Определение биологического возраста человека методом В. П. Войтенко, учебное пособие для самостоятельной работы студентов-медиков и психологов. Владивосток, 2001:

[9] *Տես А. Н. Плакуев, А. В. Хромова, Л. В. Катышева, Д. С. Попов.* Биологический возраст у молодых людей, проживающих в условиях европейского севера. «Экология человека», 2006, № 11:

[10] Տես *С. Гланц.* Медико-биологическая статистика. М., 1998:

Գիտափորձով ու հաշվարկումներով ստացված սույն արդյունքները ցույց են տալիս, որ ծառայողական գործունեության սկզբնական փուլում հետազոտված թվակազմերի անձանց կենսաբանական տարիքն էապես գերազանցում է նրանց անձնագրային տարիքը (տարբերությունը կազմում է 25,48), սակայն հետագայում այդ տարբերությունն աստիճանաբար նվազում է՝ հասնելով 13,85-ի: Գրաֆիկորեն դա լավ նկարագրվում է գծային ֆունկցիայով (տես գծապատկեր 1):




Գծ. 1. Տարբեր տարիքային խմբերում ԿՏ և ԱՏ միջին արժեքների տարբերությունը, երբ դետերմինացիայի գործակիցը ($R^2$) հավասար է 0,99-ի

Պատշաճ կենսաբանական և կենսաբանական միջին տարիքների վերլուծությամբ պարզվել է, որ առանձնակի տարբերություններ չեն նկատվում: Նույն պատկերն է անձնագրային և պատշաճ կենսաբանական միջին տարիքների դեպքում:

Վերը շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ, մի կողմից, կենսաբանական և անձնագրային, մյուս կողմից՝ անձնագրային և պատշաճ կենսաբանական, ինչպես նաև կենսաբանական և պատշաճ կենսաբանական միջին տարիքների միջև տարբերությունները կարելի է դիտել որպես օրինաչափ երևույթ, ինչը, ամենայն հավանականությամբ, կարող է պայմանավորված լինել ոչ ջերմային ինտենսիվությամբ միկրոալիքների երկարատև ազդեցությամբ:

Աղյուսակ 2-ում տարբեր տարիքային խմբերում ըստ տարիքային կարգախմբերի բերված են ՄՏ և ՄՄ արժեքները՝ կախված մասնագիտական ստաժից:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին հինգ տարվա ընթացքում մասնագիտական գործունեությունն ուղեկցվում է անձնագրային տարիքի համեմատությամբ կենսաբանական տարիքի զգալի աճմամբ, իսկ հետագայում դիտվում են որոշակի կայունացում ու տվյալ տարբերության նվազման միտում:

*Աղյուսակ 2*

Միկրոալիքների հետ մասնագիտական շփում ունեցող անձանց տարբեր տարիքային կարգախմբերում ՄՏ և ՍՍ արժեքներն ըստ մասնագիտական ստաժի

| Մասնագիտական ստաժ (տարի) | ԱՏ | | ԿՏ | | ՊԿՏ | | Տարբերություններ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ՄՏ | ՍՍ | ՄՏ | ՍՍ | ՄՏ | ՍՍ | ԿՏ–ԱՏ | ՊԿՏ–ԱՏ |
| Մինչև 5 | 28,41 | 0,82 | 50,53 | 0,95 | 50,35 | 0,60 | 22,12 | 21,94 |
| 6-10 | 31,80 | 0,77 | 51,63 | 1,07 | 51,03 | 0,67 | 19,83 | 19,23 |
| 11-15 | 33,25 | 1,25 | 49,52 | 2,64 | 49,71 | 1,66 | 16,27 | 16,46 |
| 16 և ավելի | 40,40 | 2,87 | 54,32 | 2,86 | 52,72 | 1,79 | 13,92 | 12,32 |

Վերը բերված տվյալները բավական ցայտուն կերպով արտացոլված են գծ. 2-ում:




Գծ. 2. Տարբեր տարիքային խմբերում ՄՏ-ն ըստ մասնագիտական ստաժի

Հաշվի առնելով վերը նշվածը՝ հատկապես կարևորել ենք ծերացման տեմպի պատկերը (տես աղ. 3): Այս երևույթը նույնպես կարելի է նկարագրել գծային ֆունկցիայով, ընդսմին դետերմինացիայի գործակիցը ($R^2$) հավասար է 0,9-ի (տես գծապատկեր 3):




Գծ. 3. Ծերացման տեմպի պատկերը ըստ անձնագրային տարիքի

*Աղյուսակ 3*

Ծերացման տեմպն ըստ անձնագրային տարիքի և մասնագիտական ստաժի

| Ցուցանիշներ | ԿՏ | ՊԿՏ | Ծերացման տեմպ |
|---|---|---|---|
| | | | ԿՏ-ՊԿՏ |
| Ըստ անձնագրային տարիքի | | | |
| Մինչև 25 տարեկան | 49,37 | 49,62 | -0,25 |
| 26-30 տարեկան | 49,09 | 49,44 | -0,35 |
| 31-35 տարեկան | 51,93 | 51,22 | 0,71 |
| 36-40 տարեկան | 53,94 | 52,49 | 1,45 |
| 41 և բարձր | 58,40 | 55,28 | 3,12 |
| Ըստ մասնագիտական ստաժի | | | |
| Մինչև 5 տարի | 50,53 | 50,35 | 0,18 |
| 6-10 տարի | 51,63 | 51,03 | 0,6 |
| 11-15 տարի | 49,52 | 49,71 | – 0,19 |
| 16 տարի և ավելի | 54,32 | 52,72 | 1,6 |

Վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

- ըստ անձնագրային տարիքի՝ մինչև 25 և 26–30 տարեկան անձանց ծերացման տեմպն ունի բացասական դինամիկա, 31–35 տարեկանից հետո այն դառնում է դրական, սակայն մնում է նորմայի սահմաններում, ներառյալ՝ 41 և բարձր տարիքները,

- ըստ մասնագիտական ստաժի՝ արձանագրվում են ծերացման տեմպի տատանումներ, որոնք էական չեն:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերը նկարագրված երևույթների գիտականորեն հիմնավորված մեկնաբանությունը կարևոր է և կարող է հիմք դառնալ տվյալ թվակազմի դիսպանսեր մշտազննման սկզբունքների մշակման համար: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ մարդու ԿՏ, ինչպես ԾՏ ցուցանիշները կախված են բազմաթիվ գործոններից, որոնցից մի քանիսը կարող են բարելավել, իսկ մյուսները՝ վատթարացնել դրանք:

Ծերացումն արագացնող և կենսաբանական տարիքը մեծացնող գործոնների շրջանը շատ լայն է՝ ֆիզիկական անգործություն, ավելորդ քաշ և գիրություն, ծխում, ալկոհոլի չարաշահում, բարձր մակարդակի հոգեհուզական ստրես, անբարենպաստ աշխատանքային պայմաններ և այլն:

Մեր հետազոտած անձանց ԾՏ փոփոխությունները հաստատում են, որ օրգանիզմի ծերացումը դանդաղում է: Բացի այդ, հիմնական խմբում կենսաբանական տարիքը բնութագրող ցուցանիշները գրեթե հետևողականորեն բարձր են և դրանով իսկ վկայում են կենսագործունեության համակարգում որոշակի ֆունկցիոնալ, ինչպես նաև կառուցվածքային լարվածության առկայությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով ներկայացված նյութը՝ կարող ենք կատարել մի շարք եզրահանգումներ.

- տվյալ անձանց շրջանում նկատելի է այսպես կոչված «առողջության կուտակման» երևույթը,
- տվյալ թվակազմի ծերացման դանդաղումը, ըստ երևույթին, կարելի է դիտել որպես միկրոալիքային ներգործությանը նրանց օրգանիզմի պատասխան,
- ԿՏ և ԾՏ ցուցանիշների տատանումները վկայում են, որ տարիքային փոփոխությունների և երկարատև մասնագիտական աշխատանքի (ստաժի) պայմաններում տեղի է ունենում տվյալ անձանց օրգանիզմի որոշակի հարմարվողական վերակազմակերպում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ա. Ս. Գալստյան,* Մաթեմատիկական վիճակագրության մեթոդները հոգեբանական հետազոտություններում: Ուսումնական ձեռնարկ, 2015, 109 էջ:

**ВОЕННАЯ МЕДИЦИНА**

# К ВОПРОСУ БИОЛОГИЧЕСКОГО ВОЗРАСТА И ТЕМПА СТАРЕНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ, КОНТАКТИРУЮЩИХ С МИКРОВОЛНОВЫМ ИЗЛУЧЕНИЕМ

*Г. Р. ВАРДАНЯН, подполковник м/с, начальник кафедры организации и тактики медицинской службы военно-медицинского факультета ЕГМУ; С. Г. ГАЛСТЯН, полковник м/с запаса, доктор медицинских наук, профессор, директор ВМОН центра ЕГМУ; Л. С. ГАЛСТЯН, кандидат медицинских наук, старший преподаватель кафедры медицины чрезвычайных ситуаций и гражданской обороны военно-медицинского факультета ЕГМУ; А. Э. ТАДЕВОСЯН, доктор медицинских наук, профессор, заведующий кафедрой общественного здоровья и организации здравоохранения ЕГМУ*

РЕЗЮМЕ

XXI век характеризуется бурным развитием радиоэлектроники, что привело и приводит к закономерному увеличению числа людей, подвергающихся воздействию сверхвысокочастотного электромагнитного излучения в процессе производства, испытания, эксплуатации и ремонта генераторов подобного излучения. Они получили значительное распространение в военном деле, метеорологии, навигации, космических и других научных исследованиях. Проблема приобретает еще большую актуальность в связи с широким использованием в быту аппаратуры, работающей с применением неионизирующих излучений. Вследствие этого насущной становится проблема воздействия такого излучения на организм человека в зависимости от времени воздействия (стажа профессионального контакта с излучением).

В настоящее время установлено, что биологический возраст и темпы старения являются интегральными критериями для оценки состояния организма людей, работающих в условиях воздействия ряда физических и химических факторов, обусловленных наличием СВЧ-излучений, с целью разработки научно обоснованных профилактических мероприятий, направленных на сохранение здоровья и трудоспособности данной группы лиц.

В связи с этим были изучены темпы старения лиц (100 человек в возрасте 18-27 лет), имеющих профессиональный контакт с микроволнами нетермической интенсивности.

В ходе проведенного исследования были проанализированы изменения значения биологического возраста и темпа старения в зависимости от календарного возраста и профессионального стажа. Полученные данные позволили выявить следующие закономерности: замедление старения, что, по-видимому, можно рассматривать как ответную реакцию организма на микроволновое воздействие; вариа-

ции показателей биологического возраста и темпа старения с учетом профессионального стажа, что может свидетельствовать об определенном процессе адаптационной перестройки организма, происходящей на фоне возрастных изменений и длительной профессиональной деятельности; у данных лиц фиксируется так называемый тип «накопления здоровья».

На основе результатов исследования выработаны конкретные предложения по укреплению здоровья лиц, находящихся в профессиональном контакте с неионизирующим сверхвысокочастотным электромагнитным излучением нетермической интенсивности.

**MILITARY MEDICINE**

# ON THE ISSUE OF BIOLOGICAL AGE AND THE AGING RATE OF THE MILITARY PERSONNEL EXPOSED TO MICROWAVE RADIATION

*G. R. VARDANYAN, Lieutenant Colonel of Medical Service, Head, Chair, Organization of Medical Service, Military Medical Department, YSMU; S. G. GALSTYAN, Colonel of Medical Service (Ret.), Doctor of Medical Sciences, Professor, Director, Center for Military Medical Research, YSMU; L. S. GALSTYAN, PhD in Medicine, Senior Lecturer, Chair, Emergency Medicine and Military Toxicology, Military Medical Department, YSMU; A. E. Tadevosyan, Doctor of Medical Sciences, Professor, Head, Chair, Public Health and Healthcare Organization, YSMU*

SUMMARY

The 21$^{st}$ century is characterized by the rapid development of radio-electronics, which has brought on and continues to bring on a natural increase in the number of people exposed to ultrahigh-frequency electromagnetic radiation during the production, testing, operation and repair of generators of such radiation. They have become extensively exploited in military affairs, meteorology, navigation, space and other scientific research. The problem becomes even more urgent due to the widespread use of equipment operating with the use of non-ionizing radiation in everyday life. For that reason, the problem of the impact of such radiation on the human body becomes urgent, depending on the time of exposure (the length of professional exposure to radiation).

Currently, it has been established that the biological age and the aging rate are integral criteria for assessing the state of the human body working under the influence of a number of physical and chemical factors caused by microwave radiation. The study is targeted at developing scientifically substantiated preventive measures aimed at preserving the health and working capacity of this group of people.

In this regard, the authors studied the aging rates of individuals (100 persons aged 18-27), professionally exposed to microwaves of non-thermal intensity.

In the course of the study, changes in the value of biological age and the aging rate were analyzed depending on the calendar age and professional experience. The data obtained revealed the following patterns: slowing down of aging, which, apparently, could be considered as body response to microwave exposure; variations in the indicators of biological age and the aging rate, taking into account professional experience, which may indicate a certain process of adaptive restructuring of the body going on against the background of age-related changes and prolonged professional activity. In these individuals the so-called type of "health accumulation" is recorded.

Based on the results of the study, specific recommendations have been developed to improve the health of people who are professionally exposed to non-thermal non-ionizing ultra-high-frequency electromagnetic radiation.

# ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

*Դ. Ա. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ,*
*Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, կապիտան, Ն. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,*
*Թ. Դ. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, կապիտան, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,*
*Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

## ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազգակերտում – нациостроительство – nation-building
աշխարհակարգ – миропорядок – world order
արտագնա նորոգումային բրիգադ – выездная ремонтная бригада – maintenance contact team
արևելականություն – ориентализм – orientalism
արևմտականություն – оксидентализм – occidentalism
բազմակենտրոնություն – полицентричность – multicentricity
գործակցություն – сотрудничество – interaction, coordination
դիմազուրկ մեթոդ – обезличенный метод – repair without responsibility
երկբևեռ աշխարհ – биполярный мир – bipolar world
զավթողագործություն – экспансия – expansion
էներգակիր – энергоноситель – energy carrier
ընդդիմամարտող կողմ – противоборствующая сторона – warring party, opposing side
ինստիտուտ – институт – institute
ինքնընթաց տեղափոխում – перемещение своим ходом – movement under one’s own power
կապիտալի ներհոսք – приток капитала – capital inflow
կարգախումբ – категория – category
կարգավորիչ հատկանիշ – регулирующее свойство – regulatory property
կոլեկտիվ անվտանգություն – коллективная безопасность – collective security
հակադարձված ծայրամասային դոկտրին – обратная периферийная доктрина – reverse periphery doctrine
հաղորդակցային ուղի – коммуникации – line of communications, communication
հաղորդակցուղի – տես *հաղորդակցային ուղի*
հայեցակարգ – концепция – concept, conception
հաշվեկշիռ – баланс – balance
հասկացություն – понятие, категория – category
հաստատություն – 1. заведение, 2. институт – 1. institute, establishment, 2. institution
հավասարակշռություն – равновесие – balance
հատվածայնացում – фрагментация – fragmentation
նորոգումատարահանման ստորաբաժանում – ремонтно-эвакуационное подразделение – emergency recovery unit

շարժառիթավորում – мотивирование – motivating, reasoning
պետությենազուրկ ժողովուրդ – безгосударственный народ – stateless nation
սահմանակարգ – институт – institute, institution
սովորական զսպում – обычное сдерживание – conventional deterrence
տարածաշրջայնացում – регионализация – regionalization
տարածաշրջանայնություն – регионализм – regionalism
տարանցիկ պետություն – транзитное государство – transit state
տեղադիրք – местонахождение, дислокация, местоположение – position, location
տեղադրություն – местоположение, местонахождение – 1. site, 2. location
փոխազդեցություն – взаимодействие – 1. cooperation, 2. coordination, 3. interaction
փոխգործություն – взаимодействие – interaction, coordination

## ՌՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

баланс – հաշվեկշիռ
безгосударственный народ – պետությենազուրկ ժողովուրդ
биполярный мир – երկբևեռ աշխարհ
взаимодействие – 1. փոխազդեցություն, 2. փոխգործություն
выездная ремонтная бригада – արտագնա նորոգումային բրիգադ
дислокация – см. *местонахождение 1*
заведение – հաստատություն
институт – 1. ինստիտուտ, 2. հաստատություն, 3. սահմանակարգ
категория – 1. см. *понятие*, 2. կարգախումբ
коллективная безопасность – կոլեկտիվ անվտանգություն
коммуникации – հաղորդակցային ուղի, հաղորդակցուղի
концепция – հայեցակարգ
местонахождение – 1. տեղադիրք, 2. см. *местоположение 2*
местоположение – 1. см. *местонахождение 1,* 2. տեղադրություն
миропорядок – աշխարհակարգ
мотивирование – շարժառիթավորում
нациостроительство – ազգակերտում
обезличенный метод – դիմազուրկ մեթոդ
обратная периферийная доктрина – հակադարձված ծայրամասային դոկտրին
обычное сдерживание – սովորական զսպում
оксидентализм – արևմտականություն
ориентализм – արևելականություն
перемещение своим ходом – ինքնընթաց տեղափոխում
полицентричность – բազմակենտրոնություն
понятие – հասկացություն
приток капитала – կապիտալի ներհոսք
противоборствующая сторона – ընդդիմամարտող կողմ
равновесие – հավասարակշռություն
регионализация – տարածաշրջայնացում
регионализм – տարածաշրջանայնություն
регулирующее свойство – կարգավորիչ հատկանիշ
ремонтно-эвакуационное подраз-

деление – նորոգումնատարահանման ստորաբաժանում
сотрудничество – գործակցություն
транзитное государство – տարանցիկ պետություն
фрагментация – հատվածայնացում
экспансия – զավթողագործություն
энергоноситель – էներգակիր

## ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

balance – 1. հավասարակշռություն, 2. հաշվեկշիռ
bipolar world – երկբևեռ աշխարհ
capital inflow – կապիտալի ներհոսք
category – 1. հասկացություն, 2. կարգախումբ
collective security – կոլեկտիվ անվտանգություն
communication – see *line of communications*
concept – հայեցակարգ
conception – see *concept*
conventional deterrence – սովորական զսպում
cooperation – փոխազդեցություն
coordination – 1. փոխազդեցություն, 2. see *interaction 2*
emergency recovery unit – նորոգումնատարահանման ստորաբաժանում
energy carrier – էներգակիր
establishment – see *institute 2*
expansion – զավթողագործություն
fragmentation – հատվածայնացում
institute – 1. ինստիտուտ, 2. հաստատություն, 3. սահմանակարգ
institution – see *institute 2, 3*
interaction – 1. փոխազդեցություն, 2. գործակցություն, 3. փոխգործություն
line of communications – հաղորդակցային ուղի, հաղորդակցուղի
location – 1. see *position,* 2. տեղադրություն
maintenance contact team – արտագնա նորոգումային բրիգադ
motivating – շարժառիթավորում
movement under one's own power – ինքնընթաց տեղափոխում
multicentricity – բազմակենտրոնություն
nation-building – ազգակերտում
occidentalism – արևմտականություն
opposing side – see *warring party*
orientalism – արևելականություն
position – տեղադիրք
reasoning – see *motivating*
regionalism – տարածաշրջանայնություն
regionalization – տարածաշրջայնացում
regulatory property – կարգավորիչ հատկանիշ
repair without responsibility – դիմազուրկ մեթոդ
reverse periphery doctrine – հակադարձված ծայրամասային դոկտրին
site – տեղադրություն
stateless nation – պետությենազուրկ ժողովուրդ
transit state – տարանցիկ պետություն
warring party – ընդդիմամարտող կողմ
world order – աշխարհակարգ

## Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՀ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Համարի պատասխանատու՝ *Ն. Ս. Մկրտչյան*
Գիտական խմբագիր՝ *Ա. Զ. Պետրոսյան*
Թարգմանիչներ՝ *Ա. Ա. Մարտիրոսյան, Ն. Ս. Մկրտչյան,*
*Թ. Դ. Չիլինգարյան*
Սրբագրումը՝ *Ն. Հ. Բաղդասարյանի*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*
Համակարգչային ապահովումը՝ *Մ. Ռ. Ղուկասյանի,*
*Լ. Հ. Պապիկյանի, Տ. Մ. Տիրացույանի*
Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Գ. Վ. Իսկանդարյանի և համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ուլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Պաշտոնական վեբկայք՝ http://haykakanbanak.am
Պաշտոնական վեբ-հարթակ՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2023 թ.

Ստորագրվել է տպագրության 14.11.2023:
Թուղթը՝ օֆսեթային: Չափսը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:
Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է Դավիթ Քոչարյան ԱՁ «Ինքլաբ» տպարանում



2023 թ. «Պատիվ ունեմ» ծրագիրը հաջողությամբ ավարտած սպաների ծառայության վայրերի ընտրության վիճակահանություն

Ձախից աջ. ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյան, ՀՀ ՊՆ Կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետ գնդապետ Հ. Ստեփանյան

Երևան, 2023 թ. հոկտեմբերի 31



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 3 (117). 2023